ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի
նախարարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մաս 1: Կենսաթոշակային համակարգի ՄԳ մեթոդաբանությունը

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄԱՍ 1: ՄԳ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երևան, 2016թ.

Սույն զեկույցը պատրաստվել է Միացյալ Նահանգների զարգացման գործակալության աջակցությամբ՝ Քիմոնիքս Ինթերնաշնլ ընկերության կողմից, ԱՄՆ ՄԶԳ Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի շրջանակում: Հաշվետվության մեջ ներկայացված տեսակետները հեղինակինն են, և պարտադիր չէ, որ արտացոլեն Միացյալ Նահանգների կառավարության կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

Բովանդակություն

Հապավումների ցանկ vi

Նախաբան vii

Երախտիքի խոսք viii

1. Ներածություն 1

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 6

2.1 Արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման կիրառված մեթոդաբանությունը 10

3. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 23

3.1. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման փաստաթղթերը 23

3.2. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների շրջանակը. ցուցանիշների հավաքագրումը և կանխատեսման/գնահատման մեթոդաբանությունը 25

Ողորտ 1: Համակարգի մասնակիցներ և ժողովրդագրություն 27

Ողորտ 2: «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի բեռը տնտեսության վրա 32

Ողորտ 3: Ծախսեր (աշխատանքային կենսաթոշակների վճարման համար հատկացվող գումարներ) 35

Ողորտ 4: Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը 36

Ողորտ 5: Աշխատանքային կենսաթոշակի թիրախավորումը 37

Ողորտ 6: Կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետությունը 42

Ողորտ 7: Աշխատանքային կենսաթոշակառուների բարեկեցությունը և եկամտի աղբյուրը 46

Ողորտ 8: Կենսաթոշակառուների բավարարվածությունը մատուցվող ծառայություններից 51

Ողորտ 9: Կենսաթոշակային համակարգին աջակցությունը հասարակության կողմից 52

4. «ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ, ԾԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ, ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԱՐԳևԱՎՃԱՐՆԵՐԻ, ՊԱՏՎՈՎՃԱՐՆԵՐԻ և ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (ԿԱՐՃ՝ «ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ») ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 54

4.1. «Վճարման ծառայություններ» ծրագրի մշտադիտարկման փաստաթղթերը 54

4.2. «Վճարման ծառայություններ» ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների շրջանակը, ցուցանիշների հավաքագրումը և կանխատեսման/գնահատման մեթոդաբանությունը 56

Ողորտ 1: Վճարման ծառայություններ ստացող շահառուները 57

Ողորտ 2: Գնումների գործընթաց / վճարման ծառայությունների կազմակերպման գործընթաց 65

Ողորտ 3: Վճարման ծառայությունների մատուցման ծախսեր 66

Ոլորտ 4։ Վճարման ծառայությունների արդյունավետությունը 68

Ոլորտ 5։ Վճարման ծառայություններից շահառուների բավարարվածության աստիճանը..... 70

5. Առաջարկություններ մոնիտորինգի և գնահատման գործընթացի վերաբերյալ՝ քաղած դասերի հիման վրա 74

5.1. ՄԳ փաստաթղթերի մասին առաջարկություններ 74

5.2. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ շրջանակում ներառվելիք ցուցանիշների և նրանց վերլուծության վերաբերյալ առաջարկություններ 76

5.3. «Վճարման ծառայություններ» ծրագրի ՄԳ շրջանակում ներառվելիք ցուցանիշների և նրանց վերլուծության վերաբերյալ առաջարկություններ 79

Հավելվածներ 81

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Աշխատանքային խմբի կազմը 81

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման փաստաթղթեր 81

ՀԱՎԵԼՎԱԾ Գ ՀՀ ԱՍՀՆ «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման փաստաթղթեր 81

Առդիր 1: ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակ: 81

Առդիր 2։ ՀՀ ԱՍՀՆ «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակ: 81

Առդիր 3: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 1՝ Կենսաթոշակառուների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները 82

Առդիր 4: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 2՝ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները 82

Առդիր 5: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 3՝ Հանրային կարծիքի և իրազեկվածության աստիճանի գնահատման հետազոտության արդյունքները 82

Առդիր 6։ Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության մեթոդաբանությունը 82

Առդիր 7: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ տնային տնտեսությունների հարցաշար, ... 82

Առդիր 8: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հարցաշար 82

Առդիր 9: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ Ֆոկուս խումբ քննարկումների հարցաշար 82

Առդիր 10: «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի շրջանակում իրականացված ֆոկուս խումբ քննարկումների հաշվետվություններ 82

Առդիր 11: USAID/PRIP կարճաժամկետ խորհրդատու դոկտոր Ջոզեֆ Անդերսոնի հաշվետվությունը 83

Արդիր 12: Մշտադիտարկման և գնահատման վերաբերյալ ՀՀ ԱՍՀՆ նախարարին և ՀՀ ԱՍՀՆ ՄԳ աշխատանքային խմբին ներկայացված պրեզենտացիաներ 83

Հապավումների ցանկ

ԱԱՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի միացյալ նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՍՓԳ	Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն
ԶՊԾԳ	Զբաղվածության պետական ծառայություն գործակալություն
ԻՍԾՀ	Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ
ԿԲԻԾ	Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագիր
ԿՀԻԿ	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն հիմնադրամ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՍԾՏԿ	Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն
ՄԳ	Մշտադիտարկում և գնահատում
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՆՍԶ	Նվազագույն սպառողական զամբյուղ
ՍԱՊԾ	Սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն
ՓԳ	Փոխհատուցման գործակից

Նախաբան

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի (USAID/PRIP) շրջանակում և անմիջապես առնչվում է USAID/PRIP ծրագրային նախաձեռնությանն աջակցել ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (ՀՀ ԱՍՀՆ) մշակելու կենսաթոշակային համակարգի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա:

Հաշվետվության մեջ ներառված է 2014-2016թթ.-ը ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով ձևավորված աշխատանքային խմբի հետ Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի մասնագետների համատեղ աշխատանքի արդյունքում ձևավորված արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման մեթոդաբանությունը և այդ մեթոդաբանության հիման վրա ՀՀ Կենսաթոշակային համակարգի բաշխողական բաղադրիչի երկու կարևոր՝ «Աշխատանքային կենսաթոշակներ» և «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրերի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակները և այդ ցուցանիշների հիման վրա, երկու ծրագրերի գնահատման արդյունքները:

Մշակված մեթոդաբանությունը հիմնված է ՀՀ ԱՍՀՆ կողմից սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի (բնակչությանը մատուցվող ծառայությունների) արդյունավետության գնահատման համար մշակված և կիրառվող մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանության և USAID/PRIP ծրագրի կողմից հրավիրված միջազգային փորձագետ Ջոզեֆ Անդերսոնի[1] կողմից առաջարկած միջազգային լավագույն փորձի, ինչպես նաև USAID/PRIP ծրագրի փորձագետների և ՀՀ ԱՍՀՆ աշխատանքային խմբի անդամների մասնագիտական փորձի վրա:

Հաշվետվությունը՝ **երեք մասերի միջոցով,** ներկայացնում է փորձարկված մեթոդաբանության գործնական կիրառման ուժեղ և թույլ կողմերը, առաջարկվող ցուցանիշների հավաքագրման մոտեցումները, ինչպես նաև ընտրված ծրագրերի հիման վրա տալիս է Հայաստանի կենսաթոշակային համակարգի ժողովրդագրական, տնտեսական, ֆինանսական կայունության և շահառուների գոհունակության ցուցանիշների վերլուծության արդյունքները:

---

[1] *Խորհրդատուն Հայաստան էր հրավիրվել 2014թ.-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և Աշխատանքային խմբի հետ սերտ համագործակցության արդյունքում առաջարկեց Հայաստանի կենսաթոշակային համակարգի համար կիրառել արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանությունը: Խորհրդատուի հաշվետվությունը հասանելի է ԱՄՆ ՄԶԳ ԿԲԻԾ վեբ կայքում www.prip.am:*

Երախտիքի խոսք

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագիրն իր երախտիքի խոսքն է ուղղում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանին՝ իր գերատեսչության բոլոր կառույցների հետ սույն նախաձեռնության շրջանակում արդյունավետ համագործակցության հնարավորության և պայմանների ապահովման համար:

Ծրագիրն իր առանձնակի երախտիքն է ուղղում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, Աշխատանքային խմբի համակարգող տիկին Սոնա Հարությունյանին՝ աշխատանքների արդյունավետ ուղղորդման և սերտ համագործակցության համար:

Ծրագիրը շնորհակալություն է հայտնում նաև աշխատանքային խմբի բոլոր անդամներին՝ իրենց ժամանակի, ակտիվ մասնակցության և մասնագիտական ներդրումների համար:

Ծրագրի մասնագետներն հատուկ շնորհակալություն են հայտնում ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Արմեն Աբրահամյանին՝ շահավետ աջակցության համար, ինչպես նաև ՀՀ ՍԱՊԾ կենտրոնական գրասենյակի և տարածքային բաժինների աշխատակիցներին՝ մասնավորապես կենտրոնական գրասենյակի Տեղեկատվական տեխնոլոգիաների և ռիսկերի կառավարման և Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություններին՝ տրամադրած տեղեկատվության և իրենց ժամանակի համար:

Ծրագիրը շնորհակալություն է հայտնում AM Partners Խորհրդատվական ընկերությանը՝ սույն նախաձեռնության շրջանակում շահառուների կարծիքի ուսումնասիրության իրականացման համար:

Ծրագիրը հատուկ շնարհակալություն է հայտնում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Ժողովրդագրության, Սոցիալական վիճակագրության, Աշխատանքի շուկայի և զբաղվածության, Տնային տնտեսությունների կենսամակարդակի վիճակագրության բաժիններին՝ գրավոր հարցումներին արագ արձագանքելու և տեղեկատվության տրամադրման հարցում լավագույնս աջակցելու համար:

Ծրագիրը շնորհակալություն է հայտնում նաև բոլոր այն կենսաթոշակառուներին ովքեր մասնակցել են հետազոտությանը և ֆոկուս խումբ քննարկումներին, ինչպես նաև ՀՀ ՍԱՊԾ հետ պայմանգիր ունեցող բանկերի և Հայփոստի աշխատակիցներին՝ տրամադրած տեսակետների ու արժեքավոր տեղեկատվության համար:

1. Ներածություն

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագրի (հետայսու՝ USAID/PRIP ծրագիր) աշխատանքային պլանի շրջանակում, USAID/PRIP ծրագիրը պետք է աջակցեր ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (ՀՀ ԱՍՀՆ) ձևավորելու կենսաթոշակային համակարգի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմ՝ միջազգային լավագույն փորձի հիման վրա[2]: Այդ աշխատանքներն իրականացնելու նպատակով 2014թ-ի հուլիսին ՀՀ ԱՍՀ նախարարի հրամանով ձևավորվեց աշխատանքային խումբ, որի անդամներն էին ՀՀ ԱՍՀՆ Կենսաթոշակային ապահովության վարչության պետ Անահիտ Գալստյանը, նույն վարչության պետի տեղակալ Ռոզա Մկրտչյանը, ՀՀ ԱՍՀՆ վերլուծության և մշտադիտարկման վարչության պետ Հայկ Մուրադյանը, նույն վարչության վերլուծության բաժնի պետ Ռիմա Պետրոսյանը, նույն վարչության գլխավոր մասնագետներ Գայանե Վասիլյանը և Անահիտ Համզյանը, ՀՀ ՍԱՊԾ Վերլուծության և մոնիտորինգի վարչության մոնիտորինգի բաժնի պետ Նահապետ Դավթյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի տնօրենի տեղակալ Գառնիկ Նալբանդյանը, Ազգային ինստիտուտի Մոնիթորինգի և վերլուծության բաժնի պետ Նաիրա Խաչատրյանը և USAID/PRIP ծրագրից Կարողությունների զարգացման թիմի ղեկավար Հասմիկ Ղուկասյանը, Կենսաթոշակային քաղաքականության թիմի ղեկավար Արսեն Մանուկյանը, Ծրագրի մոդելավորող և վիճակագիր Սուսաննա Կարապետյանը և Ծրագրի SS մասնագետ Սոֆի Բարոյանը: Աշխատանքային խումբը (ԱԽ) համակարգում էր ՀՀ ԱՍՀՆ նախարարի տեղակալ տիկին Սոնա Հարությունյանը:

Ծրագրի իրականացման համար ԱԽ-ը համատեղ մշակեց աշխատանքային պլան, որը բաղկացած էր երեք փուլից՝ **նախապատրաստական փուլ,** որի ընթացքում USAID/PRIP ծրագրի փորձագետները պետք է ուսումնասիրեին ՀՀ ԱՍՀՆ կողմից սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի՝ բնակչությանը տրամադրվող ծառայությունների արդյունավետության գնահատման համար մշակված մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանությունը, կատարված աշխատանքները և համադրեին այն միջազգայնորեն ընդունված մոտեցումների հետ, ուսումնասիրելով նաև կենսաթոշակային համակարգերի ՄԳ այլ երկրների փորձը. **փորձարկման փուլ՝** որի ժամանակ USAID/PRIP ծրագրի կողմից առաջարկվող նոր մեթոդաբանությամբ ՀՀ ՍԱՊԾ կողմից իրականացվող 22 ծրագրերից ԱԽ կողմից ընտրված 3 ծրագրերի համար պետք է մշակվեին ՄԳ ցուցանիշներ, հավաքագրվեր համապատասխան տեղեկատվությունը և ստացված արդյունքները գնահատվեին երկու մոտեցմամբ՝ ՀՀ ԱՍՀՆ կողմից կիրառվող ՄԳ մեթոդաբանությամբ և USAID/PRIP ծրագրի կողմից առաջարկվող մեթոդաբանությամբ: **Երրորդ փուլով** կատարված աշխատանքները պետք է ներկայացվեին ՀՀ ԱՍՀՆ

[2] USAID/PRIP ծրագրի տարեկան աշխատանքային պլանի կետ՝ KRA 1.1.2.1.9 Աջակցել միջազգային լավագույն փորձի հիման վրա կենսաթոշակային համակարգի մոնիտորինգի և գնահատման համակարգի մշակմանը

նախարարին՝ համապատասխան հանձնարարականներ ստանալու համար և մասնագետների վերապատրաստումը նախաձեռնելու համար։

Փորձարկման համար ԱԽ կողմից ընտրվեցին երեք ծրագիր՝

ա/ **տրանսֆերտային**՝ Աշխատանքային կենսաթոշակների ծրագիրը,
բ/ **ծառայություն՝** «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագիրը,
գ/ **ենթակառուցվածքային** ծրագիր՝ միասնական ՏՏ համակարգի սպասարկման ծառայություն ծրագիրը։

Այս ընտրության նպատակն էր գնահատել առաջարկվող մեթոդաբանության արդյունավետությունը ՀՀ ՍԱՊԾ կողմից իրականացվող չորս տեսակի ծրագրերից երեքի համար[3]։ Սակայն ԱԽ աշխատանքի ընթացքում պարզ դարձավ, որ ՏՏ համակարգի սպասարկման ծառայությունն առանձին ծրագիր չի կարող դիտարկվել, քանզի այն հանդիսանում է ՀՀ ՍԱՊԾ կողմից իրականացվող բոլոր ծրագրերի տեղեկատվության սպասարկման գործիք, առանց որի ծրագրերը չեն կարող իրականացվել։ Ուստի առանձնացնել այդ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշներ կամ կատարել միայն այդ ծրագրի գնահատում հնարավոր չէ։ Հետևաբար, ԱԽ կողմից որոշվեց միասնական ՏՏ համակարգի սպասարկման ծառայություն ծրագրի կատարողականն ու արդյունավետությունը գնահատել Աշխատանքային կենսաթոշակներ և վճարման ծառայություններ ծրագրերի մշտադիտարկման և գնահատման շրջանակում։

2014թ.-ի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին USAID/PRIP ծրագիրը հրավիրեց միջազգային փորձագետ Ջոզեֆ Անդերսոնին[4], նրա աջակցությամբ ուսումնասիրելու այլ երկրներում կենսաթոշակային համակարգերի ՄԳ փորձը և ՀՀ ԱՍՀՆ կողմից կիրառվող ՄԳ գործող մեթոդաբանության վերաբերյալ լսել միջազգային փորձագետի մասնագիտական կարծիքը։ Նախքան փորձագետի ժամանելը, ԱԽ անդամների կողմից մշակվել էին «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ տեղեկանքը, ՄԳ անձնագիրը և ՄԳ ցուցանիշների ցանկը՝ ըստ կիրառվող մեթոդաբանության, որոնք

---

[3] ՀՀ ԱՍՀ Նախարարի 2013թ.-ի հոկտեմբերի 3-ի թիվ 133-Ա հրամանով հաստատված ՀՀ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի մոնիթորինգի և արդյունավետության գնահատման համակարգի ներդրման հավելված 1-ի Հայեցակարգում ՀՀ ԱՍՀՆ կողմից իրականացվող ծրագրերը պայմանականորեն դասակարգված են 4 հիմնական խմբերի՝ ա/ տրանսֆերտային ծրագրեր՝ բոլոր տեսակի կենսաթոշակները, պարբերական և միանվագ նպաստներն են; բ/ ծառայություններ՝ որոնց շրջանակում հանրությանը մատուցվում են մասնագիտական ուսուցման, վերակագնողական, խնամքի և այլ ծառայություններ, գ/ ուղեկցող ծրագրեր, որոնք ապահովում են տրանսֆերտային և ծառայություններ ծրագրերի իրականացումը, դ/ չորրորդ խումբ ծրագրերը ներառում են պահպանման և կապիտալ ծախսերը։

[4] Ջոզեֆ Անդերսոնն ունի ավելի քան 32 տարվա հարուստ փորձ կենսաթոշակային համակարգերի ՄԳ ոլորտում, աշխատել է ԱՊՀ և Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում, լավ ճանաչում է նաև Հայաստանը, քանի որ այստեղ գնահատել է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող կենսաթոշակային ծրագրերը։

թարգմանաբար ներկայացվեցին փորձագետին: Փորձագետի տեխնիկական հանձնարարականը նախապես մշակվեց և հաստատվեց ԱԽ կողմից:

Հրավիրված միջազգային փորձագետը՝ USAID/PRIP փորձագետների հետ համատեղ, մեկամսյա ընթացքում ԱԽ անդամներին ներկայացրեց ՄԳ միջազգայնորեն ընդունված սկզբունքները և մոտեցումները, կենսաթոշակային համակարգերի ՄԳ փորձը Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Լեհաստանի, Ռուանդայի, Քենիայի և Հնդկաստանի փորձի հիման վրա, ինչպես նաև առաջարկեց փորձարկման համար ընտրված ծրագրերի ՄԳ համար կիրառել **արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման մոտեցումը**: Միջազգային փորձագետն առաջարկեց նաև 12 քայլ՝ ՀՀ ԱՍՀՆ համակարգում ՄԳ քաղաքականության և համակարգի ներդրման համար:

Ընդանուր առմամբ միջազգային փորձագետը ԱԽ-ի համար կազմակերպեց հինգ կլոր սեղան քննարկում և առանձին քննարկում ՀՀ ԱՍՀ նախարարի մոտ: Նրա հիմնական եզրահանգումներն էր, որ աշխարհում չկա ունիվերսալ որևէ մի մոտեցում/մոդել, որը կարելի է կիրառել բոլոր երկրների կենսաթոշակային համակարգերի մշտադիտարկման կամ գնահատման համար: Ամեն երկիր մշակում և օգտագործում է իր կառավարությանը հարմար ՄԳ համակարգեր: Կենսաթոշակային համակարգերի մշտադիտարկում կամ գնահատում ասելիս հիմնականում ընդունված է դիտարկել կուտակային կենսաթոշակային համակարգը, իսկ բաշխողական բաղադրիչների համար նման համակարգեր գրեթե չկան: **Հայաստանի փորձը՝ հաջողության դեպքում, կարող է օրինակելի մոդել դառնալ տարածաշրջանի երկրների համար:**

ՀՀ ԱՍՀՆ կողմից կիրառվող ՄԳ մեթոդաբանության վերաբերյալ նա նշեց, որ ՀՀ ԱՍՀ Նախարարի 2013թ.-ի հոկտեմբերի 3-ին հաստատված թիվ. 133-Ա/1 հրամանի հավելվածներ 1-ում, 2-ում և 3-ում ներառված ՄԳ հիմնական հասկացություններն ու առաջարկությունները բավարար են, բխում են միջազգային սահմանումներից, թեև կարիք ունեն որոշակի լրամշակման: Ցուցանիշների դասակարգման ձևը ևս կարիք ունի վերանայման, քանի որ ցուցանիշները պետք է դասակարգվեն, ոչ թե ըստ գործողությունների այլ ըստ ծրագրի համար կարևոր ոլորտների (առաջնահերթությունների կամ ասպեկտների, ինչպես նշված է փորձագետի առաջարկություններում): Գործող մեթոդաբանությամբ հավելված 4-ում առաջարկվող ծրագրերի գնահատման մեթոդաբանությունը պետք է լիովին վերանայվի: Այն կոնցեպտուալ առումով ճիշտ չէ, թափանցիկ և օգտակար չէ: Բոլոր ցուցանիշները մեկ թվի մեջ համախառնելը, ինչպես առաջարկվում է հավելված 4-ում, ոչ մի նպատակի չի ծառայում և տեղեկություններ է թաքցնում: Ստացված գնահատականն օգտագործողի համար հասկանալի չէ, առանց հաշվարկների մանրամասն վերլուծության: Ցուցանիշի արժեքի մասին դատողությունները, դասակարգումները և կշիռները բազմաթիվ կամայական որոշումների տեղիք են տալիս, իսկ միավորների բաշխումն արժեքային ցուցանիշներին, ինչպես նաև ցուցանիշներին տրվող կշիռները կամայական են, չեն ծառայում որևէ նպատակի և տեղեկություններ են թաքցնում: Նա առաջարկեց մշակել արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման շրջանակ՝ ՏՀԶԿ-ի մեթոդաբանության հիման վրա, սահմանել

թիրախներ և ապա որոշակի ժամանակահատված անց գնահատել ծրագրի ընթացքը և արդյունքը՝ ըստ սահմանված թիրախների։

Միջազգային փորձագետի առաջարկությունն էր, որ առաջին հերթին ՀՀ ԱՍՀՆ-ն հզորացնի ծրագրերի մշտադիտարկման կարողությունը՝ ընդգծելով արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման շրջանակների մշակումը և վարումը բոլոր ծրագրերի համար, ապա միայն նախաձեռնել իրականացվող ծրագրերի և վարվող քաղաքականության գնահատում՝ սոցիալական ծրագրերի և ենթածրագրերի մշտադիտարկման արդյունքում հավաքագրված մի քանի տարվա տվյալների հիման վրա։ Ընթացքում կարելի է կատարել սահմանափակ թվով ծրագրերի գնահատում՝ որոշակի փորձ կուտակելու համար։

Միջազգային փորձագետը կարևորեց ծրագրերի արդյունավետության գնահատման շղթայում տարանջատել մոնիտորինգ, գնահատում և աուդիտ գործառույթները։ Ըստ նրա, կենսաթոշակային համակարգում առկա քսաներկու ծրագրերից որոշները կարող են ենթարկվել միայն մշտադիտարկման, որոշները կարող են ենթարկվել նաև գնահատման և մի մասն էլ՝ միայն աուդիտի, այսինքն նույն մոտեցումը չի կարելի կիրառել բոլոր ծրագրերի նկատմամբ։

Միջազգային փորձագետի առաջարկությունների հիման վրա USAD/PRIP ծրագրի փորձագետները՝ ԱԽ հետ համատեղ մշակեցին «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակը, տվյալների հավաքագրման և արդյունքերի գնահատման մեթոդաբանությունը։ Այն որոշ լրամշակումներով, կիրառվել է նաև Վճարման ծառայությունների մշտադիտարկման ցուցանիշների շրջանակի մշակման համար։

> *«Մեր նպատակն է մշակել մոնիթորինգի և գնահատման այնպիսի ամբողջական համակարգ, որը կխուսափի սուբյեկտիվ մոտեցումներից և կիրականացնի օբյեկտիվ գնահատում՝ վերհանելով մատուցվող ծառայությունների բացթողումներն ու թերությունները: Պետք է հստակ ձևակերպել յուրաքանչյուր ծրագրի նպատակները, խնդիրներն ու հարցադրումները, որոնց առաջադրված լուծումներն ինքնին կարևորագույն խթան կհանդիսանան քաղաքականություն մշակողների և իրականացնողների համար: Կարևորում եմ այս հեռանկարային գործընթացը և հորդորում լինել առավել պահանջկոտ ու հետևողական:*

Երկամյա աշխատանքի ընթացքում աշխատանքային խումբն ունեցել է 36 արձանագրված հանդիպում, մշակել է 15 անուն փաստաթուղթ և հավաքագրել է 600-ից ավել ցուցանիշ։

ԱԽ գործունեության կարևոր ձեռքբերումներից է 2014թ.-ի նոյեմբերին ՀՀ ԱՍՀՆ կողմից Զբաղվածության ծրագրերի համար լրամշակված ՄԳ մեթոդաբանության

հաստատումը, որն իր մեջ արդեն ներառում էր USAID/PRIP ծրագրի կողմից առաջարկվող որոշ լրամշակումներ[5]։

Սույն հաշվետվության հաջորդ բաժիններում ներկայացված է USAID/PRIP ծրագրի կողմից առաջարկվող Արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման մեթոդաբանությունը և ցուցանիշների շրջանակի նկարագրությունը, ինչպես նաև երկու ծրագրերի համար տվյալների հավաքագրման մոտեցումներն ու մեթոդաբանությունը և ստացված տվյալների հիման վրա ծրագրերի ամփոփիչ գնահատման արդյունքները։

Հաշվետվությանն առդիր ներկայացված են «Աշխատանքային կենսաթոշակներ» և «Վճարման ծառայություններ» ծրագրերի Excel ձևաչափով արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման ցուցանիշների շրջանակները, միջազգային փորձագետ Ջոզեֆ Անդերսոնի հաշվետվությունը, շահառուների շրջանում իրականացված հետազոտությունների հաշվետվությունները և ԱԽ քննարկումների ժամանակ ներկայացված պրեզենտացիաների սլայդները։

[5] ՀՀ ԱՍՀ նախարարի 2014թ.-ի նոյեմբերի 3-ի թիվ 121-Ա/1 հրամանը «Զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրերի մոնիթորինգի և գնահատման մեթոդաբանության հաստատման մասին»

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն բաժնում ներկայացված ՄԳ մեթոդաբանությունը մշակվել է 2014թ.-ի հուլիսին ՀՀ ԱՍՀ նախարարի հրամանով ձևավորված աշխատանքային խմբի կողմից: Մեթոդաբանության մշակման ժամանակ հաշվի են առնվել USAID/PRIP ծրագրի կողմից հրավիրված միջազգային փորձագետ Ջոզեֆ Անդերսոնի առաջարկությունները և ԱԽ-ի երկամյա ակտիվ համագործակցության ժամանակ տվյալների հավաքագրման ընթացքում քաղած դասերը:

ԱԽ անդամների հանդիպումը ՀՀ ԱՍՀ Նախարար Ա. Ասատրյանի մոտ փետրվար 2, 2015թ.

Առաջարկվող մեթոդաբանության հիմքում արդյունքի վրա հիմնված մոնիտորինգն է (results-based monitoring): Մեթոդաբանությունը մշակվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Զարգացման աջակցության կոմիտեի կողմից մշտադիտարկման և գնահատման սկզբունքների և ՀՀ ԱՍՀՆ կողմից սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի ու ծառայությունների արդյունավետության գնահատման համար մշակված ՄԳ մեթոդաբանության համադրման արդյունքում:

<u>Արդյունքի վրա հիմնված մշտադիտարկումը</u> ամենօրյա, շարունակական և ներքին գործընթաց է, որը տեղեկատվություն է հավաքագրում իրականացվող ծրագրի գործողությունների, արդյունքների և կատարողականի վերաբերյալ, հնարավորություն տալով հետևելու ծրագրի վերջնանպատակին հասնելու ընթացքին: Այն ենթադրում է իրականացվող ծրագրի հիմնական նպատակների, թիրախների սահմանում և ծրագրի իրականացման համար կարևոր ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության ստացում:

Որպես ընթացիկ գործընթաց, արդյունքի վրա հիմնված մշտադիտարկումը սովորաբար իրականացվում է ծրագրի անձնակազմի կողմից՝ ծրագրի անմիջական ղեկավարի պատասխանատվության ներքո:

Մշտադիտարկումը անընդհատ կամ ժամանակ առ ժամանակ իրականացվող գործընթաց է, որը հնարավորություն է տալիս քաղաքականություն մշակողներին և ծրագրի ղեկավարներին ճշգրտել ծրագրի պլանը, գործողությունները, ֆինանսավորումը կամ թիրախները՝ ծրագրի իրականացման ընթացքում:

Մշտադիտարկման արդյունքները օգտագործվում են ծրագրի ներքին կամ արտաքին կամ ինչպես առաջարկվեց ԱԽ կողմից, ծրագրի ընթացիկ և ամփոփիչ գնահատման համար: Մշտադիտարկման իրականացման համար սահմանվում են ծրագրի նպատակները, ցուցանիշներն ու թիրախները և ծրագրի ընթացքը վերահսկվում է ծրագրի թիրախային և փաստացի ցուցանիշների համեմատությամբ:

Ծրագրի գնահատումը ենթադրում է գործընթաց, որը որոշում է, թե որքանով է տվյալ ծրագիրը կամ քաղաքականությունը արդյունավետ կամ կարևոր: Այն ծրագրված, շարունակական կամ ավարտված ծրագրի կամ միջամտության՝ հնարավորության սահմաններում օբյեկտիվ և պարբերաբար կրկնվող ***վերլուծություն է***:

Ծրագրի գնահատումը կարող է լինել **ներքին կամ արտաքին** *(ընթացիկ և ամփոփիչ)*: Գնահատման գործընթացի համար պատասխանատվություն կրում է գնահատողը՝ ծրագրի անձնակազմի հետ միասին:

Մշտադիտարկումը և գնահատումը փոխկապակցված և փոխլրացնող գործողություններ են: Ստորև աղյուսակով ներկայացված են մշտադիտարկման և գնահատման տարբերությունները.

Աղյուսակ 1 Մշտադիտարկման և գնահատման համեմատությունը

Մշտադիտարկում	***Գնահատում***
Շարունակական է, ընթացիկ գործընթաց է	Տեղի է ունենում ժամանակ առ ժամանակ կամ որոշակի ժամանակահատվածում
Ներքին գործընթաց է	Ներքին, արտաքին կամ միաժամանակ և՛ ներքին, և՛ արտաքին գործընթաց է
Պատասխանատու է ծրագրի ղեկավարը, իրականացնողը, պատասխանատու բաժինը, վարչությունը	Պատասխանատու է գնահատողը և ծրագրի անձնակազմը
Անընդհատ տեղեկատվություն է տալիս ծրագրի ընթացքի մասին, օգնում է բարելավել ծրագրի կատարողականությունն իրականացման ընթացքում	Ամփոփ տեղեկատվություն է տալիս ծրագրի առջև դրված նպատակների համեմատ ծրագրի կատարողականի մասին՝ սահմանված որոշակի ժամանակահատվածի համար է:

Միջազգային փորձն առավել հաճախ առանձնացնում է գնահատման հետևյալ տեսակները.

- **Ֆորմատիվ կամ ծրագրի ընթացիկ գնահատում**, երբ ծրագրի իրականացման փուլում կատարվում է ծրագրի ընթացքի գնահատում և որոշվում է թե ինչպես է իրականանում, ընթանում ծրագիրը կամ քաղաքականությունը:

- **Ամփոփ կամ ծրագրի արդյունքի կամ ազդեցության ամբողջական գնահատում**։ Կատարվում է ծրագրի ավարտին կամ միջանկյալ փուլում և նպատակ ունի որոշելու, թե որքանով են իրականանում/իրականացվել նախանշված արդյունքները և ինչպիսին է եղել ծրագրի արդյունքը կամ ազդեցությունը։ Միջանկյալ գնահատման ժամանակ բացահայտվում է նաև ծրագրի ընթացքի արդյունավետությունը և ծրագրի շարունակության նպատակահարմարությունը։ Ամփոփիչ գնահատումն իր հերթին կարող է լինել ծրագրի ընդհանուր ազդեցության գնահատում, ծրագրի ծախս-արդյունավետության գնահատում, խառը կամ քվազի փորձարկումների միջոցով գնահատում և պատահական/ընտրանքային փորձարկումների միջոցով գնահատում և կարող է հիմնված լինել միայն դեպքերի/օրինակների ուսումնասիրության վրա։
- **Հեռանկարային կամ նոր ծրագրերի հնարավոր արդյունքի կամ ազդեցության գնահատումը** նպատակ ունի վերլուծել և գնահատել առաջարկվող ծրագրերի կամ քաղաքականության հնարավոր արդյունքը։ Այն հաճախ կոչվում է նաև նախնական գնահատում և վերլուծում է նախորդ ծրագրերի գնահատման արդյունքները՝ նոր ծրագրի կամ քաղաքականության հնարավոր ազդեցությունը որոշելու համար։ Այդ նպատակով կիրառվում են մոդելավորման կամ սիմուլյացիաների գործիքներ, ծրագրի բյուջեի, գործողությունների և նպատակահարմարության վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելու նպատակով։

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի գնահատման համար առաջարկվում է կիրառել «ամփոփ կամ ծրագրի արդյունքի կամ ազդեցության ամբողջական գնահատում» մոտեցումը, իսկ «Վճարման ծառայություններ» ծրագրի համար՝ ֆորմատիվ կամ ծրագրի ընթացիկ գնահատում։

Առաջարկվող մեթոդաբանությամբ առաջին անգամ ՄԳ համար ընտրված ծրագրի համար արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման գործընթաց նախաձեռնելու քայլերն են.

1. Ձևավորել ծրագրի իրականացման և վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանումների ներկայացուցիչներից կազմված <u>աշխատանքային խումբ՝</u> ՀՀ ԱՍՀՆ մշտադիտարկման և գնահատման աշխատանքները համակարգող նախարարի տեղակալի գլխավորությամբ։ Աշխատանքային խմբի կազմը հաստատում է ՀՀ ԱՍՀ նախարարը։
2. Աշխատանքային խումբը սահմանում է հանդիպումների ձևաչափն ու պարբերականությունը և ընտրում է հանդիպումների արձանագրությունները կազմող և ԱԽ անդամների միջև հաղորդագրությունը ապահովող <u>քարտուղար</u>։
3. Աշխատանքային խումբը ընտրում է ՄԳ ենթակա ծրագրի տեղեկանքը և անձնագիրը պատրաստող պատասխանատուներին։ ԱԽ անդամները հիմք ընդունելով գործող օրենսդրությունը համատեղ որոշում են ծրագրի **նպատակները և խնդիրները։**
4. ԱԽ անդամները համատեղ սահմանում են ՄԳ ենթակա ծրագրի **հիմնական ոլորտները և գործողությունները** (հաշվի առնելով ամփոփիչ գնահատման առաջնահերթությունները և ծրագրի արդյունավետությունը), որոնց համար պետք է մշակվեն մշտադիտարկման ցուցանիշներ։

5. ԱԽ անդամները սահմանում են ՄԳ **ցուցանիշները և ցուցանիշների բնույթը**: Ցուցանիշները կարող են լինել թիրախային, կանխատեսվող կամ տեղեկատվական: Ցուցանիշները բաշխվում են ըստ ծրագրի անձնագրում նշված հիմնական ոլորտների:
6. ԱԽ անդամները սահմանում են ցուցանիշների թիրախները և ստացման աղբյուրները, այդ թվում նաև տվյալները հավաքագրող պատասխանատուներին:
7. ԱԽ անդամները սահմանում են մշտադիտարկման ցուցանիշների հավաքագրման պարբերականությունը, տվյալների ստացման, այդ թվում էլեկտրոնային եղանակով ստացվող ցուցանիշների աղբյուրները, հետազոտությունների իրականացման մեթոդաբանությունը և գործիքները:
8. ԱԽ անդամները որոշում են մշտադիտարկման արդյունքների ամփոփ հաշվետվությունների ներկայացման պարբերականությունն ու հասցեատերերին:
9. ԱԽ կողմից մշակված փաստաթղթերը և ՄԳ ցուցանիշներն ու թիրախները հաստատվում են ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից:
10. ԱԽ ղեկավարի կողմից նշանակվում են համապատասխան հաշվետվությունները մշակող, կամ վերլուծությունը և գնահատումն իրականացնող պատասխանատուներ:
11. Ըստ սահմանված պարբերականության մշակված հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ ԱՍՀ նախարարին:
12. Տարեկան պարբերականությամբ կազմակերպվում է ՄԳ վերլուծության ամփոփ հաշվետվության ներկայացում՝ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:
13. Հաշվի առնելով ՄԳ արդյունքները, մշակվում են ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից համապատասխան հանձնարարականներ:
14. ՀՀ ԱՍՀՆ կողմից սահմանված պարբերականությամբ և ժամկետներում կարող են կազմակերպվել լսումներ՝ ՄԳ արդյունքների հիման վրա ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ:

Հարկ է նշել, որ քանի դեռ ոչ բոլոր ծրագրերն ունեն արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակ և չեն իրականացվել այդ ծրագրերի առաջին ամփոփ գնահատումները, տարվա կտրվածքով ՄԳ ենթակա ծրագրերի ցանկն ու ժամանակացույցը հաստատվում է ՀՀ ԱՍՀ նախարարի հրամանով: Հետագայում այդ գործընթացը կընթանա ըստ ՄԳ ցուցանիշների շրջանակում նախանշված ժամանակահատվածների և պարբերականության: ՀՀ ԱՍՀ նախարարի հրամանով կսահմանվեն ծրագրերի ամփոփիչ գնահատումների, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, հեռանկարային կամ նոր ծրագրերի հնարավոր արդյունքի կամ ազդեցության գնահատումներ իրականացնելու ժամանակացույցերը:

Արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման շրջանակի ստեղծումից հետո կարևոր է այդ գործիքը միշտ աշխատացնելը, այսինք ահրաժեշտ է պարբերաբար ավելացնել պահանջվող վիճակագրությունն ըստ սահմանված պարբերականության: Եթե կան ամսական կամ եռամսյակային տվյալներ, դրանք պետք է առկայության դեպքում անմիջապես մուտքագրվեն: **Ծրագրի մասին որևէ զեկույց կամ տեղեկատվություն տրամադրելիս, պետք է հիմք ընդունել արդյուքնի վրա հիմնված ցուցանիշների շրջանակի տեղեկատվությունը, այն պետք է հանդիսանա ծրագրի մասին տեղեկատվության հիմնական աղբյուրը:** Ծրագրի համար պատասխանատու վարչությունը կամ Վերլուծության և

մոնիտորինգի վարչությունից տվյալ ոլորտի համար պատասխանատու մասնագետը, պետք է հսկեն տվյալների արդիական լինելը: Հետագայում, նախատեսվում է մշակել SS ծրագրային ապահովում, որի միջոցով կապահովվի յուրաքանչյուր ծրագրի, կամ առնվազն մեծ ծրագերի մշտադիտարկման ցուցանիշների ավտոմատ ստացումը միասնական տեղեկատվական շտեմարանից: **Արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակը կարող է հիմք հանդիսանալ ցուցանիշների՝ ՀՀ ԱՍՀՆ առկա տեղեկատվական շտեմարաններից ինքնաշխատ/ավտոմատ եղանակով ստանալու ծրագրային ապահովման տեխնիկական հանձնարարականի մշակման համար:**

2.1 Արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման կիրառված մեթոդաբանությունը

Փորձարկման համար ընտրված «Աշխատանքային կենսաթոշակներ» և «Վճարման ծառայություններ» ծրագրերի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակի ձևավորման համար ԱԽ կողմից նախ մշակվեցին այդ երկու ծրագրերի տեղեկանքները:

Մշտադիտարկման ենթարկվող ծրագրի տեղեկանքի մշակումը շատ կարևոր նորարարություն էր, որն առաջարկվեց ԱԽ աշխատանքները համակարգող ՀՀ ԱՍՀ նախարարի տեղեկալ տիկին Սոնա Հարությունյանի կողմից: ԱԽ աշխատանքի ընթացքում այն որոշ չափով լրամշակվեց USAID/PRIP ծրագրի մասնագետների կողմից:

նախարարի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար Սոնա Հարությունյանը

Ծրագրի տեղեկանքը դա ծրագրի համառոտ նկարագրությունն է և տալիս է ծրագրի նախապատմությունը, ծրագրի ստեղծման վերջնական նպատակը, ծրագրի զարգացման փուլերը և փոփոխությունները, ծրագրի իրավական հիմքերը, ծրագրի համար հատկացվող բյուջեն՝ վերջին երեք տարվա կտրվածքով, ծրագրի շահառուների շրջանակը և թվաքանակը, ծրագրի առանձնահատկությունները, ենթածրագրերը, շահառուների, իրավունակության չափանիշները:

Ծրագրի տեղեկանքի և գործող իրավական ակտերի հիման վրա մշակվում է ծրագրի մշտադիտարկման և գնահատման անձնագիրը: Ծրագրի տեղեկանքը հաստատվում է ԱԽ անդամների կողմից:

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի տեղեկանքը կցված է սույն հաշվետվությանը հավելված Բ-ում, իսկ «Վճարման ծառայություններ» ծրագրի տեղեկանքը՝ հավելված Գ-ում:

Ծրագրի **ՄԳ անձնագիրը** ենթադրում է ծրագրի ամփոփաթերթ, որը հիմք է հանդիսանում ծրագրի ՄԳ ցուցանիշների ձևավորման և պատասխանատուների սահմանման համար: ԱԽ–ի աշխատանքի ընթացքում USAID/PRIP մասնագետների կողմից առաջարկվեց վերանայել ծրագրերի ՄԳ անձնագրի բաժինները և բովանդակությունը:

ՄԳ լրամշակված անձնագրում նշվում են.

ա/ ***ծրագրի ընթացիկ և հեռահար նպատակները***- այս տեղեկատվությունը վերցվում է ծրագրի իրավական կարգավորումն ապահովող փաստաթղթերից, ինչպես նաև ՀՀ Կառավարության միջնաժամկետ և հեռանկարային զարգացման ծրագրերից:

բ/ ***խնդիրները, որոնց լուծմանը միտված է ծրագիրը***: Այս տեղեկատվությունը նույնպես ստացվում է վերը նշված աղբյուրներից:

գ/ ***ծրագրի իրականացումից ակնկալվող որակական և քանակական արդյունքները***: Ցուցանիշների այս խումբը սահմանվում է ԱԽ-ի կողմից՝ ծրագրի իրավական կարգավորումն ապահովող և ռազմավարական փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ Կառավարության տարեկան և միջնաժամկետ ծախսային ծրագրերի հիման վրա:

դ/ ***ծրագրի շրջանակում իրականացվող գործողությունները*** համատեղ որոշվում են ԱԽ կողմից՝ հիմք ընդունելով ծրագրի իրավական կարգավորումն ապահովող փաստաթղթերը,

ե/ ***ոլորտում վարվող քաղաքականության նպատակադրումները***, որոնք և հանդիսանում են ծրագրի թիրախային ցուցանիշների որոշման հիմք:

զ/ ***ծրագրի շահառուների շրջանակը***՝ ըստ օրենքով սահմանված իրավասության,

է/ ***ծրագրին պետական բյուջեից հատկացված միջոցները***՝ պլանավորված և փաստացի ծախսված, երեք տարվա կտրվածքով, այստեղ ճիշտ կլինի, որ պլանավորված բյուջեն նշվի նաև ցուցանիշների շրջանակում կանխատեսվող ժամանակաշրջանի համար:

ը/ ***ՄԳ հիմնական ոլորտները***, որոնց հիման վրա հնարավոր է կատարել ծրագրի համակողմանի գնահատում և վերլուծություն: Այս ոլորտները սահմանում են ԱԽ անդամները՝ համատեղ: Ոլորտները սահմանելիս պետք է առաջնորդվել հետևյալ հարցադրումներով. <u>ի՞նչ տեղեկատվություն և ի՞նչ հիմնական հարցերի պատասխաններ են ակնկալվում ստանալ ՄԳ արդյունքում՝ քաղաքականության առաջնահերթությունները սահմանելու համար</u> (ըստ տարբեր մակարդակների՝ ՀՀ Վարչապետ, ՀՀ ԱՍՀ նախարար, ԱՍՀ կառուցվածքային ստորաբաժանումներ):

թ/ ***ծրագրի ՄԳ ժամանակահատվածը***՝ ելակետային տարին, փաստացի կամ պատմական ժամանակահատվածը և կանխատեսվող ժամանակահատվածը՝ եռամյա կտրվածքով: Ելակետային տարին հիմք է հանդիսանում համեմատությունների կատարման համար:

ժ/ ***ՄԳ գործընթացի իրականացման մասնակից կողմերը***։ Այստեղ նշվում են այն ստորաբաժանումները որոնք մասնակցում են ԱԽ աշխատանքներին և ՄԳ գործընթացին։

ի/ ***Կարող են նաև սահմանվել այլ պահանջներ***, ելնելով ծրագրի առանձնահատկություններից։ Այս հատվածում հնարավոր է նշվեն ՄԳ իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները՝ կապված ցուցանիշների ստացման, հետազոտությունների կազմակերպման կամ ծրագրային ապահովության մեջ փոփոխությունների կատարման անհրաժեշտությունից։

Ծրագրի տեղեկանքը և ՄԳ անձնագիրը վերանայվում են ծրագրի **ամփոփիչ կամ ծրագրի արդյունքի/ազդեցության գնահատում իրականացնելիս** կամ **երբ ծրագրի իրականացման քաղաքականությունը, նպատակադրումները փոփոխվում են։**

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ անձնագիրը կցված է սույն հաշվետվությանը հավելված Բ-ում, իսկ «Վճարման ծառայություններ» ծրագրի տեղեկանքը՝ հավելված Գ-ում։

Հարկ է նշել, որ այս տեսքով ՄԳ անձագիրը համահունչ է ծրագրերի մշտադիտարկման և գնահատման միջազգայնորեն ընդունված մոտեցումներին, այն առումով, որ հնարավորություն է տալիս սահմանելու **ծրագրի տրամաբանական շրջանակի** բաղադրիչները։ Եթե ՄԳ անձնագրում ներառված բաժինների անվանումների կողքին դրվի ՏՀԶԿ կողմից մշակված ծրագրերի մշտադիտարկման տրամաբանական շրջանակի բաղադրիչների անվանումները, ապա կստացվի, որ ՀՀ ԱՍՀՆ կողմից կիրառվող ՄԳ մոտեցումը ևս հետևում է այդ տրամաբանությանը։

Աղյուսակ 2 ՀՀ ԱՍՀՆ կողմից կիրառվող ՄԳ անձնագրի բաժինների և ՏՀԶԿ կողմից մշակված ծրագրերի մշտադիտարկման տրամաբանական շրջանակի բաղադրիչների համեմատությունը

ՀՀ ԱՍՀՆ կողմից կիրառվող ՄԳ անձնագրի բաժինները	**ՏՀԶԿ կողմից մշակված ծրագրերի մշտադիտարկման տրամաբանական շրջանակի բաղադրիչները**
Ծրագրի ընթացիկ և հեռահար **նպատակները**	Project Goal and Impact (Ծրագրի **նպատակը**՝ ազդեցությունը)
Խնդիրները, որոնց լուծմանը միտված է ծրագիրը	Outcomes (Ծրագրի արդյունքները)
Ծրագրի իրականացումից ակնկալվող որակական և քանակական արդյունքներ	Outputs (Ծրագրի միջանկյալ արդյունքները)
Ծրագրի շրջանակում իրականացվող գործողությունները	Activities (Ծրագրի գործողությունները)
Ուղորտում վարվող քաղաքականության նպատակադրումները	Targets (ծրագրի թիրախները)
Ծրագրի շահառուների շրջանակը	Beneficiaries (Շահառուները)

ՀՀ ԱՍՀՆ կողմից կիրառվող ՄԳ անձնագրի բաժինները	ՏՀԶԿ կողմից մշակված ծրագրերի մշտադիտարկման տրամաբանական շրջանակի բաղադրիչները
Ծրագրին պետական բյուջեից հատկացված միջոցները, ծրագիրն իրականացնող աշխատակազմը	Inputs (ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները, այդ թվում մարդկային)

Գծապատկեր 1-ը ներկայացնում է ծրագրի մշտադիտարկման և գնահատման տրամաբանական շղթան

Գծապատկեր 1. Ծրագրի ազդեցության գնահատման տրամաբանական շղթան



Ծրագրի ՄԳ անձնագիրն այն հիմնական փաստաթուղթն է, որի հարցադրումներին ի պատասխան կատարվում է նաև ծրագրի գործունեության վերլուծությունը:

Ծրագրի իրականացման ընթացքի մշտադիտարկման և ընթացիկ կամ ամփոփիչ գնահատման համար մշակվում է ծրագրի **արդյունքի վրա հիմնված ՄԳ ցուցանիշների շրջանակը:**

Առաջարկվող մեթոդաբանությամբ ՄԳ ցուցանիշների շրջանակը մշակվում է Excel ձևաչափով, քանի որ այսպես հնարավորություն է ստեղծվում անմիջապես բանաձևերի և տեխնիկական լուծումների կիրառմամբ, ստանալ գնահատվող ցուցանիշների փոփոխությունները, միտումները, տեսակարար կշիռները և գրաֆիկական պատկերները: Հարկ է նշել, որ սույն մեթոդաբանությամբ ՄԳ ցուցանիշների մշակման և կիրառման ընթացքում պետք է օգտագործվի **Excel- 2010 ծրագրային փաթեթը**, որը հնարավորություն է տալիս ՄԳ ցուցանիշների՝ թիրախային և կանխատեսվող, ու ելակետային տվյալների փոփոխությունների արտապատկերումը “sparkline” (հեռարձակում) կոչվող ֆունկցիայի միջոցով: Այդպիսով ծրագրի պատասխանատուները կկարողանան ակնթարթորեն նկատել ծրագրի ցուցանիշներում տեղի ունեցող փոփոխությունները՝ սահմանված ժամանակահատվածի ընթացքում:

ՄԳ ցուցանիշների շրջանակն իրենից ներկայացնում է ընդարձակ աղյուսակ՝ որի ենթակայում (սյունակներ) նշվում են ՄԳ ցուցանիշները լրացնելու կարգը և դրանց հետ կատարվող գործողությունները, մեկնաբանություններն ու քայլերը։

Աղյուսակի տողերում (ստորոգյալ) ՄԳ ցուցանիշները դասակարգված են ըստ սահմանված ոլորտների։ Առաջարկվող մեթոդաբանության փորձարկման ժամանակ որոշվեց ունենալ առանձին էջեր (worksheet) ծրագրի ամեն մի ոլորտի կամ փոխկապակցված ոլորտների համար։

ՄԳ ցուցանիշների աղյուսակի ենթակայում առանձնացված են հետևյալ սյունակները.

1. Ծրագրի **արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման ցուցանիշներն ըստ հիմնական ոլորտների** – այստեղ թվարկվում են դիտարկվող ծրագրի ՄԳ ցուցանիշներն ըստ հիմնական ոլորտների, ենթացուցանիշների։
2. **Ցուցանիշի բնույթը՝** այս սյունակում յուրաքանչյուր ցուցանիշի դիմաց նշվում է վերջինիս բնույթը։ ՄԳ շրջանակում ցուցանիշները կարող են լինել
   ա/ **թիրախային** – ցուցանիշներ որոնք հանդիսանում են ծրագրի իրականացման համար ամենակարևոր նպատակադրումները։ Այս ցուցանիշները սահմանվում են ՀՀ կառավարության ռազմավարական փաստաթղթերում և ՄԺԾԾ-ում, կամ ծրագրի քաղաքականության համար պատասխանատուների կողմից։ Կարող են լինել նաև ծրագրի վարչարարության թիրախներ, որը միայն սահմանում են ծրագրի իրականացման համար պատասխանատուները։ Եթե վերը նշված փաստաթղթերում չկան հստակ սահմանված, չափելի թիրախներ, ապա անհրաժեշտ է ոլորտի պատասխանատուների հետ համատեղ սահմանել ոլորտի և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի և ծրագրի առջև դրված նպատակների վերլուծության հիման վրա իրատեսական և իրագործելի թիրախներ։ **Թիրախային ցուցանիշները համարվում են ծրագրի ՄԳ հիմնական ցուցանիշներ՝ ծրագրի արդյունավետության գնահատման համար**,
   բ/ **կանխատեսվող** – այս ցուցանիշները կարևոր են ծրագրի ընթացքը գնահատելու համար, սակայն դրանք դուրս են ծրագրի քաղաքականության կամ իրականացման համար պատասխանատուների իրավասության շրջանակից։ Այս ցուցանիշները նպաստում են ծրագրի թիրախներին հասնելուն և պայմանավորում են ծրագրի արդյունավետ ընթացքը։ Դրանք կարող են սահմանված լինել կառավարության ռազմավարական փաստաթղթում, կամ սահմանվեն ԱԽ անդամների կողմից՝ համաձայնեցված կարգով կատարելով այդ ցուցանիշների կանխատեսումները։
   գ/ **տեղեկատվական**, այս ցուցանիշները հավաքագրվում են ծրագրի ընթացքի մասին տեղեկատվություն ունենալու համար և կիրառվում են միայն վերլուծությունների ժամանակ։ Այս ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումներ չեն կատարվում, տեղեկատվությունը հավաքագրվում է միայն պատմական և փաստացի ժամանակահատվածի համար։
   դ/ **հաշվարկային**, այս ցուցանիշները հարաբերական ցուցանիշներ են և կարող են լինել վերը նշված տեսակներից յուրաքանչյուրը, սակայն ստացվում են

սահմանված բանաձևերի կիրառմամբ: Այս ցուցանիշները հաշվարկվում են պատմական ժամանակահատվածի համար՝ փաստացի տվյալների հիման վրա, իսկ եթե ցուցանիշի հաշվարկման հիմքում դրված են կանխատեսվող կամ թիրախային ցուցանիշներ, ապա հաշվարկները կատարվում են նաև կարճաժամկետ հեռանկարի համար:

3. **Տեղեկատվության աղբյուրը՝** նշվում է տեղեկատվության ստացման աղբյուրը և/կամ տվյալը տրամադրող կառույցը/ստորաբաժանումը,
4. **Մեկնաբանություններ** բաժնում տրվում են հստակեցումներ ցուցանիշների ստացման եղանակի, բնույթի կամ աղբյուրի վերաբերյալ:
5. **Տվյալների հավաքագրման պարբերականությունը** – տվյալները կարող են հասանելի լինել ամսական, եռամսյակային կամ տարեկան կտրվածքով, և տվյալների հավաքագրման պարբերականությունը որոշվում է ԱԽ կողմից՝ ելնելով նաև ծրագրի ընթացքի մշտադիտարկման համար տվյալի կարևորությունից: Կան ցուցանիշներ, որոնք մշտադիտարկման համար պետք է ստանալ ամսական պարբերականությամբ, կամ եռամսյակային, դրանք հիմնականում ՀՀ ՍԱՊԾ կողմից ստացվող տվյալներն են և անհրաժեշտ են ծրագրի ընթացքը դիտարկելու համար: Սակայն ծրագրի ամփոփիչ գնահատման համար կիրառվում են միայն միջին տարեկան ցուցանիշները:
6. **Մշտադիտարկման ցուցանիշի արժեքն ըստ տարիների՝** այստեղ նշվում են ցուցանիշների փաստացի պատմական միջին տարեկան տվյալները: Փորձարկվող ծրագրերի համար վերցվել է 2012-2014թթ.-ը: Սակայն Excel ձևաչափով տվյալների ներկայացման առավելությունն այն է, որ կարելի է ամեն տարի նոր սյուն ավելացնել և նշել հաջորդ պատմանական ժամանակաշրջանի վիճակագրությունը:
7. **2012-2014թթ. փոփոխությունը**. ելակետային և սկզբնական տվյալների տարբերությունն է, այստեղ կիրառված է Excel ձևաչափի հնարավորությունը՝ պայմանական չափանշում (conditional formating), եթե տվյալը ստանում է բացասական արժեք, ապա այն նշվում է կարմիրով: Դա նշանակում է ելակետային և սկզբնական տվյալների տարբերությունը բացասական է: Կան ցուցանիշներ, որ բացասական միտումը դրական տեղաշարժ է: ԱԽ անդամները կարող են որոշել որ նման տվյալների փոփոխությունների համար կարող են կիրառվել այլ գունավորում:
8. **Ելակետային տարի** – սահմանվում է ՄԳ ելակետային տարին, որի նկատմամբ կատարվում է ծրագրի ցուցանիշների վերլուծությունը: Փորձարկման ծրագրերի համար ելակետային տարի է ընտրվել 2014թ.-ը: Այն կարող է փոփոխվել ծրագրի գնահատման առջև դրված խնդիրներից ելնելով, ինչպես նաև տարբեր լինել որոշ ցուցանիշների համար, եթե նրանց ստացման պարբերականությունը տարբեր է: Օրինակ աղքատության մակարդակի տվյալները հասանելի են դառնում մեկ տարվա տարբերությամբ:
9. **Կանխատեսումներն ըստ տարիների** – սահմանվում են կանխատեսվող 3 տարիների համար տվյալները, որոնք կարող են լինել նաև ծրագրի սահմանված թիրախներ:

10. **Փաստացի արդյունքն ըստ տարիների** – ելակետային տարվան նախորդող 3 տարիների փաստացի տվյալները, որոնք հիմք են դառնում համադրումների և վերլուծության համար։
11. **Փաստացի արդյունքի շեղումը թիրախային/կանխատեսվող ցուցանիշից ըստ տարիների** – տոկոսային արտահայտությամբ ՄԳ ցուցանիշի փոփոխությունն է։ հաշվարկվում է **միայն** թիրախային կամ կանխատեսվող ցուցանիշների համար։
12. **2012-2015թթ միտումը** – այս սյունակում գծապատկերի տեսքով տրվում է ցուցանիշների փոփոխությունը։ Սա հնարավոր է ստանալ միայն Excel ձևաչափի sparkline հրամանի միջոցով՝ ընտրելով գծապատկերի տեսքը – գծային կամ սյունային։ Այս հրամանի համար տվյալները վերցվում են ՄԳ շրջանակի «Միտումներ և գծապատկերներ» էջից, որտեղ առանձին դուրս են բերված ՄԳ ժամանակաշրջանի համար դինամիկ շարքերը՝ հաշվետվության համար ցուցանիշների միտումների գծապատկերները ստանալու համար։ Այս հրամանը մշտադիտարկման համար լավ գործիք է, քանի որ ծրագրի պատասխանատուներին հնարավորություն է տալիս արագ նկատել ցուցանիշների միտումները։
13. **2015-2017թթ ամփոփ ցուցանիշի փոփոխությունը** – այստեղ ՄԳ ցուցանիշի փոփոխությունն արտացոլվում է սիմվոլներով, որպեսզի ՄԳ իրականացնողների համար վառ տեսանելի լինի ցուցանիշի փոփոխության միտումն արդեն ելակետային տարուց հետո։ Եթե ցուցանիշի փոփոխությունը ավելի բարձր է քան կանխատեսվում էր, ապա նշվում է (+), եթե տարբերություն չկա, ապա՝ (0), և եթե փոփոխությունը ցածր է քան կանխատեսվում էր, ապա՝ (-)։ **Փորձարկվող ծրագրերի համար հիմք է վերցվել 10 տոկոս շեղումը**։
14. **Թիրախից շեղվելու պատճառները** և մեկնաբանություններ կատարողականի վերաբերյալ, արտասովոր կամ մեղմացուցիչ հանգամանքներ, կամ իրադարձություններ – այս սյունակում կարելի է նշումներ կատարել, բացատրելով թիրախային ցուցանիշից շեղվելու պատճառները, ենթադրությունները։ Այդ նշումները կարող են օգտագործվել ծրագրի գնահատման հաշվետվությունը մշակելիս։
15. **Ազդեցությունը ոլորտի քաղաքականության վրա** – եթե տվյալ ցուցանիշի փոփոխությունը ենթադրում է քաղաքականության փոփոխության անհրաժեշտություն, ապա տրվում են համապատասխան հիմնավորումներ։
16. **Հաջորդ քայլերը**, որ պետք է ձեռնարկվեն – նկարագրվում են այն քայլերը, որոնք պետք է իրականացվեն ծրագրի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ՝ կապված տվյալ ցուցանիշի հետ։
17. **ՄԳ ամփոփ հաշվետվություն ստացողները**՝ ՄԳ ցուցանիշների վերլուծության հիման վրա մշակված ամփոփ հաշվետվություններն ըստ ոլորտային հետաքրքրությունների և կարևորության, ներկայացվում են ՀՀ ԱՍՀ նախարարին, ՄԳ գործընթացը համակարգող փոխնախարարին և ոլորտի համար պատասխանատու փոխնախարարին ու վարչության պետին։ ՄԳ վարչությունը ստանում է բոլոր հաշվետվությունները կամ ինքն է իրականացնում այդ հաշվետվությունների մշակումը։

Հարկ է նշել, որ փորձարկվող երկու ծրագրերի համար ներկայացվող ՄԳ ցուցանիշների շրջանակներն իրենց տեսքով (interface) համապատասխանում են ծրագրի գնահատման

համար անհրաժեշտ տեսքին։ Ընթացիկ տարվա համար ամսական կամ եռամսյակային տվյալները մուտքագրելու համար ծրագրի մշտադիտարկման համար պատասխանատուն կարող է տվյալ տարվա համար փաստացի սյունակին ավելացնել սյուներ և լրացնել ամսական կամ եռամսյակային տվյալները, հետագայում տարեկան ամփոփ ցուցանիշը ստանալով, անցած ամիսների սյունակները թաքցնելով (hide)։ Սա նույնպես Excel ձևաչափի առավելություններից է։

Սույն հաշվետվության հաջորդ բաժիններում մանրամասն կներկայացվի փորձարկվող ծրագրերի համար ՄԳ շրջանակի բոլոր սյուների ու ցուցանիշների ստացումը, կանխատեսումը և հաշվարկները։

ՄԳ ցուցանիշների շրջանակի տվյալները կարող են օգտագործվել ծրագրերի ինչպես ընթացիկ, այնպես էլ ամփոփ գնահատման համար։ **Ծրագրի ընթացիկ գնահատման** համար տվյալները ստացվում են ՀՀ ԱՍՀՆ Վերլուծության և մշտադիտարկման վարչության, Աուդիտի կողմից կատարված ստուգումների արդյունքում և հիմնականում օգնում են գնահատելու ծրագրի վարչարարությունը, ծախս-արդյունավետությունը, ընթացքը՝ ծրագրի համար նախատեսված արդյունքների համեմատ։ **Ծրագրի ամփոփ/ամբողջական գնահատումը** ենթադրում է ծրագրի շրջանակում վարվող քաղաքականության, միջոցառումների և կազմակերպված գործողությունների ազդեցությունը ծրագրի շահառուների, երկրի տնտեսության և ընդհանուր բնակչության կենսամակարդակի վրա։ Այդ ցուցանիշները հիմնականում ստացվում են արտաքին աղբյուրներից՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հաշվետվություններից, ՀՀ ֆինանսների նախարարությունից, այլ գերատեսչություններից և հարակից տեղեկատվական բազաներից։ Կան ցուցանիշներ, որ ստացվում են նաև ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում։

ՄԳ համար տեղեկատվության կարևոր աղբյուր են նաև **շահառուների գոհունակության գնահատման համար իրականացվող ընտրանքային հետազոտությունները**, ինչպես նաև գործընկերների շրջանում ֆոկուս խումբ քննարկումները, որոնք իրականացնում է ՀՀ ԱՍՀ ազգային ինստիտուտը կամ բաց մրցույթի արդյունքում ընտրված խորհրդատու կազմակերպությունը՝ ծրագրի ՄԳ գործընթացի համար անհրաժեշտ ցուցանիշների պահանջից ելնելով։ Փորձարկվող ծրագերի շրջանակում շահառուների և գործընկերների կարծիքի հետազոտություններն իրականացրել է USAID/PRIP ծրագիրը՝ ԱԽ անդամների հետ համաձայնեցնելով հետազոտությունների մեթոդաբանությունն ու կիրառվող հարցաշարերը։

ՄԳ արդյունքների հիման վրա **ամփոփ հաշվետվությունների և զեկույցների մշակման** ձևաչափը, բովանդակությունը, պարբերականությունը, և պատասխանատուները սահմանվում են ԱԽ-ի կողմից և հաստատվում են ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից։ ՄԳ հաշվետվությունները կարող են լինել եռամսյակային կամ տարեկան՝ ելնելով ծրագրի առանձնահատկություններից։ Կարող են լինել ցուցանիշներ, որոնք անհրաժեշտ կլինի զեկուցել ամենամսյա պարբերականությամբ։ Ծրագրի ամփոփ գնահատումը կարող է իրականացվել ամեն տարի կամ երեք տարին մեկ անգամ՝ ըստ Նախարարի հրամանի։

Հաշվետվությունները պետք է պարունակեն ծրագրի նկարագրությունը, հիմնական նպատակները, խնդիրներն ու շահառուների շրջանակը և տան կանխատեսվող կամ թիրախային ցուցանիշների համեմատ ծրագրի կատարողականի գնահատականը: Տվյալները ներկայացվում են աղյուսակային կամ գծապատկերների տեսքով, տրվում են բացատրություններ թիրախներից շեղումների մասով և առաջարկություններ՝ ծրագրի արդյունավետության, քաղաքականության կամ վարչարարության բարելավման վերաբերյալ:

Հաշվետվության բովանդակությունը պետք է ունենա հետևյալ բաժինները.

- նախաբան, որտեղ նկարագրվում է կատարված ՄԳ գործընթացը և տվյալների հավաքագրումը,
- ամփոփագիր, որտեղ ներկայացվում են ծրագրի ՄԳ հիմնական բացահայտումները՝ և՛ դրական և բացասական,
- հիմնական մաս, որտեղ ըստ ոլորտների կբերվեն ՄԳ արդյունքները՝ ամփոփելով ՄԳ շրջանակի հետևյալ սյուների տեղեկատվությունը «Թիրախից շեղվելու պատճառները և մեկնաբանություններ կատարողականի վերաբերյալ. արտասովոր կամ մեղմացուցիչ հանգամանքներ կամ իրադարձություններ և ազդեցությունը ոլորտի քաղաքականության վրա» ՄԳ շրջանակից դուրս են բերվում նաև ցուցանիշներ, որոնք առավել կարևոր են քաղաքականության մշակման և ծրագրի արդյունավետության գնահատման տեսանկյունից և կատարվում է ամփոփ գնահատում:
- եզրակացություններ և առաջարկություններ, որտեղ ՄԳ ԱԽ անդամները կներկայացնեն ծրագրի կատարողականի բացատրությունը և կտան առաջարկություններ ծրագրի արդյունավետության բարելավման համար:
- հավելվածները կպարունակեն ծրագրի տեղեկանքը, անձնագիրը, ցուցանիշների շրջանակը և այլ անհրաժեշտ հիմնավորումներ:

ՀՀ ԱՍՀ նախարարին ներկայացվող հաշվետվությունը պետք է լինի համառոտ՝ ոչ ավել քան 10-15 էջ և հիմնականում աղյուսակային կամ գրաֆիկական պատկերներով՝ ցուցանիշների միտումներն արագ նկատելու համար: Հաշվետվությունը պետք է տեղեկատվություն պարունակի բոլոր ոլորտների վերաբերյալ՝ ընդհանուր ցուցանիշների մակարդակով, ինչպես նաև ոլորտին վերաբերող եզրակացություններն ու առաջարկությունները:

Ինչպես վերը նշվեց, առաջարկվող մեթոդաբանությամբ ստացված տվյալների հիման վրա կատարվել է «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ամփոփիչ կամ ծրագրի արդյունքի/ազդեցության գնահատում, իսկ «Վճարման ծառայություններ» ծրագրի համար՝ ֆորմատիվ կամ ծրագրի ընթացիկ գնահատում:

Փորձարկվող ծրագրերից յուրաքանչյուրի հաշվետվության վերջում ներկայացված են նաև ծրագրի ՄԳ շրջանակների համար ցուցանիշների հավաքագրման ընթացքում վեր հանված խնդիրները և առաջարկությունները, ինչպես ցուցանիշների ստացման, հավաքագրման հետ կապված, այնպես էլ ստացված տվյալների վերլուծության արդյունքում իրականացվող ծրագրերի արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Գծապատկեր 2-ը ներկայացնում է Արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման գործընթացի սխեմատիկ պատկերը.

Արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման գործընթացի սխեմատիկ պատկերը

Գործողություն	Մասնակիցներ	Պատասխանատուներ
1. ՄԳ ենթակա ծրագրի որոշում և ՄԳ ժամանակացույցի հաստատում	• ՀՀ ԱՍՀՆ Նախարար • ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար • Վերլուծության և մոնիտորինգի վարչության պետ • Ծրագրի պատասխանատու վարչության և ստորաբաժանման պետ	ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար
2. Ծրագրի ՄԳ իրականացման համար պատասխանատու Աշխատանքային խմբի ձևավորում, ԱԽ անդամների կազմի հաստատում ՀՀ ԱՍՀ նախարարի կողմից	• ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար • Վերլուծության և մոնիտորինգի վարչության պետ • Ոլորտային վարչության պետ • ՀՀ ԱՍՀ ազգային ինստիտուտի մոնիտորինգի և վերլուծության բաժին • Ծրագիրն իրականացնող կառույցը	ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար
3. ՄԳ ԱԽ անդամների միջև հաղորդակցության պահպանման համար քարտուղարի ընտրություն	Աշխատանքային խմբի անդամներ	ԱԽ ղեկավար
4. ՄԳ հիմնական ոլորտների որոշում՝ ի՞նչ հարցերի պատասխան պետք է ստանալ ՄԳ-ից	Աշխատանքային խմբի անդամներ	ԱԽ ղեկավար

Գործողություն	Մասնակիցներ	Պատասխանատուներ
5. ՄԳ ենթակա ծրագրի տեղեկանքի մշակում	Աշխատանքային խմբի անդամներ	ԱԽ ղեկավար ԱԽ պատասխանատու անդամ
6. ՄԳ ենթակա ծրագրի անձնագրի մշակում	Աշխատանքային խմբի անդամներ	ԱԽ ղեկավար ԱԽ պատասխանատու անդամ
7. ՄԳ ցուցանիշների շրջանակի մշակում՝ Excel ձևաչափով, ցուցանիշների բաշխումն ըստ ոլորտների, ստացման աղբյուրը և պարբերականությունը	Աշխատանքային խմբի անդամներ	ԱԽ ղեկավար ԱԽ պատասխանատու անդամներ
8. ՄԳ ցուցանիշների թիրախների և կանխատեսումների մշակում	Աշխատանքային խմբի անդամներ, Ոլորտային վարչություն	ԱԽ ղեկավար Ոլորտային վարչություն
9. ՄԳ ցուցանիշների հավաքագրման ծախսերի որոշում, հավաքագրման մեթոդաբանության, հետազոտության ընտրանքի և գործիքների մշակում, առաջին տարում ցուցանիշների էլեկտրոնային եղանակով ստացման ծրագրային ապահովման մշակում	• Աշխատանքային խմբի անդամներ	ԱԽ ղեկավար Ոլորտային վարչության պետ
10. ՄԳ ցուցանիշների հավաքագրում - ամենամյա	• Ծրագիրն իրականացնող կառույց	ԱԽ ղեկավար

Գործողություն	Մասնակիցներ	Պատասխանատուներ
(անհրաժեշտության դեպքում ամեն ամիս կամ եռամսյակային պարբերականությամբ) տվյալների հավաքագրման համար պատասխանատուների սահմանում	• Վերլուծության և մոնիտորինգի վարչության պետ • Ոլորտային վարչության պետ • ՀՀ ԱՍՀ ազգային ինստիտուտի մոնիտորինգի և վերլուծության բաժին • և/կամ ընտրված կազմակերպություն	ԱԽ պատասխանատու անդամներ
11. Հավաքագրված և տեղեկատվական բազաներից ստացված տվյալների մուտքագրում ՄԳ ցուցանիշների շրջանակի ֆայլ	Աշխատանքային խմբի անդամներ	ԱԽ ղեկավար ԱԽ պատասխանատու անդամներ
12. ՄԳ տվյալների վերլուծություն և հաշվետվության մշակում	Աշխատանքային խմբի անդամներ	ԱԽ ղեկավար ԱԽ պատասխանատու անդամներ
13. ՄԳ ցուցանիշների հիման վրա հաշվետվության ներկայացում ըստ սահմանված լսարանի	Աշխատանքային խմբի անդամներ, այլ շահագրգիռ կողմեր	ԱԽ ղեկավար ԱԽ պատասխանատու անդամներ
14. ՄԳ արդյունքների հիման վրա համապատասխան հանձնարարականների ձևավորում	• ՀՀ ԱՍՀՆ նախարար • ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար • Ծրագիրն իրականացնող կառույց • Վերլուծության և մոնիտորինգի վարչության պետ • Ոլորտային վարչության պետ • ՀՀ ԱՍՀ ազգային ինստիտուտի մոնիտորինգի և վերլուծության բաժին	ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար, ոլորտը համակարգող փոխնախարար

Գործողություն	Մասնակիցներ	Պատասխանատուներ
15. ՄԳ արդյունքների հիման վրա շահագրգիռ կողմերի և հանրության հետ հետադարձ կապի պահպանում	• ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար • Ծրագիրն իրականացնող կառույց • Վերլուծության և մոնիտորինգի վարչության պետ • Ոլորտային վարչության պետ • ՀՀ ԱՍՀ ազգային ինստիտուտի մոնիտորինգի և վերլուծության բաժին • Մամլո քարտուղար	ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար ոլորտը համակարգող փոխնախարար մամլո քարտուղար
16. ՄԳ գործընթացի կայունության համար համապատասխան հանձնարարականների մշակում, ներառյալ ծրագրի ընթացքում ամենամյա պարբերականությամբ ծրագրի առաջընթացի հաշվետվությունը մշակող և ներկայացնող պատասխանատուների որոշում:	• ՀՀ ԱՍՀ նախարար • ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար • Ծրագիրն իրականացնող կառույց • Վերլուծության և մոնիտորինգի վարչության պետ • Ոլորտային վարչության պետ • ՀՀ ԱՍՀ ազգային ինստիտուտի մոնիտորինգի և վերլուծության բաժին	ՀՀ ԱՍՀՆ ՄԳ հարցերը համակարգող փոխնախարար

3. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման փաստաթղթերը

Առաջարկվող մեթոդաբանության համաձայն, «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման փաստաթղթերն են՝

- **Ծրագրի տեղեկանքը**, որը մշակվել է ՀՀ ԱՍՀՆ կենսաթոշակային ապահովության վարչության կողմից, վերախմբավորվել է ըստ USAID/PRIP ծրագրի մասնագետների կողմից առաջարկվող ենթաբաժինների և հաստատվել է ԱԽ կողմից:
- Ծրագրի **ՄԳ անձնագիրը**, որը մշակվել է USAID/PRIP ծրագրի կողմից և հաստավել է ԱԽ կողմից;
- Ծրագրի **ցուցանիշների ցանկը**, որը մշակվել է ԱԽ անդամների կողմից: Այդ ցանկի հիման վրա USAID?PRIP ծրագրի մասնագետները մշակել են Ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների շրջանակը:

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի տեղեկանքում (տես հավելված Բ.1) տրված է ծրագրի գաղափարախոսությունը, մշակման նախապատմությունը, իրավական հիմքերը, վերջին տարիներին Հայաստանի կենսաթոշակային ապահովության համակարգում ընթացող բարեփոխումները և մասնավորապես «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի զարգացումները: Տեղեկանքում համառոտ նշված է նաև Սոցիալական ապահովության պետական ծառայության՝ որպես «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի իրականացնող կառույցի նախապատմությունը:

Ծրագրի ՄԳ տեղեկանքում նշված են նաև աշխատանքային կենսաթոշակների տեսակները և այդ կենսաթոշակները ստանալու իրավունակության պայմանները, ինչպես նաև դրանցում տեղի ունեցած փոփոխությունները: Այս տեղեկատվությունն օգտագործվել է ծրագրի մշտադիտարկման ժամանակահատվածի ընթացքում ցուցանիշներում տեղի ունեցած փոփոխությունները բացատրելու և հիմնավորելու համար:

Ծրագրի ՄԳ տեղեկանքում դիտարկվող ժամանակաշրջանը տալիս է 1992թ.-ից ծրագրում տեղի ունեցած փոփոխությունների ակնարկը՝ հիմնականում թվային տվյալներ տալով շրջադարձային տարիների՝ Սոցիալական ապահովության պետական հիմնդրամը՝ պետական ծառայության վերակազմավորելու 2007/8թթ.-երի համար, նոր տեղեկատվական համակարգի ներդրման՝ 2012թ. և մշտադիտարկման համար ելակետային տարվա՝ 2014թ.-ի համար տվյալներ:

Ծրագրի ՄԳ տեղեկանքում բերված են նաև վերջին տարիներին ծրագրի հիմնական օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները, մասնավորապես աշխատանքային կենսաթոշակների հաշվարկման բանաձևի, կնեսաթոշակի վճարման կարգի և

իրավունակության պայմանների փոփոխությունները։ Այս տվյալները կիրառվել են ծրագրի գործունեության վերլուծության ժամանակ։

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի անձնագիրը պարունակում է ծրագրի գործունեության գնահատման համար կարևոր ցուցանիշների վերաբերյալ թիրախներն ու կանխատեսումները մշակելու հիմքերը (տես հավելված Բ.2)։ Հիմնական փաստաթղթերը, որոնք օգտագործվել են Ծրագրի որակական ու քանակական արդյունքների սահմանման համար հետևյալն են.

- ՀՀ Կառավարության 2014-25թթ.-ի Հեռանկարային զարգացման ծրագիր;
- ՀՀ կառավարության ծրագիր 2014թ.
- ՀՀ ՄԺԾԾ 2014-2016թթ; 2016-2018թթ.

Ծրագրի ընթացիկ և հեռահար նպատակները, ծրագրի խնդիրներն ու գործողությունները սահմանվել են հիմք ընդունելով «Պետական կենսաթոշակների մասին»» ՀՀ օրենքը և վերջինիս կիրարկումն ապահովող կառավարության որոշումները։

Հավաքագրված տվյալների հիման վրա ծրագրի գնահատման հարցադրումները բխում են ՄԳ անձնագրում նշված այդ տեղեկատվությունից։

Ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների ցանկը մշակվել է հիմք ընդունելով Ծրագրի ՄԳ անձնագրում նշված գործողությունները։ Ըստ գործողությունների ծրագրի ցուցանիշների դասակարգումը, որը կիրառվում էր ՀՀ ԱՍՀՆ կողմից, համաձայն նոր մեթոդաբանության, վերադասավորվեց ըստ ծրագրի գործունեության հիմնական ոլորտների։

ԱԽ քննարկման արդյունքում և հիմք ընդունելով USAD/PRIP միջազգային փորձագետի առաջարկները, «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի անձնագրում առանձնացվեցին 9 ոլորտներ՝

1. Համակարգի մասնակիցները և ժողովրդագրություն
2. Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի բեռը տնտեսության վրա
3. Ծախսերը (աշխատանքային կենսաթոշակների վճարման համար հատկացվող գումարներ)
4. Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը
5. Աշխատանքային կենսաթոշակի թիրախավորումը
6. Կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետությունը
7. Աշխատանքային կենսաթոշակառուների բարեկեցությունը և եկամտի աղբյուրը
8. Կենսաթոշակառուների բավարարվածությունը մատուցվող ծառայություններից
9. Կենսաթոշակային համակարգի աջակցությունը հասարակության կողմից։

Նշված 9 ոլորտների համար ԱԽ անդամները մշակեցին **109 անուն ցուցանիշներ**, որոնք, եթե դիտարկվեն ըստ ենթախմբերի, օրինակ ըստ սեռի, կամ կենսաթոշակի տեսակի կամ բնակության վայրի, պահանջում են հավաքագրել **ավելի քան 470 ցուցանիշներ**։

Ծրագրի մասին տեղեկատվության հավաքագրման ժամանակ պարզվել է, որ մի շարք ցուցանիշներ առկա հնարավորությունների պայմաններում, հնարավոր չէ ստանալ,

քանի որ նման վիճակագրություն դեռ չի վարվում: Նման ցուցանիշների մասով առաջարկություններ բաժնում տրված են համապատասխան նշումներ: Միևնույն ժամանակ, տվյալների վերլուծության ընթացքում, դուրս են բերվել որոշ ցուցանիշներ, որոնց հավաքագրումը աննպատակահարմար է, քանի որ այդ ցուցանիշները զուտ տեղեկատվական են և ոչ մի ազդեցություն չեն ունենում ծրագրի արդյունավետության գնահատման ժամանակ, չեն տալիս որևէ տեղեկատվություն ծրագրի ընթացքի կամ խնդիրների մասին: Բայցի այդ, քանի որ ցանկացած ցուցանիշ հավաքագրելը դա ժամանակ է և հետևաբար ծախս, առաջարկություն է արվել հանել այդպիսի ցուցանիշները ՄԳ շրջանակից:

3.2. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների շրջանակը. ցուցանիշների հավաքագրումը և կանխատեսման/գնահատման մեթոդաբանությունը

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է ՄԳ ելակետային տարվա՝ 2014թ. և դրան նախորդող երկու տարիների՝ 2012-2013թթ.(պատմական ժամանակահատված) համար, իսկ ելակետային տարվան հաջորդող տարիների՝ 2015-2017թթ. (կարճաժամկետ հեռանկար) համար կատարվել են կարճաժամկետ կանխատեսումներ: 2015թ.-ը դիտարկվել է, որպես փաստացի ժամանակաշրջան, որի վերաբերյալ սակայն ոչ բոլոր տվյալներն են եղել առկա 2016թ.-ի մարտի վերջի դրությամբ[6]:

Սույն բաժնում պարզաբանված է «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ շրջանակի բոլոր ցուցանիշների հավաքագրման, կանխատեսման և գնահատման մեթոդաբանությունն ըստ Ծրագրի ՄԳ անձնագրում առանձնացված ոլորտների: Ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակում՝ Excel ֆայլում, ցուցանիշները տրված են նույն հաջորդականությամբ:

Ծրագրի ՄԳ ցուցանիշների վերաբերյալ փաստացի տեղեկատվությունը հավաքագրվել է տարբեր աղբյուրներից՝ ՀՀ ՍԱՊԾ տեղեկատվական շտեմարան, ՀՀ ԱՎԾ հրապարակումներ, ՀՀ Ֆինանսների նախարարության հրապարակումներ (օր. պետական բյուջեն ըստ տարիների, պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր), ՀՀ ՊԵԿ վիճակագրությունը, ընտրանքային հետազոտության և ֆոկուս խումբ քննարկման արդյունքները և այլն: ՄԳ ցուցանիշների շրջանակի Excel ֆայլում յուրաքանչյուր ցուցանիշի դիմաց կատարված է նշում, թե տվյալ ցուցանիշի վերաբերյալ ինչ պարբերականությամբ կարելի է հավաքագրել տեղեկատվությունը և որն է այդ

[6] ՄԳ ցուցանիշների շրջանակը անհրաժեշտ է թարմացնել տարեկան մեկ անգամ՝ մուտքագրելով 2016թ. փաստացի տվյալները, վերանայելով 2017թ. գնահատման/կանխատեսումների հիմքում դրված ենթադրությունները և կատարելով կարճաժամկետ կանխատեսումներ 2018-2019թթ. համար: Սա թույլ կտա ապահովել ՄԳ ցուցանիշների դինամիկ շարքը 2012 թվականից մինչև տվյալ փաստացի տարի, ինչպես նաև ունենալ կարճաժամկետ կանխատեսումներ փաստացի վերջին տարվան հաջորդող երեք տարիների համար:

տեղեկատվության աղբյուրը, ինչպես նաև արդյոք տվյալ ցուցանիշի վերաբերյալ կատարվել է կարճաժամկետ կանխատեսում, թե այն կրում է զուտ տեղեկատվական բնույթ:

ՄԳ ցուցանիշների կանխատեսման/գնահատման ընթացքում կիրառվել են տարբեր մոտեցումներ՝ ելնելով առկա տեղեկատվության ընձեռնած հնարավորություններից և կենսաթոշակային քաղաքականության թելադրած պայմաններից: ՄԳ մի շարք ցուցանիշներ կանխատեսվել են կիրառելով գծային կանխատեսման մեթոդը, որը որպես

ՆԵՐԴԻՐ 1. ԳԾԱՅԻՆ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՆ ՄԵԹՈԴ

Գծային կանխատեսման մեթոդը կիրառվում է ցուցանիշի վերաբերյալ առկա դինամիկ շարքը շարունակելու նպատակով կարճաժամկետ կանխատեսում կատարելու համար: Գծային կանխատեսման մեթոդով ցուցանիշի ապագա արժեքը որոշվում է որպես գծային ֆունկցիա՝ կանխատեսվող միջակայքին նախորդող միջակայքերի արժեքների հիման վրա:

Կենսաթոշակառուների թվաքանակի վերաբերյալ կարճաժամկետ կանխատեսումները 2015-2017թթ համար կատարվել են գծային կանխատեսման մեթոդով, ըստ հետևյալ բանաձևի.

$$Y_{n+1} = \frac{\Delta Y}{\Delta X} \times (X_{n+1} - X_n) + Y_n = \frac{(Y_n - Y_{n-1})}{(X_n - X_{n-1})} \times (X_{n+1} - X_n) + Y_n$$

Որտեղ՝

Y_{n+1} – Ցուցանիշի արժեքն է կանխատեսվող տարում,
Y_n – Ցուցանիշի արժեքն է ելակետային տարում,
Y_{n-1} - Ցուցանիշի արժեքն է ելակետային տարուն նախորդող տարում,
X_{n+1} - Կանխատեսվող տարի
X_n - Ելակետային տարի
X_{n-1} – Ելակետային տարվան նախորդող տարի

լուծում առաջարկվել է ՀՀ ԱՍՀ ազգային ինստիտուտի ԱԽ անդամների կողմից: Առաջարկի հիման վրա մշակվել է գծային կանխատեսման պարզ բանաձև (տես ներդիր 1-ը):

Սակայն, այս մոտեցումը կենսաթոշակային համակարգի շահառուների թվաքանակի կանխատեսման համար այդքան էլ ճիշտ չէ: ԱԽ անդամների հետ քննարկման արդյունքում, մասնավորապես Կենսաթոշակային ապահովության վարչության մասնագետների հետ, USAID/PRIP ծրագրի մասնագետների կողմից առաջարկվում է ժողովրդագրական ցուցանիշների կանխատեսումները կատարել հիմք ընդունելով բնակչության մասին տվյալները և օգտագործել ժողովրդագրական կանխատեսումներ կատարելու համար մշակված հատուկ մոդելներ: Այնուհետև ժողովրդագրական մանրամասն կանխատեսումների հիման վրա, հաշվի առնելով կենսաթոշակառուների փաստացի սեռատարիքային կազմն ու կառուցվածքն ըստ կենսաթոշակի տեսակների, ինչպես նաև մակրոտնտեսական ու աշխատանքի շուկայի ընթացիկ և ակնկալվող/կանխատեսված միտումները, կատարել կենսաթոշակային համակարգի շահառուների թվաքանակի կանխատեսումներ: Տրամաբանական այս կապը ժողովրդագրության, մակրոտնտեսական միջավայրի և աշխատանքի շուկայի միջև մանրամասն արտացոլված է գծապատկեր 3-ում՝ որտեղ բերված են Կենսաթոշակային համակարգի շահառուների և ֆինանսական ռեսուրսների ձևավորման հիմնական հոսքերը.

Գծապատկեր 3: Կենսաթոշակային համակարգի շահառուների և ֆինանսական ռեսուրսների հիմնական հոսքերը



Այս մոտեցումը, որպես առաջարկություն, ներկայացված է հաշվետվության առաջարկություններ բաժնում:

Ոլորտ 1: Համակարգի մասնակիցներ և ժողովրդագրություն

«Համակարգի մասնակիցները և ժողովրդագրությունը» բաժինը ներառում է չորս խումբ ցուցանիշներ.

1. Կենսաթոշակային համակարգը բնութագրող բացարձակ ցուցանիշներ. կենսաթոշակառուների թվաքանակն ըստ սեռատարիքային խմբերի և աշխատանքային կենսաթոշակի տեսակների, տվյալ տարում նոր նշանակված կենսաթոշակառուների թվաքանակն ըստ կենսաթոշակի տեսակների, կենսաթոշակ ստանալու միջին տևողությունը, աշխատանքային տարիքային և հաշմանդամության կենսաթոշակ ստանալու միջին տևողությունը և այլն (տես Առդիր 1. «Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ», բաժին 1. «Ժողովրդագրություն»):

Կենսաթոշակառուների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը 2012-2014թթ.-ի և 2015թ.-ի փաստացի տվյալները ստացվել են ՀՀ ՍԱՊԾ-ից՝ ԱԽ կողմից պաշտոնական գրությանն ի պատասխան: Տեղեկատվություն հավաքագրվել է և՛ հիմնական ցուցանիշների, և՛ ենթացուցանիշների վերաբերյալ: Կարճաժամկետ կանխատեսումներ կատարվել են միայն հիմնական ցուցանիշների համար: Կանխատեսումները կատարվել են հետևյալ տրամաբանությամբ.

- 2015թ. կանխատեսումներ սյունակում մուտքագրվել են կենսաթոշակառուների թվաքանակի վերաբերյալ փաստացի տվյալները 2015թ.հուլիսի 1-ի դրությամբ, քանի որ տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման պահին դրանք արդեն հասանելի էին,
- 2016-2017թթ. կարճաժամկետ կանխատեսումները կատարվել են կիրառելով գծային ինտերպոլյացիայի մեթոդը (բացառությամբ երկարամյա ծառայության կենսաթոշակառուների, որոնց նկատմամբ կիրառվել է մի փոքր այլ մոտեցում, ելնելով այդ տեսակի կենսաթոշակ տրամադրելու օրենքով սահմանված պայմաններից),
- Երկարամյա ծառայության կենսաթոշակառուների թվաքանակը 2015-2017թթ. համար գնահատելու համար նախ հաշվարկվել է 2014թ. այս խմբի շահառուների թվաքանակի նվազման տեմպը՝ 2013թ. նկատմամբ, այնուհետև նվազման այդ տեմպը կիրառվել է գնահատվող բոլոր երեք տարիների նկատմամբ: Այսպիսի մոտեցում է կիրառվել ելնելով այն փաստից, որ երկարամյա ծառայության կենսաթոշակ տրամադրվում է օդաչուներին, բորտուղեկցորդուհիներին և ավիացիայի ոլորտի մի շարք աշխատակիցների, իսկ նրանց թվաքանակը գնալով նվազում է: Եթե ՄԳ ցուցանիշների հավաքագրման և կանխատեսումների իրականացման փուլում հնարավոր լիներ ձեռք բերել տեղեկատվություն ավիացիայի ոլորտի՝ վերը թվարկած մասնագիտություններով աշխատողների թվաքանակի (ըստ մեկական տարիքային խմբի՝ սկսած 45 տարեկանից), նոր նշանակված և ընթացիկ կենսաթոշակառուների թվաքանակի (կրկին ըստ մեկական տարիքային խմբի), տարիքային յուրաքանչյուր խմբում ապրելու և մեռնելու հավանականության վերաբերյալ, ապա հնարավոր կլիներ կատարել առավել ճշգրիտ գնահատում:

2. ՀՀ ժողովրդագրական իրավիճակը բնութագրող բացարձակ ցուցանիշներ՝ կյանքի սպասվող միջին տևողություն ծննդից և 63 տարեկանից կանանց և տղամարդկանց համար, բնակչության թվաքանակը՝ ընդամենը և ըստ երեք խոշոր տարիքային խմբերի՝ աշխատունակ տարիքից ցածր, աշխատունակ տարիքի և աշխատունակ տարիքից բարձր:

ՀՀ ժողովրդագրական վիճակը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ԱՎԾ-ն է: Տարեկան պարբերականությամբ հրապարակվող «Հայաստանի ժողովրդագրական ժողովածու»-ն (http://www.armstat.am/am/?nid=81&id=1729) հնարավորություն է տալիս ստանալ մանրակրկիտ տեղեկատվություն բնակչության թվաքանակի և սեռատարիքային կազմի, կյանքի սպասվող տևողության կամ ծնելիության մակարդակի և ժողովրդագրական այլ ցուցանիշների վերաբերյալ: Միակ բարդությունն այն է, որ ժողովրդագրական ցուցանիշների վերաբերյալ առաջին հրապարակումները հասանելի են դառնում հաշվետու տարվա ավարտից մոտ կես տարի անց, և երբեմն տեղեկատվությունը հասանելի է ոչ այն ձևաչափով, ինչ ձևաչափով անհրաժեշտ է ՄԳ իրականացնելու համար: Ուստի «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ժողովրդագրական ցուցանիշների վերաբերյալ անհրաժեշտ ձևաչափով տեղեկատվություն ստանալու համար ՀՀ ԱՍՀՆ

անունից պաշտոնական գրություն է ուղարկել info@armstat.am էլեկտրոնային հասցեով և ստացվել անհրաժեշտ տվյալները:[7]

2015-2017թթ. համար ՀՀ ժողովրդագրական ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումներն իրականացվել են ՀԲ PROST մոդելի օգնությամբ: Կանխատեսումները կատարվել են բնակչության կյանքի սպասվող տևողության, մահացության հավանականության, ինչպես նաև միգրացիայի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվության և նշված ցուցանիշների փոփոխության վերաբերյալ կատարած ենթադրությունների հիման վրա: Հետագայում, սոցիալական պաշտպանության ոլորտի ռազմավարական քաղաքականության և առանձին ծրագրերի մշակման ու պլանավորման համար ժողովրդագրական ցուցանիշների կարևորությունից ելնելով, առաջարկվում է մշակել կամ ձեռք բերել հատուկ ժողովրդագրական կանխատեսումների նպատակով կիրառվող մոդելներ:[8]

2015-2017թթ. կյանքի սպասվող տևողության գնահատումը կատարվել է միջազգայնորեն ընդունված այն ենթադրության հիման վրա, որ կյանքի սպասվող միջին տևողությունը յուրաքանչյուր 10 տարին մեկ ավելանում է 1 տարով, այսինքն՝ յուրաքանչյուր տարի 0.1 տարով: ՀՀ ԱՎԾ տրամադրած վիճակագրությունը նախորդ 10 տարիների համար ենթարկվում է այս տրամաբանությանը:

2015-2017 թվականներին 63 տարեկանից կյանքի սպասվող տևողության կանխատեսումները նույնպես կատարվել են ՀԲ PROST մոդելի օգնությամբ, հիմնվելով վերևում նկարագրված ենթադրության վրա:

3. Կենսաթոշակային համակարգին հատկացումներ կատարողներ՝ ընթացիկ և նոր հարկատուներ: Ընդհանրապես, կենսաթոշակային համակարգին հատկացումներ կատարողների թվաքանակը, աշխատավարձերի մակարդակի և աշխատավարձից հատկացումների դրույքաչափերի հետ միասին կանխորոշում են կենսաթոշակային համակարգի մուտքերը, հետևաբար նաև կենսաթոշակի չափը և աշխատավարձի փոխհատուցման մակարդակը, եթե կենսաթոշակային համակարգը փակ է, ապա այն բաշխում է այն ինչ ստանում է կենսաթոշակային հատկացումների տեսքով: Թեև հայաստանյան կենսաթոշակային համակարգը ֆինանսավորվում է պետական բյուջեի ընդհանուր մուտքերի հաշվին և կենսաթոշակի չափն ուղղակիորեն պայմանավորված չէ եկամտային հարկից ստացված մուտքերով, այնուամենայնիվ, կենսաթոշակային համակարգում ընդգրկվածության կամ հավաքագրման մակարդակի ընդլայնումը հանդիսանում է կենսաթոշակային քաղաքականության կարևորագույն մարտահրավերներից մեկը:

2012 թվականին սոցիալական հատակացումներ կատարողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է ՀՀ ՍԱՊԾ ողմից:

---

[7] ՀՀ ԱՎԾ կողմից էլեկտրոնային գրությանն ի պատասխան առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ստացվում է պահանջվող տեղեկատվությունը:

[8] Ինչպես օրինակ, ՄԱԿ-ի MORTPAK կոչվող մոդելը, որը 1988թ. ի վեր կիրառվում է զարգացող և զարգացած երկրներում ժողովրդագրական կանխատեսումներ կատարելու նպատակով:

2013թ. հունվարի 1-ից Հայաստանում միավորվել են եկամտահարկն ու պարտադիր սոցիալական հատկացումները և ներդրվել է մեկ միասնական եկամտային հարկ: Միևնույն ժամանակ ներդրվել է եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգը: Անձնավորված հաշվառման տեղեկատվական բազան գտնվում է ՀՀ ՊԵԿ-ի իրավասության ներքո: Հետևաբար, 2013թ. սկսած համակարգին հատկացում կատարողների՝ եկամտային հարկ վճարողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ՊԵԿ-ի կողմից: ՀՀ «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, ՊԵԿ-ը եկամտային հարկ վճարողների վերաբերյալ սահմանված կարգով և ձևաչափով տեղեկատվություն է տրամադրում նաև կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնին՝ ՀՀ ՍԱՊԾ-ին, ուստի հարկատուների վերաբերյալ տեղեկատվությունը կարելի է ստանալ նաև ՀՀ ՍԱՊԾ-ից, ինչը և արվել է 2013թ.-ի համար: ՄԳ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման պահին եկամտային հարկ վճարողների թվաքանակի վերաբերյալ 2014թ.-ի համար տեղեկատվությունը հասանելի չի եղել և ցուցանիշը պահպանվել է 2013թ. մակարդակի վրա[9]: 2015-2017թթ. համար կանխատեսումները կատարվել են հետևյալ մոտեցմամբ. 2014թ. տվյալների հիման վրա հաշվարկվել է եկամտային հարկ վճարողների թվաքանակ/ընդամենը վարձու աշխատողների թվաքանակ հարաբերակցությունը, այնուհետև այդ հարաբերակցության հիման վրա, ելնելով 2015-2017թթ. վարձու աշխատողների թվաքանակի կարճաժամկետ կանխատեսումներից, հաշվարկվել է եկամտային հարկ վճարողների թվաքանակը:

[9] Այս մոտեցումն է կիրառվել հետևյալ պատճառով. 2012-2014թթ. տնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի միտումները համադրվել են 2012-2013թթ. եկամտային հարկ վճարողների թվաքանակի փոփոխության միտումների հետ: Համադրության արդյունքում պարզվեց, որ 2013թ.–ին՝ 2012թ. Համեմատ, զբաղվածների թվաքանակը նվազել է, մինչդեռ եկամտային հարկ վաճարողների թվաքանակն, ընդհակառակը, նույն ժամանակահատվածում ավելացել է, ինչը մասամբ կարող է բացատրվել վարձու աշխատողների թվաքանակի ավելացմամբ: 2014թ.-ին 2013թ. համեմատ վարձու աշխատողների թվաքանակը նվազել է, հետևաբար, ելնելով նկարագրված միտումներից, պետք էր ենթադրել եկամտային հարկ վճարողների թվաքանակի նվազում: Սակայն ՊԵԿ-ի հրապարակումներից երևում է, որ 2014թ. հունվար-դեկտեմբերին հավաքագրված եկամտային հարկն ավելացել է 20%-ով, մինչդեռ անվանական աշխատավարձը, որից գանձվում է եկամտային հարկը՝ ընդամենը 8%-ով: Այսպիսով, քանի որ ՄԳ ցուցանիշների լրացման պահին հասանելի տեղեկատվությունը միանշանակ հետևության չէր բերում, որոշվեց 2014թ. եկամտային հարկ վճարողների թվաքանակը պահել 2013թ. մակարդակի վրա՝ մինչև փաստացի տեղեկատվության ստացման հնարավորությունը: Հարկ է մեկ անգամ ևս կարևորել ՀՀ ՍԱՊԾ-ի միջոցով՝ ՀՀ ՊԵԿ-ից եկամտային հարկ վճարողների թվաքանակի վերաբերյալ անհրաժեշտ ձևաչափով տեղեկատվության ստացման անհրաժեշտությունը:

Նոր եկամտային հարկ վճարողների[10] թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը հնարավոր չի եղել ստանալ ՊԵԿ-ից[11], և որպես այլընտրանքային մոտեցում 2012-2014թթ. համար օգտագործվել է ՀՀ ԱՎԾ «Աշխատանքի շուկան ՀՀ-ում» ժողովածուի «Աշխատուժի շարժը» բաժնում հրապարակված «տարվա ընթացքում ընդունվել են աշխատողներ» ցուցանիշը (http://www.armstat.am/file/article/trud_2015_10.pdf, էջ 146), իսկ 2015-2017թթ. համար ցուցանիշը գնահատվել է որպես տեսակարար կշիռ վարձու աշխատողների կանխատեսված թվաքանակից՝ 2014թ. նոր ընդունված աշխատողների թվաքնակ/ընդամենը վարձու աշխատողների թվաքանակ հարաբերակցությունը պահելով հաստատուն:

Եկամտային հարկ վճարողների թվաքանակն անմիջականորեն պայմանավորված է երկրի մակրոտնտեսական և աշխատանքի շուկայում տիրող իրավիճակից: Ուստի հետագայում կարճաժամկետ կանխատեսումներ կատարելու նպատակով խորհուրդ է տրվում մշակել պարզ մոդել, որը հաշվի կառնի ցուցանիշի վրա ազդող գործոնների ազդեցությունը, աշխատանքի շուկայում վարվող քաղաքականությամբ պայմանավորված տատանումները և թույլ կտա կատարել առավել արժանահավատ կանխատեսումներ:

4. Հարաբերական ցուցանիշներ՝ հաշվարկվել են ըստ հետևյալ բանաձևերի. բնակչության խնամառության գործակից (63+ բնակչության թվաքանակ/16-62 տարեկան բնակչության թվաքանակ հարաբերակցությունը), կենսաթոշակային համակարգի խնամառության գործակից (ընդամենը կենսաթոշակառուների թվաքանակ/ընդամենը եկամտային հարկ վճարողների թվաքանակ), կենսաթոշակային համակարգի սահմանային խնամառության գործակիցը (նոր կենսաթոշակառուների թվաքանակ/նոր եկամտային հարկ վճարողների թվաքանակ) (տես Ներդիր 2-ը):

Այսպիսով, այս բաժնի ցուցանիշները պայմանավորում են «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի գործունեությունը, սակայն դուրս են ծրագրի անմիջական ազդեցության շրջանակից: ՄԳ հաշվետվության մեջ պետք է տրվեն ժողովրդագրական միտումները՝ որոնք կարող են հիմք ծառայել կենսաթոշակային քաղաքականության փոփոխության համար:

---

[10] Կարիք կա հստակ սահմանել «նոր եկամտային հարկ վճարող» հասկացությունը. կամ որպես այդպիսին պետք է դիտարկել միայն առաջին անգամ աշխատանքի շուկա մուտք գործած և եկամտային հարկ վճարողին, կամ տվյալ տարում նոր հարկատու համարել նաև այն անձին, ով աշխատանքային գործունեությունը դադարեցրել էր և տվյալ տարում կրկին աշխատանքի շուկա է մուտք գործել:

[11] ՀՀ ՍԱՊԾ-ն այն կառույցն է, որը օրենքով սահմանված կարգով և պարբերականությամբ կարող է և պետք է ՀՀ ՊԵԿ-ից ստանալ տեղեկատվություն եկամտային հարկ վճարողների թվաքանակի և կազմի վերաբերյալ: Հաճախ, սակայն, տեղեկատվության ստացման ձևաչափը չի համապատասխանում ՄԳ նպատակից բխող անհրաժեշտ տեղեկավության ձևաչափին: Ուստի անհրաժեշտ է մշակել մեխանիզմ, որը թույլ կտա ժամանակին և անհրաժեշտ ձևաչափով ստանալ տեղեկատվություն՝ անմիջապես ՀՀ ՊԵԿ-ից կամ ՀՀ ՍԱՊԾ միջոցով:

ՆԵՐԴԻՐ 2. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՆԱՄԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Բնակչության խնամառության գործակիցը 63 և բարձր տարիքի բնակչության ու 16-62 տարեկան բնակչության թվաքանակների հարաբերակցությունն է: Այս հարաբերակցության աճն ուղղակիորեն բերում է սոցիալական ոլորտի ֆինանսական ծախսերի ավելացմանը:

Կենսաթոշակային համակարգի խնամառության գործակիցն իրենից ներկայացնում է կենսաթոշակառուների և համակարգին հատկացումներ կատարողների թվաքանակի հարաբերակցությունը: Այս հարաբերակցության բարձրացումն ուղղակիորեն բերում է.

- հարկային մուտքերի նվազման,
- հանրային ծախսերի ավելացման. պետությունը/կառավարությունն ունի պետական կենսաթոշակ և այլ պետական նպաստներ վճարելու, առողջապահական որոշակի ծառայություններ մատուցելու պարտավորություն,
- պետական ֆինանսների վրա ճնշման ավելացումը կարող է բերել հարկերի տոկոսադրույքների ավելացման, ինչն իր հերթին կարող է բերել տնօրինվող եկամտի նվազեցման և առաջացնել ֆորմալ դաշտում աշխատելու հակախթաններ: Կառավարությունը կարող է ստիպված լինել ավելացնել հարկային մուտքերը անուղղակի հարկերի հավաքագրման հաշվին,
- կենսաթոշակային քաղաքականության ոլորտում հաճախ կառավարությունները ստիպված են լինում դիմել կենսաթոշակային տարիքի բարձրացմանը՝ համակարգի ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով:

Ոլորտ 2: «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի բեռը տնտեսության վրա

Կենսաթոշակային ծախսերը կազմում են սոցիալական ոլորտի ծախսերի ամենամեծ բաղադրիչն ու երկրի սոցիալական պաշտպանության քաղաքականության ամենածանրակշիռ ուղղությունը: Ուստի կարևոր է հասկանալ, թե այդ ծախսերը երկրի ՀՆԱ-ի, պետական բյուջեի եկամուտների և ծախսերի որ մասն են կազմում:

Այս ոլորտի համար ԱԽ կողմից ընտրվել են հետևյալ ցուցանիշները՝

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի բնույթը	Առկայության կարգավիճակը
1. ՀՆԱ (մլրդ դրամ)	Կանխատեսվող	Առկա է
2. Պետական բյուջեի ծախսերը կենսաթոշակային համակարգի վրա (մլրդ դրամ)	Կանխատեսվող	Առկա է
3. Կենսաթոշակային համակարգի ծախսերը, %-ով ՀՆԱ-ի նկատմամբ	Կանխատեսվող	Առկա է
4. Կենսաթոշակային համակարգի ծախսերը, %-ով եկամտային հարկի նկատմամբ	Հաշվարկային	Առկա է
5. Վարձու աշխատողների թվաքանակը, հազ. մարդ (միջին տարեկան թվաքանակ)	Հաշվարկային	Առկա է
6. Պետական բյուջե եկամտային հարկ վճարողների թվաքանակը, ընդամենը հազ. մարդ	Կանխատեսվող	Առկա է 2012-2014թթ.-ի համար
7. Տվյալ տարում նոր եկամտային հարկ վճարողների թվաքանակը, ընդամենը հազ. մարդ	Կանխատեսվող	Առկա է 2012-2014թթ.-ի համար

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի բնույթը	Առկայության կարգավիճակը
8. Կենսաթոշակային համակարգի խնամառության գործակից (ընդամենը կենսաթոշակառուների թվաքանակ /ընդամենը հատկացումներ կատարողների թվաքանակ)	Կանխատեսվող	Առկա է 2012-2014թթ.-ի համար
9. Կենսաթոշակային համակարգի սահմանային խնամառության գործակիցը (նոր կենսաթոշակառուների թվաքանակ/նոր եկամտային հարկ վճարողների թվաքանակ)	Հաշվարկային	Առկա է 2012-2014թթ.-ի համար
10. Բնակչության խնամառության գործակից (63+ բնակչության թվաքանակ/16-62 տարեկան բնակչության թվաքանակ հարաբերակցությունը) (բնակչության թվաքանակը՝ տարեսկզբի դրությամբ)	Հաշվարկային	Առկա է 2012-2014թթ.-ի համար
11. Եկամտային հարկ վճարողների թվաքանակ/վարձու աշխատողների թվաքանակ (հավաքագրման մակարդակը), %	Հաշվարկային	Առկա է 2012-2014թթ.-ի համար

ՀՆԱ. ՄԳ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և մուտքագրման պահին ՀՆԱ-ի վերաբերյալ փաստացի տեղեկատվությունը հասանելի է եղել 2012-2015թթ համար: Տեղեկատվության աղբյուրներն են ՀՀ ԱՎԾ հրապարակումները, մասնավորապես «ՀՀ Ազգային հաշիվներ» ժողովածուն (http://www.armstat.am/am/?nid=81&id=1609) և ՀՀ ԱՎԾ վեբ կայքի Հիմնական վիճակագրական տվյալների ժամանակագրական շարքերը (http://www.armstat.am/am/?nid=126&id=01001):

ՀՆԱ-ի 2016-2017թթ. համար կանխատեսված տվյալները վերցվել են ՀՀ Ֆինանսների նախարարության «2016-2017թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրից» (http://www.minfin.am/index.php?cat=73&lang=1, էջ 47):

2. Պետական բյուջե վճարված եկամտային հարկ. եկամտային հարկը ներդրվել է 2013թ. հունվարի 1-ից, մինչ այդ գործել է երկու հարկատեսակ՝ եկամտահարկ և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ:

- 2012թ. համար մուտքագրված փաստացի ցուցանիշը պետական բյուջե՝ եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից ստացված մուտքերի հանրագումարն է,
- 2013թ.և 2014թ. համար արդեն վերցվել են եկամտային հարկից ստացված մուտքերը, գումարած եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասով պարտքերի մարումից ստացված մուտքերը: Տեղեկատվության ստացման աղբյուրը ՀՀ ԱՎԾ «Հայաստանի ֆինանսների

վիճակագրություն» ժողովածուն է (http://www.armstat.am/file/article/finansner_14_1.pdf, 20142. էջ 2),

- 2015թ. համար կատարվել է ցուցանիշի գնահատում՝ հիմք ընդունելով 2015թ. 9 ամիսների վերաբերյալ ՀՀ ԱՎԾ հրապարակած տեղեկատվությունը (http://www.armstat.am/file/article/sv_11_15a_211.pdf «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-նոյեմբերին», էջ 67-68)։ Գնահատումը կատարվել է հետևյալ մոտեցմամբ՝ 2014թ. Մուտքերտարի/Մուտքերթամիս հարաբերակցությունը կիրառվել է 2015թ. 9 ամիսների համար հրապարակված ցուցանիշի նկատմամբ՝ 2015թ.-ի տարեկան ցուցանիշը ստանալու համար։
- ցուցանիշի 2015թ. փաստացի արժեքը վերցվել է ՀՀ ՊԵԿ-ի կայքէջի «Հարկային վիճակագրություն» բաժնից (http://www.taxservice.am/Content.aspx?itn=TITaxStatData)։

Պայմանավորված այն հանգամանքով, թե ՄԳ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման որ աղբյուրն է հասանելի, կարելի է կիրառել նաև ցուցանիշի կանխատեսման այլընտրանքային մոտեցումներ.

- հետագայում եկամտային հարկից ստացվող մուտքերը կանխատեսելիս խորհուրդ է տրվում օգտվել նաև ՀՀ ՊԵԿ-ի հարկային վիճակագրություն բաժնում հրապարակվող դինամիկ շարքերից, որտեղ ամսական կտրվածքով հրապարակվում է տեղեկատվություն հավաքագրված եկամտային հարկի վերաբերյալ,
- տվյալ դեպքում 2016-2017թթ. կանխատեսումները կատարվել են գծային կանխատեսման մեթոդի հիման վրա,
- պետական բյուջեի մուտքերը կարելի է գնահատել հիմնվելով անվանական միջին աշխատավարձի և եկամտային հարկ վճարողների թվաքանակի կանխատեսումների վրա։

3. Պետական բյուջեի ծախսերը կենսաթոշակային համակարգի վրա. ցուցանիշի՝ 2012-2014թթ. համար փաստացի տեղեկատվության աղբյուրը ՀՀ ՍԱՊԾ-ն է։ Կանխատեսումները 2015-2017թթ. տրամադրվել են ՀՀ ԱՍՀՆ կենսաթոշակային ապահովության վարչության կողմից։ Այս տեղեկատվությունը կարելի է ստանալ նաև ՀՀ կառավարության «2016-2018թթ.-ի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր» փաստաթղթից (http://www.minfin.am/index.php?cat=73&lang=1)։

4. ՄԳ ցուցանիշների շրջանակում ներառված են կենսաթոշակային համակարգի բեռը տնտեսության վրա բնութագրող երկու հարաբերական ցուցանիշներ՝ կենսաթոշակային համակարգի ծախսերը, %-ով ՀՆԱ-ի նկատմամբ և կենսաթոշակային համակարգի ծախսերը, %-ով հավաքագրված եկամտային հարկի նկատմամբ։ Սրանք հաշվարկային ցուցանիշներ են, բայց քանի որ իրենց հիմքում ունեն կանխատեսվող բնույթի ցուցանիշներ, ուստի հաշվարկվել են նաև կարճաժամկետ հեռանկարի համար։

5. Վարձու աշխատողներ. ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է ՀՀ ԱՎԾ «Հայաստանի վիճակագրական տարեգրքի» «Զբաղվածություն» բաժնից։ Տարեգիրքը

հրապարակվում է յուրաքանչյուր տարի և պարունակում է տեղեկատվություն հրապարակման տարվան նախորդող 5 տարիների համար։

2012-2014թթ.համար տվյալները վերցվել են «Հայաստանի վիճակագրական տարեգրքից (http://www.armstat.am/file/doc/99489183.pdf, 2014, էջ 51), իսկ 2015-2017թթ. համար վարձու աշխատողների թվաքանակը գնահատվել է ելնելով աշխատունակ տարիքի և աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչության թվաքանակից և 2014թ. այդ թվաքանակում վարձու աշխատողների փաստացի տեսակարար կշռից։

Բաժնում կան ցուցանիշներ, որոնք վերցված են ՄԳ ցուցանիշների շրջանակի «Ժողովրդագրություն» բաժնից՝ տեղեկատվությունը վերլուծելու հարմարավետությունը ապահովելու նպատակով։

Ոլորտ 3։ Ծախսեր (աշխատանքային կենսաթոշակների վճարման համար հատկացվող գումարներ)

Այս բաժնի ցուցանիշները հանդիսանում են «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ռեսուրսները (inputs)։ Ծրագրի արդյունավետության գնահատման համար կարևոր է ծրագրերի ռեսուրսների արդյունավետ օգտագործումը։ Այս ծրագրի համար նման գնահատական կարելի է տալ դիտարկելով կենսաթոշակային ծառայություն մատուցող անձնակազմի վրա կատարված ծախսերի և ընդամենը աշխատանքային կենսաթոշակներ վճարելու համար տրամադրված ռեսուրսների հարաբերակցությունը։

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի բնույթը	Առկայության կարգավիճակը
1. Ընդամենը ծախսեր, մլրդ դրամ	Կանխատեսվող	Տրամադրվել է
2. Աշխատանքային կենսաթոշակների վճարման համար հատկացվող գումար, մլրդ դրամ, այդ թվում ըստ կենսաթոշակի տեսակի	Կանխատեսվող	Տրամադրվել է
3. Վարչական ծախսեր (միայն ՍԱՊԾ) մլրդ դրամ	Կանխատեսվող	Տրամադրվել է
3,1 Կենսաթոշակային համակարգի աշխատողների աշխատավարձը (միայն ՍԱՊԾ), մլրդ դրամ	Կանխատեսվող	Տրամադրվել է
3,2 Իրազեկման ծախսեր, մլրդ դրամ	Կանխատեսվող	Տրամադրվել է
3,3 Այլ վարչական ծախսեր, մլրդ դրամ	Կանխատեսվող	Տրամադրվել է
4. Կ/թ համակարգի ծախսը 1 կենսաթոշակառուի հաշվով, դրամ	Հաշվարկային	Հաշվարկվել է
5. Կ/թ համակարգի մուտքերը 1 հարկատուի հաշվով, դրամ	Հաշվարկային	Հաշվարկվել է

1. Ընդամենը կենսաթոշակային համակարգի վրա կատարվող ծախսերը աշխատանքային կենսաթոշակների վճարման համար հատկացվող գումարի և վարչական ծախսերի հանրագումարն է։ Բոլոր այս ցուցանիշները՝ իրենց ենթացուցանիշներով

(բացառությամբ ըստ կենսաթոշակի տեսակների վճարման համար հատկացվող գումարների) կանխատեսվող ցուցանիշներ են։

2012-2014թթ. համար փաստացի տեղեկատվության տրամադրման աղբյուրը ՀՀ ՍԱՊԾ-ն է։ 2015-2017թթ. գնահատականը տրամադրվել է ՀՀ ԱՍՀՆ Կենսաթոշակային ապահովության վարչության կողմից։

Կենսաթոշակային համակարգի աշխատողների աշխատավարձի, իրազեկման և վարչական այլ ծախսերի վերաբերյալ փաստացի տեղեկատվություն տրամադրվել է 2012-2015թթ. համար։ Տեղեկատվության տրամադրման աղբյուրը ՀՀ ՍԱՊԾ-ն է։

Քանի որ ՄԳ ցուցանիշների վրա աշխատելու պահին համակարգի աշխատողների աշխատավարձի բարձրացում նախատեսված չէր, 2016-2017թթ. աշխատանքի վարձատրության ծախսերը պահպանվել են 2015թ. մակարդակի վրա, աշխատավարձային քաղաքականության մեջ փոփոխություն լինելու դեպքում անհրաժեշտ է կատարել գնահատականի համապատասխան փոփոխություն/ճշգրտում։

2. Բաժնում ներառված են կենսաթոշակային համակարգի ծախսերը բնութագրող հաշվարկային երկու ցուցանիշներ՝ համակարգի ծախսը 1 կենսաթոշակառուի հաշվով և համակարգի մուտքերը 1 հարկատուի հաշվով, որոնք ստացվում են ըստ համապատասխան բանաձևի։

Ոլորտ 4։ Կենսաթոշակային համակարգի Ֆինանսական կայունությունը

ՀՀ կենսաթոշակային համակարգի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի ընհանուր մուտքերի հաշվին, ուստի հնարավոր չէ ուղղակիորեն դատել կենսաթոշակային համակարգի պակասուրդի կամ հավելուրդի մասին։

Այնուամենայնիվ, այս բաժնում ներառված են հաշվարկային բնույթի երկու ցուցանիշներ՝ «Աշխատանքային կենսաթոշակների ծախսերի և եկամտային հարկից ձևավորված մուտքերի տարբերությունը» միլիարդ դրամով և տոկոսով ՀՆԱ-ի նկատմամբ։ Այս ցուցանիշները հաշվարկվել են ինչպես փաստացի՝ 2012-2014թթ,-ի, այնպես էլ կանխատեսվող 2015-2017թթ. համար։

Ցուցանիշի անվանումը	**Ցուցանիշի բնույթը**
Աշխատանքային կենսաթոշակների ծախսերի և եկամտային հարկից ձևավորված մուտքերի տարբերությունը (+/-), մլրդ դրամ	Հաշվարկային
Աշխատանքային կենսաթոշակների վճարման ծախսերի և եկամտային հարկից ձևավորված մուտքերի տարբերությունը, %-ով ՀՆԱ-ի նկատմամբ	Հաշվարկային

Ոլորտ 5: Աշխատանքային կենսաթոշակի թիրախավորումը

Այս բաժնի ցուցանիշները հնարավորություն են տալիս գնահատելու ծրագրի կատարողականը՝ ծրագրի առջև դրված խնդիրների լուծման տեսանկյունից:

Բաժնում ընդգրկված են երկու խումբ ցուցանիշներ.

- Աշխատանքային կենսաթոշակի միջին չափը և աշխատանքային կենսաթոշակի հաշվարկման հիմքում դրված բաղադրիչների՝ հիմնական կենսաթոշակի չափը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը (տես ներդիր 3-ը): Սրանք թիրախային ցուցանիշներ են և օգտագործվել են Ծրագրի գնահատման նպատակով:

- Բաժնում ներառված և Ծրագրի գնահատման համար օգտագործվող թիրախային ցուցանիշների մյուս խումբը հարաբերական ցուցանիշներն են՝ աշխատանքային կենսաթոշակ/ՆՍԶ, աշխատանքային կենսաթոշակ/տնօրինվող աշխատավարձ հարաբերակցությունները և այլն, որոնք բնութագրում են տրամադրվող կենսաթոշակների համարժեքությունը (ավելի մանրամասն տես «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների վերլուծության և գնահատման զեկույցում):

- Բաժնում ներառված են նաև կանխատեսվող բնույթի մի շարք ցուցանիշներ, որոնք դուրս են ծրագրի իրավասությունից, սակայն հիմք են հանդիսանում ծրագրի թիրախների սահմանման և ծրագրի արդյունավետության գնահատման համար:

1. Աշխատանքային կենսաթոշակի չափը բնութագրող բացարձակ ցուցանիշներ. ՄԳ ցուցանիշների շրջանակում ներառված են կենսաթոշակի մակարդակը բնութագրող բացարձակ ցուցանիշներ, որոնց վերլուծությունն օգնելու է հասկանալ, թե որքանո՞վ է Ծրագիրը լուծում իր առջև դրված խնդիրները. կենսաթշակների շարունակական աճ աշխատանքային միջին կենսաթոշակի՝ նվազագույն սպառողական զամբյուղի (ՆՍԶ) համեմատ ցածր մակարդակի հաղթահարման նպատակով: Այս խմբի բոլոր ցուցանիշները թիրախային ցուցանիշներ են և պետք է համոզվել, որ սահմանված կարճաժամկետ թիրախները իրատեսական են և իրագործելի:

Աշխատանքային կենսաթոշակի չափը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ փաստացի տեղեկատվությունը 2012-2014թթ. և 2015թ. -ի համար տրամադրվել է ՀՀ ՍԱՊԾ կողմից:

- **Միջին ամսական աշխատանքային կենսաթոշակ**. ցուցանիշի 2015-2016թթ. գնահատականը տրամադրվել է ՀՀ ԱՍՀՆ կենսաթոշակային ապահովության վարչության կողմից, իսկ 2017թթ. համար ցուցանիշի գնահատականը վերցվել է «ՀՀ 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրից» (http://www.gov.am/files/docs/1603.pdf. էջ 271-272):

- **Հիմնական կենսաթոշակ**. ՄԳ ցուցանիշների հավաքագրման պահին արդեն հայտնի էր հիմնական կենսաթոշակի փաստացի չափը 2015-2016թթ. համար, 2017թ. հիմնական կենսաթոշակի չափը գնահատվել է 2016թ.հիմնական կենսաթոշակի չափը գնաճով ինդեքսավորելու միջոցով:

Բոլոր այն դեպքերում, երբ գնահատումը կատարվել է գնաճով ինդեքսավորելու միջոցով, գնաճի կանխատեսվող մակարդակը վերցվել է «ՀՀ 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրից» (http://www.gov.am/files/docs/1603.pdf. էջ 47):

- **Աշխատանքային ստաժի 1 տարվա արժեքը** բնութագրող ցուցանիշների կանխատեսման/ գնահատման համար կիրառվել է նույն մոտեցումն, ինչ հիմնական կենսաթոշակի դեպքում՝ 2015-2016թթ համար մուտքագրվել են փաստացի տվյալները, իսկ 2017թթ. համար ցուցանիշները գնահատվել են 2016թ. համապատասխան ցուցանիշը գնաճով ինդեքսավորելու միջոցով:

ՆԵՐԴԻՐ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ. ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Աշխատանքային կենսաթոշակի հաշվարկման բանաձևն է.

- Մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի դեպքում.

Կ=Հ + (Ս X Ա) X Գ,

- 10 տարուց ավելի աշխատանքային ստաժի դեպքում.

Կ=Հ+ (10 X Ա+(Ս-10) X Ա1) X Գ

Որտեղ.

Կ-կենսաթոշակի ամսական գումարը,
Հ-հիմնական կենսաթոշակի չափը,
Ս-աշխատանքային ստաժի տարիները,
Ա-մինչև 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,
Ա1-10 տարին գերազանցող աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը,
Գ-կենսաթոշակառուի անձնական գործակիցը:

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

- Մինչև **10** տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի դեպքում.

Գ=0.1 X Ս,

- 11-ից 40 (ներառյալ) աշխատանքային ստաժի դեպքում.

Գ=1+0.01 X (Ս-10)

- **40** տարուց ավելի աշխատանքային ստաժի դեպքում.

Գ=1.3+0,02 X (Ս-40):

Կենսաթոշակառուի անձնական գործակիցը չի կարող գերազանցել **2**-ը:

- **Նվազագույն աշխատանքային կենսաթոշակ**. ցուցանիշը բնութագրում է շահառուներին տրամադրվող աշխատանքային կենսաթոշակի ամենացածր մակարդակը: Այս ցուցանիշի ձևակերպման հետ առարկություն ունիեն ՀՀ ԱՍՀ կենսաթոշակային ապահովության վարչության ներկայացուցիչները: Վերջիններիս կարծիքով նվազագույն կենսաթոշակը դա հենց հիմնական կենսաթոշակն է, որից ցածր աշխատանքային կենսաթոշակ չի վճարվում: Եթե որպես հիմք ընդունվեն կենսաթոշակի նշանակման իրավունակության օրենքով սահմանված պահանջները, ապա 63 տարին լրացած անձին տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում: Քանի որ աշխատանքային կենսաթոշակը հաշվարկվում է հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի տարիների ու անհատական գործակցի հիման վրա (համաձայն ներդիր 3-ում բերված բանաձևի), ուստի տրամադրվող աշխատանքային կենսաթոշակի ամենացածր չափը 2014թ., օրինակ, պետք է կազմեր 24000 դրամ, մինչդեռ փաստացի այն կազմում է 14280 դրամ: Աշխատանքային կենսաթոշակի հաշվարկային և

փաստացի տրամադրվող ամենցածր չափերի միջև այս տարբերությունը բացատրվում է հետևյալով.

- մինչև 2012թ.-ը տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող նվազագույն աշխատանքային ստաժը 5 տարի էր, սկսած 2012թ. այն աստիճանաբար բարձրացվել և 2016թ.-ից կազմում է 10 տարի, 2014թ., օրինակ, պահանջվող ստաժը կազմել է 8 տարի: Սա նշանակում է, որ տարիքային աշխատանքային կենսաթոշակառուների մեջ կան կենսաթոշակառուներ, ովքեր ունեն 5-10 տարվա աշխատանքային ստաժ;
- հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է, եթե հաշմանդամության կենսաթոշակ նշանակելու համար դիմելու ժամանակ անձն ունեցել է պահանջվող նվազագույն ստաժ. մինչև 23 տարեկանների համար նվազագույն ստաժը 2 տարի է, 23-26 տարեկանների համար՝ 3 տարի, և յուրաքանչյուր հաջորդ տարիքային խմբի համար ստաժի պահանջվող տարիները ավելանում են մեկով և 44 և բարձր տարիքի շահառուների համար կազմում են 10 տարի;
- կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային կենսաթոշակի տրամադրման համար պահանջվող ստաժի տարիներն ըստ տարիքային խմբերի նույնն են, ինչ և հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի դեպքում:

Այսպիսով, աշխատանքային կենսաթոշակառուների մեջ կան կենսաթոշակառուներ, ովքեր ունեն նվազագույն 2 տարվա ստաժ, ինչն էլ բերել է նրան, որ փաստացի տրամադրվող աշխատանքային կենսաթոշակի ամենցածր չափը 2014թ. մոտ 2 անգամ ցածր է հաշվարկայինից:

2015-2017թթ. ցուցանիշը գնահատելու համար ՀՀ ՍԱՊԾ կողմից տրամադրված 2014թ. փաստացի մակարդակը ինդեքսավորվել է գնաճով:

2. Աշխատավարձի մակարդակը բնութագրող ցուցանիշներ. այս ցուցանիշները ներառվել են ՄԳ ցուցանիշների շրջանակում տրամադրվող աշխատանքային կենսաթոշակի համարժեքության մակարդակը բնութագրող մի շարք ցուցանիշների հաշվարկման և ծրագրի առջև դրված խնդիրների գնահատման նպատակով:

- **Միջին ամսական անվանական աշխատավարձ**. 2015թ. համար մուտքագրվել է միջին ամսական անվանական աշխատավարձի նախնական մակարդակը, որը ստացվել է ՀՀ ԱՎԾ-ից՝ ԱԽ պաշտոնական գրությանն ի պատասխան: 2016-2017թթ. համար կատարվել է միջին ամսական անվանական աշխատավարձի գնահատում՝ նախորդ տարվա միջին ամսական անվանական աշխատավարձը գնաճով ինդեքսավորելու միջոցով: 2012-2014թթ.-ի պատմական տվյալները առկա են ՀՀ ԱՎԾ վեբ կայքից՝ Հիմնական վիճակագրական տվյալներ բաժնում www.armstat.am
- **Տնօրինվող աշխատավարձ**. սա հաշվարկային ցուցանիշ է: Այն հաշվարկվել է միջին ամսական անվանական աշխատավարձի նկատմամբ եկամտային հարկի համապատասխան դրույքաչափերը կիրառելու միջոցով (տես Ներդիր 4-ը): Աշխատանքային կնեսաթոշակների համարժեքությունը համեմատվել է տնօրինվող աշխատավարձի նկատմամբ:

- **Նվազագույն աշխատավարձի չափը** սահմանվում է «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքով: Համաձայն օրենքի նվազագույն ամսական աշխատավարձը 2015թ. հուլիսի 1-ից կազմել է 55,000 դրամ, իսկ 2012-2014թթ. աշխատավարձի սահմանված նվազագույն չափի վերաբերյալ տեղեկատվությունն ըստ տարիների ստացվել է ՀՀ ԱՎԾ կողմից յուրաքանչյուր տարի հրապարակվող «Հայաստանի վիճակագրական տարեգրքի» «Կենսամակարդակ բաժնից (http://www.armstat.am/file/doc/99489188.pdf): ՄԳ ցուցանիշների մուտքագրման փուլում արդեն հայտնի էր, որ 2016թ. նվազագույն աշխատավարձը պահպանվելու է 2015թ. մակարդակի վրա, այդ իսկ պատճառով էլ 2017թ. համար որպես թիրախ է է սահմանվել «2015-2017թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրով» 2016թ. համար սահմանված մակարդակը՝ 60,000 դրամը:

ՆԵՐԴԻՐ 4. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տնօրինվող աշխատավարձը եկամտային հարկը վճարելուց հետո աշխատողի տրամադրության տակ մնացող գումարն է, իսկ եկամտային հարկը հաշվարկում է հետևյալ դրույքաչափերով.

Ամսական անվանական աշխատավարձը, դրամ	*Հարկի դրույքաչափը*
Մինչև 120,000 դրամ	24.4%
120,00 -2, 000,000 դրամ	29280 դրամ + 120000 դրամը գերազանցող գումարի 26%-ը
2,000,000 դրամից ավելի	518080 դրամ + 2,000,000 դրամը գերազանցող գումարի 36%-ը

3. Աղքատության և կենսաապահովման նվազագույն զամբյուղի արժեքները բնակչության կենսամակարդակը բնութագրող հիմնական ցուցանիշներն են: Այս խմբի ցուցանիշների վերաբերյալ փաստացի տեղեկատվության աղբյուրը ՀՀ ԱՎԾ-ն է («ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը հունվար-դեկտեմբերին» զեկույց, Հավելված 2, http://www.armstat.am/en/?nid=82&id=1638) և «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» պարբերականը http://armstat.am/am/?nid=82&id=1718: 2015-2017թթ. համար ցուցանիշների արժեքը գնահատվել է գնաճով ինդեքսավորելու միջոցով:

- **Աղքատության գիծը** ՆՍԶ-ի ամսական արժեքն է՝ հաշվարկած ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա, ըստ փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի (տես Ներդիր 5-ը)։

> ***ՆԵՐԴԻՐ 5. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳԻԾ***
>
> Աղքատության գիծը սահմանվում է որպես նվազագույն սպառողական զամբյուղի դրամական արժեք, որը հասարակությունում ձևավորված կյանքի նվազագույն մակարդակ ապահովող ապրանքների ու ծառայությունների համադրությունն է:
>
> Ազգային աղքատության գիծը կարող է կիրառվել սոցիալական աջակցության ծրագրերի աղքատության վրա ունեցած ազդեցությունը գնահատելու համար:

- **Նվազագույն սպառողական զամբյուղ**. զամբյուղի արժեքը հաշվարկված է ըստ ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի և կառուցվածքի։
- **Ծայրահեղ աղքատության գիծը** բնութագրում է պարենային զամբյուղի ամսական արժեքը՝ հաշվարկած ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա։
- - **Ծայրահեղ աղքատության գծից ցածր կենսաթոշակ սաացող շահառուների թվաքանակը** այն ցուցանիշն է, որի փոփոխությունը պատկերացում է տալիս, թե որքանով է Ծրագիրը նպաստում ծայրահեղ աղքատության հաղթահարմանը։ Ցուցանիշի վերաբերյալ փաստացի տեղեկատվությունը 2012-2014թթ. համար տրամադրվել է ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից։

Ցուցանիշի արժեքը 2015-2017թթ. պահպանվել է հաստատուն՝ 2014թ. մակարդակի վրա, քանի որ կանխատեսումներ կատարելու համար անհրաժեշտ է կատարել բազմագործոն խորը վերլուծություն՝ վերլուծել կենսաթոշակների բարձրացման պետական քաղաքականությունը (ըստ «ՀՀ 2016-2018թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրում» արտացոլված ցուցանիշների 2016-2017թթ. աշխատանքային միջին կենսաթոշակի աճի տեմպերն էապես ցածր են լինելու 2014-2015թթ. աճի տեմպերից), աշխատանքի շուկայի և մակրոտնտեսական իրավիճակի միտումները, և այլն, իսկ ՄԳ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և կանխատեսումների իրականացման փուլում անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը հասանելի չէր։

4. Աշխատանքային կենսաթոշակի համարժեքությունը բնութագրող հարաբերական ցուցանիշներ. այս խմբի ցուցանիշները բնութագրում են գործող կենսաթոշակային համակարգի համարժեքությունը՝ որքանով է գործող կենսաթոշակային համակարգը լուծում իր առջև դրված խնդիրը. փոխհատուցում կորցված աշխատանքային եկամուտը, նպաստում աղքատության հաղթահարմանն ու կենսամակարդակի ոչ կտրուկ անկմանը և այլն։ Այս ցուցանիշները հաշվարկային բնույթի են.

- Աշխատանքային միջին կենսաթոշակ/միջին (տնօրինվող) աշխատավարձ հարաբերակցությունը,

- Աշխատանքային միջին կենսաթոշակ/նվազագույն աշխատավարձ հարաբերակցությունը,
- Աշխատանքային միջին կենսաթոշակ/ աղքատության գիծ հարաբերակցությունը,
- Աշխատանքային միջին կենսաթոշակ/ ՆՍԶ հարաբերակցությունը,
- Նվազագույն աշխատանքային կենսաթոշակ/աղքատության գիծ հարաբերակցությունը:

Ոլորտ 6: Կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետությունը

Այս ոլորտի ցուցանիշները հիմնականում վերաբերում են աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի իրականացման հետ կապված ՀՀ ՍԱՊԾ գործունեությանը: Ցուցանիշների միջոցով տեղեկատվություն է հավաքագրվում աշխատանքային կենսաթոշակներ նշանակելու, վերահաշվարկելու, դադարեցնելու և շահառուների հարցադրումներին արձագանքելու ՀՀ ՍԱՊԾ գործառույթների վերաբերյալ: Տվյալների աղբյուրը ՀՀ ՍԱՊԾ-ն է:

ՄԳ ցուցանիշների շրջանակում ներառված են հետևյալ ցուցանիշները:

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի բնույթը	Առկայության կարգավիճակը
1. Տարվա ընթացքում առաջին անգամ կենսաթոշակ ստանալու համար դիմած շահառուների թվաքանակը, մարդ այդ թվում ըստ կենսաթոշակի տեսակի,	Տեղեկատվական	Ստացվել է
2. Տվյալ տարում առաջին անգամ կենսաթոշակ ստացողների թիվը, մարդ, այդ թվում ըստ կենսաթոշակի տեսակի	Տեղեկատվական	Ստացվել է
3. Աշխատանքային կենսաթոշակների նշանակման հետ կապված բողոք դիմումների թիվը, այդ թվում ըստ կենսաթոշակի տեսակի	Տեղեկատվական	Ստացվել է միայն ամփոփ թիվը
4. Աշխատանքային կենսաթոշակների նշանակման հետ կապված բավարարված բողոք դիմումների թիվը, ընդամենը	Թիրախային	Առկա չէ
5. Աշխատանքային կենսաթոշակների նշանակման ժամկետների խախտման դեպքերի թիվը, այդ թվում ըստ դիմումը ընդունելու և նշանակելու միջին տևողության, կենսաթոշակի նշանակման 10-օրյա ժամկետը գերազանցող դեպքերի թիվը	Թիրախային	Կարիք կա մեթոդաբանության պարզաբանման
6. Աշխատանքային կենսաթոշակների նշանակման համար փաստացի ստաժի սխալ հաշվարկված դեպքերի թիվը, այդ թվում ըստ պատճառների	Թիրախային	Առկա չէ
7. Աշխատանքային կենսաթոշակի վերահաշվարկման համար ստացված դիմումների ընդհանուր թիվը, այդ թվում. (տարիքային, հաշմանդամության)	Թիրախային	Ստացվել է
8. Դիմումի հիման վրա աշխատանքային կենսաթոշակների վերահաշվարկման միջին	Թիրախային	Ստացվել է

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի բնույթը	Առկայության կարգավիճակը
տևողությունը օրերով, այդ թվում. (տարիքային, հաշմանդամության)		
9. Աշխատանքային կենսաթոշակների վերահաշվարկման համար փաստաթղթերի անհամապատասխանության դեպքերի թիվը	Կանխատեսվող	Առկա չէ
10. Աշխատանքային կենսաթոշակների վերահաշվարկման հետ կապված բողոք դիմումների թիվը, այդ թվում ըստ տեսակի	Կանխատեսվող	Առկա չէ
11. Աշխատանքային կենսաթոշակների վերահաշվարկման հետ կապված բավարարված բողոք դիմումների թիվը, այդ թվում ըստ տեսակի	Կանխատեսվող	Առկա չէ
12. Տարվա ընթացքում աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի թիվը ընդամենը, այդ թվում. ըստ տեսակի	Տեղեկատվական	Առկա չէ
13. Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի թիվը ըստ պատճառների	Տեղեկատվական	Ստացվել է
14. Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման համար անհրաժեշտ փաստաթղթերի անհամապատասխանության դեպքերի թիվը,	Կանխատեսվող	Ստացվել է
15. Տարվա ընթացքում աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնման դեպքերի թիվը,	Տեղեկատվական	Առկա չէ
16. Աշխատանքային կենսաթոշակներ ստանալու իրավունքի վերականգնման միջին տևողությունը օրերով	Կանխատեսվող	Ստացվել է
17. Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման հետ կապված բողոք դիմումների ընդհանուր թիվը	Կանխատեսվող	Առկա չէ
18. Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման հետ կապված բավարարված բողոք դիմումների ընդհանուր թիվը	Կանխատեսվող	Առկա չէ
19. Տարվա ընթացքում աշխատանքային կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերի թիվը, այդ թվում ըստ տեսակի	Տեղեկատվական	Ստացվել է
20. Աշխատանքային կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերը ընդամենը, այդ թվում ըստ պատճառների.	Տեղեկատվական	Ստացվել է
21. Աշխատանքային կենսաթոշակների վճարումը դադարեցնելու հետ կապված բողոք դիմումների ընդհանուր թիվը	Տեղեկատվական	Առկա չէ
22. Աշխատանքային կենսաթոշակների վճարումը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի անհամապատասխանության դեպքերի թիվը	Կանխատեսվող	Առկա չէ

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի բնույթը	Առկայության կարգավիճակը
23. Տարվա ընթացքում աշխատանքային կենսաթոշակների վճարումը վերսկսելու դեպքերի թիվը, այդ թվում. ըստ տեսակի	Տեղեկատվական	Ստացվել է
24. Աշխատանքային կենսաթոշակների վճարումն վերսկսելու համար անհրաժեշտ փաստաթղթերի՝ անհամապատասխանության դեպքերի թիվը	Կանխատեսվող	Առկա չէ
25. Աշխատանքային կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հետ կապված բողոք դիմումների ընդհանուր թիվը	Կանխատեսվող	Առկա չէ
26. Աշխատանքային կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հետ կապված բավարարված բողոք դիմումների ընդհանուր թիվը	Կանխատեսվող	Առկա չէ
27. Աշխատանքային կենսաթոշակի վճարումը վերսկսելու միջին ժամկետը. օր	Կանխատեսվող	Ստացվել է

Հարկ է նշել, որ այս բաժնի ցուցանիշների գերակշիռ մասը հնարավոր է չի եղել ստանալ մինչև 2014թ.-ը ժամանակահատվածի համար, քանի որ միայն նոր՝ Էլ-կենսաթոշակ ծրագրային ապահովման ներդրմամբ է հնարավոր եղել տեղեկատվական շտեմարանից ստանալ այդ տվյալները: ՄԳ ցուցանիշներից տեղեկատվություն ստացվել է 12 ցուցանիշների և նրանց ենթաբաղադրիչների վերաբերյալ: Եվս երկու ցանիշների մասով տեղեկատվությունն առկա էր մասամբ, հետագայում կարիք կա այդ ցուցանիշների մասին տեղեկատվության ձևաչափը հստակեցնել; Մնացած 13 ցուցանիշների մասին (տես վերը բերված աղյուսակը) տեղեկատվությունը SS համակարգում չի տարվում: Մանրամասն պարզաբանումները հաջորդիվ:

Այս բաժնի ցուցանիշների հավաքագրման հետ կապված ԱԽ-ը հանդիպել է մի շարք դժվարությունների.

Նախ շահառուների կողմից ստացված դիմում բողոքների մասին տեղեկատվությունը համակարգում չի դասակարգվում, և հնարավոր չէ ստանալ թե որ գործառույթի և որ տեսակի կենսաթոշակի մասին է ստացվել բողոք/դիմումը: Ակնհայտ է, որ շահառուներին մատուցվող ծառայությունների որակի օբյեկտիվ գնահատական կարելի է ստանալ միայն ծառայության վերաբերյալ ստացված բողոք/դիմումների, դրանց բովանդակության վերլուծության հիման վրա: Այս պահի դրությամբ, գործող համակարգի միջոցով նման տեղեկատվություն ստանալ հնարավոր չէ: Համակարգը հաշվառում է շահառուներից ստացված գրությունները և այդ գրություններին տրված պատասխանները, առանց բովանդակության դասակարգման: Դիմում/բողոքների բովանդակությունը առանձին ուսումնասիրվում է ՀՀ ՍԱՊԾ կենսաթոշակային ապահովության վարչության կողմից, որի հիման վրա առաջարկություններ են արվում ծառայության վարչարարության վերաբերյալ փոփոխություններ և/կամ նոր կարգավորումներ մշակելու համար: Սակայն նման դեպքերի հստակ հաշվառում չի տարվում:

Երկրորդ դժվարությունը կապված էր տվյալների ժամանակայնության հետ. տվյալների մեծ մասը ՀՀ ՍԱՊԾ աշխատողները կարողացել են տրամադրել պահի դրությամբ՝ օրինակ 2014թ.-ի դեկտեմբերի դրությամբ, **քանի որ համակարգը հնարավորություն չի ստեղծում կումուլյատիվ տեղեկատվություն պահպանել:** Իսկ մշտադիտարկման և ծրագրի կատարողականի գնահատման համար կարևոր է ունենալ միջին տարեկան ցուցանիշը: Այդ խնդիրը հնարավոր է լուծել եթե առաջարկվող մշտադիտարկման շրջանակը դրվի կիրառության մեջ և տվյալների համար պատասխանատուն ամեն ամիս հավաքագրի այդ ցուցանիշների մասին տեղեկատվությունը և տարվա վերջում դուրս բերի միջին տարեկան ցուցանիշը:

Դժվարությունների հաջորդ խումբը կապված էր հենց ցուցանիշի տեսակի հետ. վարչական խախտումների մասին տվյալները համակարգում չեն հաշվառվում, դրանք հնարավոր է դուրս բերել միայն վերահսկողական ստուգումների կամ աուդիտի (ՀՀ ՍԱՊԾ-ի կամ ՀՀ ԱՍՀՆ Մոնիտորինգի և վերլուծության վարչության կողմից իրականացվող) արդյունքում. նման ցուցանիշները, թեև անմիջապես վերաբերում են ծրագրի վարչարարության արդյունավետությանը, հնարավոր չի եղել ստանալ առաջարկվող մեթոդաբանության փորձարկման շրջանակում: Որպես առաջարկություն նման ցուցանիշների ստացման համար կարելի է նշել վարչական ստուգումների/աուդիտի արդյունքերի վերաբերյալ տեղեկատվության հաշվառումը:

Այս բաժնում կանխատեսումներ կատարվել են միայն հետևյալ ցուցանիշների համար.

- Աշխատանքային կենսաթոշակների նշանակման հետ կապված բողոք դիմումների թիվը - ՀՀ ՍԱՊԾ-ից ստացվել է ցուցանիշի ընդհանուր տվյալը, ենթաբաղադրիչների մասին՝ ըստ կենսաթոշակի տեսակների, տեղեկատվությունն առկա չէ: Քանի որ ցուցանիշի համար տրամադրվել է նաև 2012-2014թթ-ի տվյալները, ապա ցուցանիշի փոփոխությունը 2015-2017թթ.-ի համար կատարվել է այն ենթադրությամբ, որ բողոք դիմումների թիվը տարեկան կնվազի 10 տոկոսով: ԱԽ հետ քննարկումների ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ կանխատեսումներ կատարվելու են միայն ամփոփ ցուցանիշների համար:
- Կենսաթոշակի դիմումը ընդունելու և նշանակելու միջին տևողությունը օրերով - այս ցուցանիշի տեղեկատվությունը 2012-2013թթ.-ի համար բացակայում է: Այդուհանդերձ ցուցանիշի կանխատեսում/թիրախավորում կատարվել է հիմք ընդունելով օրենսդրությունը: Ըստ կարգի, կենսաթոշակ պետք է նշանակվի դիմումն ընդունելուց 10 օրյա ժամկետում: Ուստի որպես թիրախ ընդունվել է 10 օրը:
- Կենսաթոշակի նշանակման 10-օրյա ժամկետը գերազանցող դեպքերի թիվը - այս ցուցանիշի համար տեղեկատվությունը 2012-2013թթ. համար բացակայում է: ՀՀ ՍԱՊԾ տեղեկատվություն տրամադրել է միայն 2014թ.-ի համար և նշել, որ ցուցանիշի հաշվարկման մեջ ներառված են նաև ոչ աշխատանքային օրերը: Քանի որ ցուցանիշը թիրախային է, ենթադրվել է, որ 2015-2017թթ. յուրաքանչյուր տարի՝ նախորդ տարվա նկատմամբ նման դեպքերի թիվը կնվազի 25%-ով:

Այս բաժնի տվյալների վերլուծության ժամանակ Ծրագրի վարչարարության արդյունավետության մասին եզրահանգումները կատարվել են առկա տեղեկատվության հիման վրա՝ առաջարկություններ տալով տվյալների ցանկի և ստացման մոտեցումների մասին:

Ոլորտ 7: Աշխատանքային կենսաթոշակառուների բարեկեցությունը և եկամտի աղբյուրը

Ցուցանիշների այս խումբը հնարավորություն է տալիս գնահատել կենսաթոշակառու ունեցող ընտանիքների եկամտի աղբյուրները, այդ եկամտում կենսաթոշակի մասնաբաժինը և կենսաթոշակառուների և կենսաթոշակառու ունեցող ընտանիքների աղքատության մակարդակը: Առավել կարևոր ցուցանիշն այս բաժնում, դա կենսաթոշակների ազդեցությունն է կենսաթոշակ ստացող տնային տնտեսությունների աղքատության մակարդակի վրա:

Այս բաժնի ցուցանիշները հիմնականում հնարավոր է ստանալ ՀՀ ԱՎԾ կողմից ամեն տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) տեղեկատվական բազաներից: Այն հնարավոր է ներբեռնել ՀՀ ԱՎԾ վեբ կայքից՝ անմիջապես ՀՀ ԱՎԾ կողմից «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ամենամյա զեկույցների հրապարակումից հետո (առավելապես ամեն տարի նոյեմբեր ամիսներին http://www.armstat.am/am/?nid=246):

Աշխատանքային կենսաթոշակառուների բարեկեցության գնահատման համար ԱԽ անդամներն առանձնացրել են 13 անուն ցուցանիշներ, որոնցից 11-ը ստացվում է ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ-ի միջոցով: Աշխատող աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակը և նրանց աշխատավարձի միջին ամսական չափը հնարավոր է ստանալ ՀՀ ՍԱՊԾ տեղեկատվական շտեմարանից: Սակայն տվյալների հավաքագրման այս փուլում ՀՀ ՍԱՊԾ-ն տրամադրել է միայն աշխատող կենսաթոշակառուների թվաքանակը 2012-2014թթ.-ի համար, իսկ նրանց թվաքանակը 2015թ.-ի համար և միջին աշխատավարձի չափը դիտարկվող ժամանակահատվածի համար չի տրամադրվել: Այս ցուցանիշները տեղեկատվական են և չեն ազդում Ծրագրի արդյունավետության վրա, ուստի ԱԽ անդամները կարող են որոշել նման տեղեկատվության ստացման անհրաժեշտությունը, եթե այն հաշվարկելու համար ՀՀ ՍԱՊԾ կողմից պահանջվում է երկար ժամանակ, ապա կարելի է այդ ցուցանիշները հանել ՄԳ շրջանակից:

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի բնույթը	Առկայության կարգավիճակը
1. Աշխատանքային կենսաթոշակառու ունեցող ընտանիքների թիվն ըստ եկամտի աղբյուրների	Տեղեկատվական	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
2. Աշխատանքային կենսաթոշակառու ունեցող ընտանիքների միջին եկամուտն ըստ աղբյուրների	Տեղեկատվական	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
3. Կենսաթոշակառու ունեցող ընտանիքի միջին սպառումը, դրամ ամսական	Տեղեկատվական	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի բնույթը	Առկայության կարգավիճակը
4. Կենսաթոշակառու ունեցող և աղքատության գծից ցածր եկամուտ ունեցող ընտանիքների թիվը	Տեղեկատվական	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
5. Կենսաթոշակառու ունեցող և ծայրահեղ աղքատության գծից ցածր եկամուտ ունեցող ընտանիքների թիվը	Տեղեկատվական	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
6. Աղքատության մակարդակ, %	Կանխատեսվող	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
7. Ծայրահեղ աղքատության մակարդակ %	Կանխատեսվող	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
8. Աղքատության մակարդակը կենսաթոշակառու ունեցող ընտանիքներում (հետտրանսֆերտային մակարդակ), %	Թիրախային	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
9. Կենսաթոշակային եկամտի ազդեցությունը ընտանիքի աղքատության մակարդակի վրա (նախատրասնֆերտային աղքատության մակարդակը), %	Տեղեկատվական	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
10. Ծայրահեղ աղքատության մակարդակը կենսաթոշակառու ունեցող ընտանիքներում (հետտրանսֆերտային մակարդակ), %	Թիրախային	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
11. Կենսաթոշակային եկամտի ազդեցությունը ընտանիքի ծայրահեղ աղքատության մակարդակի վրա (նախատրասնֆերտային աղքատության մակարդակը), %	Տեղեկատվական	Առկա է ՀՀ ԱՎԾ-ից միայն 2012-2014թթ.-ի համար
12. Աշխատող աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակը, հազ. մարդ	Տեղեկատվական	Առկա է միայն 2012-2014թթ.-ի համար
13. Աշխատող աշխատանքային կենսաթոշակառուների միջին աշխատավարձը, դրամ	Տեղեկատվական	ՀՀ ՍԱՊԾ-ից չի ստացվել

Այս բաժնի ցուցանիշների շարքից ծրագրի համար թիրախային են երկուսը՝ աղքատության մակարդակը կենսաթոշակառու ունեցող ընտանիքներում (աղքատության հետտրանսֆերտային մակարդակը %), և ծայրահեղ աղքատության մակարդակը կենսաթոշակառու ունեցող ընտանիքներում (ծայրահեղ աղքատության հետտրանսֆերտային մակարդակը %): Այս ցուցանիշների համար 2015-2017թթ. թիրախները սահմանվում են հիմք ընդունելով աղքատության մակարդակի և ծայրահեղ աղքատության մակարդակի կրճատման թիրախները: Նույն համամասնությամբ հաշվարկվել են կենսաթոշակառու ունեցող ընտանիքներում աղքատության/ծայրահեղ աղքատության կրճատման 2015-2017թթ. թիրախները:

Աղքատության մակարդակը և ծայրահեղ աղքատության մակարդակը կանխատեսվող ցուցանիշներ են: Այս ցուցանիշների կանխատեսումները հաշվարկվել են հիմք ընդունելով ՀՀ 2014-2025 թթ. ՀՀ Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նախատեսված աղքատության մակարդակները. 2017թ. նախատեսվում էր այն

հասցնել 24%-ի, 2021թ.՝ 18%-ի, 2025թ.՝ 13%-ի (էջ 116)։ 2015-2016թթ. համար ցուցանիշի թիրախները հաշվարկվել են գծային ինտերպոլացիայի միջոցով՝ նվազեցվել է տարեկան 2%-ով։

Նույն ռազմավարական ծրագրում կանխատեսված է նաև ծայրահեղ աղքատության մակարդակը. նախատեսված է 2017թ. այն հասցնել 2.4%-ի, 2021թ.՝ 2.1%-ի, 2025թ.՝ 1.8%-ի (էջ 116)։ Հիմք ընդունելով այս տվյալները 2015-2016թթ. համար ծայրահեղ աղքատության ցուցանիշի թիրախները հաշվարկվել են գծային ինտերպոլացիայի միջոցով՝ նվազեցվել է տարեկան 0.2%-ով։

Այս բաժնի մնացած բոլոր ցուցանիշները տեղեկատվական են. դրանք չեն ազդում ծրագրի արդյունավետության վրա, չեն պայմանավորում ծրագրի կատարողականը, սակայն աշխատանքային կենսաթոշակ ստացող տնային տնտեսությունների վերաբերյալ ձևավորում են մակրոտնտեսական պատկեր։

Այցելելով ՀՀ ԱՎԾ վեբկայք՝ http://www.armstat.am/am/?nid=246 Վիճակագրական տեղեկատվական բազաներ էջից պետք է ընտրել Տնային տնտեսությունների հետազոտություն ենթավերնագիրը, որի տակ բերված են հետազոտության գործիքները՝ հարցաշարը և օրագիրը և այդ գործիքների տեղեկատվական բազաները՝ ընդհանուր տնային տնտեսության համար ստացված տեղեկատվությամբ և տնային տնտեսության անդամների վերաբերյալ ստացված տեղեկատվությամբ։ Տվյալներն առկա են և Ecell և SPSS ձևաչափով։

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության իրականացման մեթոդաբանության առանձնահատկությամբ պայմանավորված, ամփոփ տվյալները հասանելի են լինում հետազոտության իրականացմանը հաջորդող տարվա երրորդ եռամսյակի ընթացքում։ Հետազոտությունը ընթանում է ամբողջ տարվա ընթացքում՝ ամեն ամիս հետազոտվող տնային տնտեսությունների ռոտացիայով և ամեն եռամսյակ բնակավայրերի ռոտացիայով, այդպիսով ընդգրկելով երկորի բոլոր մարզերը, մեծ քաղաքները և մեծ գյուղերը. Միջին հաշվով տարեկան հետազոտվում է 5000-ից ավել տնային տնտեսություն։ Հետազոտության ընտրանքը ներկայացուցչական է գյուղ/քաղաք կտրվածքով, և բացի Վայոց Ձորի մարզից[12] նաև մարզերի մակարդակով։

Հետազոտվող ընտանիքը մեկ ամիս լրացնում է եկամուտների, ծախսերի և սպառման վերաբերյալ օրագիր, իսկ հարցազրուցավարի կողմից ամսվա ընթացքում կատարած 4-5 այցելությունների ժամանակ լրացվում է հետազոտության հարցաշարը՝ հավաքելով ընտանիքի բոլոր անդամների սոցիալ-տնտեսական կարգավիճակի, կրթության և զբաղվածության մասին տեղեկատվություն։

ՀՀ ԱՎԾ-ն ստացված տեղեկատվությունը ամփոփելով մշակում է երկու տեղեկատվական բազա՝ տվյալ տարվա հետազոտության տարեթվով նշված բազայի մեջ պարունակվում է տնային տնտեսության մակարդակի տեղեկատվությունը՝ անդամների

[12] Վայոց Ձորի մարզի բնակչության փոքր թվի պատճառով հավասարակշռված ընտրանքի ձևավորման ժամանակ այդ մարզից քիչ թվով տնային տնտեսություններ են ներառվում հետազոտության ընտրանքում»

թիվը, եկամտի աղբյուրները, եկամտի չափը, ծախսերը և սպառումը, ծառայություններից օգտվելը, կենցաղային պայմանները, և այլն: «Present members of household2014[13]» անվանումով բազայում ամփոփվում է բոլոր անդամների մասին տեղեկատվությունը՝ սեռը, տարիքը, սոցիալ տնտեսական կարգավիճակը, պատկանելիությունը տարբեր սոցիալական խմբերի:

Աշխատանքային կենսաթոշակառու ունեցող տնային տնտեսություններն առանձնացնելու համար նախ աշխատանք է տարվում «Present members of household2014» ֆայլի հետ, որտեղ a2_1; a2_2 և a2_3 փոփոխականների 5-10 արժեքները համապատասխանում են աշխատանքային կենսաթոշակառուների կատեգորիաներին: Բազայում ընտրելով այդ պայմանին համապատասխանող դեպքերը, ստեղծվում է բազայում նոր փոփոխական «Pensioners», որը հավասար է 1-ի, եթե a2_1 –ն ունի 5-10 արժեքներ; հավասար է 2՝ եթե a2_2-ն ունի 5-10 արժեքներ; և հավասար է 3-ի, եթե a2_3-ն ունի 5-10 արժեքներ: Այս հրամանի սինթեքսը հետևյալն է.

```
IF  (a2_1 = 5 | a2_1 = 6 | a2_1 = 7 | a2_1 = 8 | a2_1 = 9 | a2_1 = 10) Pensioners=1.
EXECUTE.
IF  (a2_2 = 5 | a2_2 = 6 | a2_2 = 7 | a2_2 = 8 | a2_2= 9 | a2_2 = 10) Pensioners=2.
EXECUTE.
IF  (a2_3 = 5 | a2_3 = 6 | a2_3 = 7 | a2_3 = 8 | a2_3= 9 | a2_3 = 10) Pensioners=3.
EXECUTE.
```

Ապա ստեղծվում է «Pensioners_HH» փոփոխականը, որը հավասար է 1-ի, այսինքն տնային տնտեսությունն ունի կենսաթոշակառու անդամ, եթե «Pensioners» փոփոխականը մեծ է 1-ից՝

```
IF  (Pensioners >= 1) Pensioners_HH=1.
EXECUTE.
```

Միևնույն տնային տնտեսության մեջ կենսաթոշակառու անդամների թիվը հաշվարկելու համար ստեղծվում է նոր ագրեգացված փոփոխական՝ առանձին ֆայլում հետևյալ սինթաքսով.

```
DATASET DECLARE pensioners.
AGGREGATE
  /OUTFILE='pensioners'
  /BREAK=recno
  /Pensioners_HH_sum=SUM(Pensioners_HH)
  /N_BREAK=N.
DATASET ACTIVATE pensioners.
FREQUENCIES VARIABLES=Pensioners_HH_sum N_BREAK
  /ORDER=ANALYSIS.
USE ALL.
```

[13] USAID/PRIP ծրագիրն օգտագործել է SPSS ձևաչափով տեղեկատվական բազաները: Ամեն տարի այս ֆայլի անվանումը համապատասխանում է տվյալ տարվա հետազոտության տարեթվին:

Այնուհետև այս նոր շարքը միաձուլվում է տնային տնտեսությունների տեղեկատվական բազային (այս տեղեկատվական բազայի անվանումը հետազոտության տվյալ տարին է՝ օրինակ 2014), որպես բանալի փոփոխական օգտագործելով «recno» փոփոխականը:

Տնային տհտեսությունների տեղեկատվական բազայում առանձնացնելով այն տնային տնտեսությունները, որոնք ունեն եկամուտ զբաղվածությունից՝ աշխատավարձ կամ ինքնազբաղվածությունից, հաշվարկվում է կենսաթոշակառու անդամ ունեցող տնային տնտեսությունների հաճախականությունը.

```
COMPUTE filter_$=(y1_3drm.1 >= 1 | y1_3drm.2 >= 1).
VARIABLE LABELS filter_$ 'y1_3drm.1 >= 1 | y1_3drm.2 >= 1 (FILTER)'.
VALUE LABELS filter_$ 0 'Not Selected' 1 'Selected'.
FORMATS filter_$ (f1.0).
FILTER BY filter_$.
EXECUTE.
FREQUENCIES VARIABLES=Pensioners_HH_sum
  /ORDER=ANALYSIS
```

Այս հրամանի միջոցով ստացվում է զբաղվածությունից եկամուտ ունեցող տնային տնտեսությունների թիվը և մասնաբաժինը: **ՄԳ ցուցանիշների շրջանակում ԱԽ անդամները առաջարկել են ունենալ տնային տնտեսությունների թիվը, սակայն USAID/PRIP ծրագրի մասնագետների կարծիքով, այս բաժնի ցուցանիշները բացարձակ թվով ոչ մի արժեք չեն ներկայացնում: Պատկեր ստանալու համար հարկ է կիրառել մասնաբաժինները: Վերլուծության մասում այս բաժնի տեղեկատվությունը վերլուծվել է ցուցանիշների տոկոսային արժեքների կիրառմամբ:**

Նույն տրամաբանությամբ հաշվարկվում են ՄԳ ցուցանիշների շրջանակում առանձնացված եկամտի աղբյուրները՝ Եկամուտ ներդրումներից (y1_3drm.11 >= 1 | y1_3drm.12 >= 1 | y1_3drm.14 >= 1 | y1_3drm.18 >= 1 | y1_3drm.19 >= 1); Եկամուտ գյուղացիական տնտեսությունից (y1_3drm.10 >= 1); Աջակցություն Հայաստանում ապրող ընտանիքի այլ անդամներից (y1_3drm.15 >= 1); Տրանսֆերտներ արտասահմանից (y1_3drm.16 >= 1):

«DESCRIPTIVES STATISTICS» հրամանի միջոցով հաշվարկվում է այդ աղբյուրներից կենսաթոշակառու ունեցող ընտանիքների միջին եկամուտը.

```
EXECUTE.
DESCRIPTIVES VARIABLES=totincome y1_3drm.1 y1_3drm.2 y1_3drm.3 y1_3drm.4 y1_3drm.5
y1_3drm.6 y1_3drm.7 y1_3drm.8 y1_3drm.9 y1_3drm.10 y1_3drm.11 y1_3drm.12 y1_3drm.13
y1_3drm.14 y1_3drm.15 y1_3drm.16 y1_3drm.17 y1_3drm.18 y1_3drm.19 y1_3drm.22
y1_3drm.23
  /STATISTICS=MEAN STDDEV MIN MAX
```

Այս ցուցանիշների համար ևս բացարձակ թվերը արժեքավոր չեն, առավել կարևոր է գնահատել յուրաքանչյուր աղբյուրի մասնաբաժինը ընդամենը ընտանիքի եկամուտների մեջ: Վերլուծության ժամանակ կիրառվել են հարաբերական ցուցանիշները:

Կենսաթոշակառու ունեցող ընտանիքի միջին սպառումը հաշվարկելու համար մեկ շնչի հաշվով տնային տնտեսության սպառման ցուցանիշը բազմապատվում է տնային տնտեսության առկա անդամների թվով.

```
COMPUTE Total_consumption_HH=memnal * aec_r.
EXECUTE.
DESCRIPTIVES VARIABLES=Total_consumption_HH
  /STATISTICS=MEAN STDDEV MIN MAX.
```

«Կենսաթոշակառու ունեցող և աղքատության գծից ցածր եկամուտ ունեցող ընտանիքների թիվը» և «Կենսաթոշակառու ունեցող և ծայրահեղ աղքատության գծից ցածր եկամուտ ունեցող ընտանիքների թիվը» ցուցանիշները համապատասխանաբար կենսաթոշակառու ունեցող աղքատ և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններն են: Այս տվյալները հաշվարկելու համար ընտրվում են կենսաթոշակառու ունեցող տնային տնտեսությունները և հրաման է տրվում «poor» փոփոխականի հաճախականությունը ստանալու համար: **Այստեղ ևս առաջարկվում է բացարձակ թվերի փոխարեն կիրառել հարաբերական ցուցանիշները:**

Ակնհայտ է, որ նման նկարագրությունը բավարար չէ նշված տեղեկատվական բազաներից անհրաժեշտ ցուցանիշները ստանալու համար, եթե կիրառողը ծանոթ չէ ՀՀ ԱԿԾ ՏՏԿԱՀ տեղեկատվական բանազներին: Ուստի մեթոդաբանությունը կիրառելու համար անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան մասնագետների վերապատրաստում:

Ոլորտ 8: Կենսաթոշակառուների բավարարվածությունը մատուցվող ծառայություններից

Այս ոլորտի ցուցանիշները ևս համարվում են ծրագրի արդյունավետության անուղղակի գնահատականներ: Հավաքագրվող ցուցանիշների հիման վրա հնարավոր է դառնում գնահատել ինչպես շահառուների գոհունակության աստիճանը, այնպես էլ ծրագիրն իրականացնող անձնակազմի գնահատականը առկա ռեսուրսների և գործիքների բավարար լինելուն՝ ծրագրի իրականացումը կազմակերպելու տեսանկյունից:

Կենսաթոշակառուների գոհունակության աստիճանը դիտարկվում է ըստ ստացվող կենսթոշակի տեսակի, կենսաթոշակի չափի ձևավորումից, կենսաթոշակի համար պահանջվող փաստաթղթերի ցանկից, վճարման ժամկետներից և տրամադրվող տեղեկատվությունից՝ ըստ բնակության վայրի: Ցուցանիշները հավաքագրվում են ընտրանքային հետազոտության միջոցով, այս փուլում հետազոտությունն իրականացվել է USAID/PRIP ծրագրի աջակցությամբ, իսկ հետագայում այդ հետազոտությունը կիրականացվի ՀՀ սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից:

Շահառուների շրջանում հետազոտությունն իրականացվել է 2015թ.-ի մայիս-հունիս ամիսներին: ՀՀ ՍԱՊԾ աշխատակիցների շրջանում հարցումները կազմակերպվել

են 2015թ.-ի հունիս ամսին: Միաժամանակ կենսաթոշակառուների թվաքանակով փոքր 4 խմբերից (երկարամյա ծառայության, արտոնյալ, մասնակի և կերակրողին կորցնելու) յուրաքանչյուրի ներկայացուցիչների հետ անց է կացվել երկուական ֆոկուս խումբ քննարկում՝ ընդհանուր թվով 8 ֆոկուս խումբ քննարկում:

Հետազոտությունների ընտրանքի ձևավորման և դաշտային աշխատանքների իրականացման մեթոդաբանության նկարագրությունը, ինչպես նաև օգտագործված հարցաշարերը առկա են «Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության» թիվ 1, թիվ 2 հաշվետվություններում (տես առդիր 3 և 4):

2016-2017թթ. համար այս ոլորտի ցուցանիշների արժեքի գնահատումը կամ կանխատեսումները կատարվել են համաձայն հետևյալ մոտեցման. եթե ցուցանիշի՝ հետազոտությամբ ստացված արժեքը կազմել է.

- մինչև 85%, ապա որպես թիրախ սահմանվել է ցուցանիշի բարելավումը տարեկան 5%-ով,
- 85% - 95%, ապա որպես թիրախ սահմանվել է ցուցանիշի բարելավումը տարեկան 3%-ով,
- 95% - 100%, ապա հաջորդ երկու տարիների թիրախները պահպանվել են նույն մակարդակի վրա:

Ոլորտ 9: Կենսաթոշակային համակարգին աջակցությունը հասարակության կողմից

Այս ոլորտի ցուցանիշների վերլուծությունը հնարավորություն է տալիս քաղաքականություն մշակողներին պատկերացում ունենալու կենսաթոշակների հաշվարկման, կենսաթոշակի չափի ձևավորման և համակարգի գործունեության մասին հասարակության տեղեկացվածության և ընկալման աստիճանի մասին: Ցուցանիշների արդյունքները կնպաստեն նաև համակարգի մասին հանրային իրազեկման միջոցառումների նպատակային իրականացման համար:

	Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի բնույթը
1	**Կենսաթոշակային համակարգի մասին հասարակության տեղեկացվածության աստիճանը, % այդ թվում**	Թիրախային
1.1	Կենսաթոշակի չափի հաշվարկման սկզբունքի իմացության աստիճանը	Թիրախային
1.2	Կենսաթոշակային իրավունքի ձևավորման պայմանների մասին իրազեկվածության աստիճանը	Թիրախային
1.3	Կենսաթոշակային համակարգի նկատմամբ հասարակության դրական վերաբերմունքի աստիճանը	Թիրախային

Այս բաժնի ցուցանիշները ստացվում են միայն հետազոտության միջոցով: Կարևոր է այս խմբի հարցերի համար պատասխաններ ստանալ ոչ թե կենսաթոշակառուներից այլ աշխատունակ տարիքի բնակչությունից, ուստի շահառուների գոհունակության հարցման

կազմակերպման ժամանակ, նույն ծախսերի շրջանակում, կարելի է հարցումը կազմակերպել կենսաթոշակառու ունեցող ընտանիքներում և միաժամանակ տեղեկատվություն հավաքել երկու թիրախային խմբերից՝ կենսաթոշակառուներից ստացած ծառայություններից գոհունակության աստիճանի մասին և նույն ընտանիքի աշխատունակ տարիքի բնակչությունից՝ համակարգի իրազեկվածության մասին:

Այս փուլում այս ոլորտի տվյալների հավաքագրումն իրականացվել է USAID/PRIP ծրագրի կողմից իրականացրած ընտրանքային հետազոտության շրջանում: Հետազոտության արդյունքներն ամփոփված էն «Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության» թիվ 3 զեկույցում (տես առդիր 5):

Տվյալները ՄԳ շրջանակում առկա են միայն 2015թ-ի համար, քանի որ հետազոտությունն իրականացվել է 2015թ-ին: ՄԳ համակարգի ներդրման պարագայում հանրային կարծիքի հետազոտություն կարելի է կազմակերպել 2 տարին մեկ անգամ, կամ սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող այլ հետազոտությունների հարցաշարերում ներառել նաև կենսաթոշակային համակարգի մասին տվյալներ՝ այս ցուցանիշների տվյալների հավաքագրման ծախսը նվազեցնելու համար:

Այս բաժնի բոլոր ցուցանիշները թիրախային են, քանի որ անուղակի կերպով արտացոլում են ծրագրի շրջանակում իրականացվող հանրային իրազեկման աշխատանքների արդյունավետությունը:

2016-2017թթ. համար կանխատեսումները/ցուցանիշի արժեքի գնահատումը կատարվել է հիմք ընդունելով այն ենթադրությունը, որ իրազեկվածության նման ցածր մակարդակը կարող է առավելագույնը տարեկան ավելանալ 5 տոկոսով: Իհարկե իրազեկման ակտիվ գործողությունների պարագայում հնարավոր է, որ իրազեկվածության մակարդակն ավելանա ավելի արագ տեմպերվ: Նման դեպքում այդ բացատրությունը կնշվի ՄԳ շրջանակի համապատասխան վանդակում:

Կիրառված մեթոդաբանությամբ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ արդյունքները ներկայացված են սույն հաշվետվության մաս 2-ում:

4. «ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ, ԾԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ, ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԱՐԳԵՎՃԱՐՆԵՐԻ, ՊԱՏՎՈՎՃԱՐՆԵՐԻ և ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» (ԿԱՐՃ՝ «ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ») ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

4.1. «Վճարման ծառայություններ» ծրագրի մշտադիտարկման փաստաթղթերը

Առաջարկվող մեթոդաբանության համաձայն, «Վճարման ծառայություններ» ծրագրի մշտադիտարկման փաստաթղթերն են՝

- **Ծրագրի տեղեկանքը**, որը մշակվել է ՀՀ ԱՍՀՆ կենսաթոշակային ապահովության վարչության կողմից, լրամշակվել է USAID/PRIP ծրագրի կողմից և հաստատվել է ԱԽ կողմից:
- Ծրագրի **ՄԳ անձնագիրը**, որը մշակվել է USAID/PRIP ծրագրի կողմից և հաստավել է ԱԽ կողմից;
- Ծրագրի **ցուցանիշների ցանկը**, որը մշակվել է Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի ԱԽ անդամների կողմից և հաստատվել է ԱԽ կողմից: Այդ ցանկի հիման վրա USAID/PRIP ծրագրի մասնագետները մշակել են Ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակը:

«Վճարման ծառայություններ» ծրագրի տեղեկանքում (տես հավելված Գ) տրված է ծրագրի նպատակը, փոփոխությունների նախապատմությունը, ծրագրի իրականացնողները և իրավական կարգավորումները, վերջին տարիներին Հայաստանի կենսաթոշակային ապահովության համակարգում ընթացող բարեփոխումները և դրանով պայմանավորված «Վճարման ծառայություններ» ծրագրի ֆինանսավորման զարգացումները:

Տեղեկանքում համառոտ նշված է նաև «Վճարման ծառայություններ» իրականացնելու համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության, որպես լիազոր մարմնի հետ կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած կառույցները, և նրանց հետ ՀՀ ՍԱՊԾ համագործակցության զարգացումները, նրանց միջոցով տրամադրված ծառայությունների չափը և դինամիկան, վճարման ծառայություններ մատուցելու վարձավճարների չափը:

Տեղեկանքում առանձին աղյուսակով բերված են վճարման ծառայությունների տեսակները, վճարման գումարի անվանումը, վճարատեսակը սահմանող իրավական ակտը և շահառուների քանակը՝ 2014թ.-ի դրությամբ:

Այս տեղեկատվությունն օգտագործվել է ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակը լրացնելիս։

Ծրագրի ՄԳ տեղեկանքում դիտարկվող ժամանակաշրջանը տալիս է 2009թ.-ից ծրագրում տեղի ունեցած փոփոխությունների ակնարկը՝ հիմնականում ծառայությունը մատուցող կառույցի փոփոխության, նոր կառույցների հետ համագործակցության զարգացման մասին։

Այս տվյալները կիրառվել են ծրագրի գործունեության վերլուծության ժամանակ։

«Վճարման ծառայություններ» ծրագրի անձնագիրը (տես հավելված Գ) պարունակում է ծրագրի գործունեության գնահատման համար կարևոր հարցադրումները, նպատակները և խնդիրները։ Ծրագրի համար պահպանվել է ՄԳ անձնագրի ձևաչափը, սակայն ծրագրի համար թիրախային ցուցանիշների արժեքներ չեն սահմանվել։ Փորձնական ծրագրի արդյունքների հիման վրա կարելի է հետագայում սահմանել նաև այս ծրագրի համար թիրախներ՝ անձնագրում։

Հիմնական փաստաթղթերը, որոնք օգտագործվել են Ծրագրի ընթացիկ և հեռահար նպատակների, ծրագրի խնդիրների ու գործողությունների որակական ու քանակական արդյունքների սահմանման համար հետևյալն են.

- ՀՀ Կառավարության 2014-25թթ.-ի Հեռանկարային զարգացման ծրագիր;
- Կենսաթոշակ վճարելու կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության թիվ 670-Ն որոշումը, 5.05.2011թ.

Անձնագրում, ծրագրի մշտադիտարկման և գնահատման համար առանձնացվել են հետևյալ 5 ոլորտները.

1. Վճարման ծառայություններ ստացող շահառուները,
2. Գնումների գործընթաց / վճարման ծառայությունների կազմակերպման գործընթաց,
3. Վճարման ծառայությունների մատուցման ծախսեր,
4. Վճարման ծառայությունների արդյունավետությունը.
5. Վճարման ծառայություններից շահառուների բավարարվածության աստիճանը։

Անձնագրում նշված են նաև 2012-2014թթ.-ի համար ծրագրի իրականացման համար հատկացված միջոցները՝ ըստ վճարման ծառայությունների տեսակի։

Հավաքագրված տվյալների հիման վրա ծրագրի գնահատման հարցադրումները բխում են ՄԳ անձնագրում նշված այդ տեղեկատվությունից։

Ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների ցանկը (առդիր 2) մշակվել է հիմք ընդունելով Ծրագրի ՄԳ անձնագրում նշված գործողությունները։ Ինչպես և նախորդ ծրագրի դեպքում՝ այս ծրագրի համար ևս, ըստ գործողությունների դասակարգված ծրագրի ցուցանիշները USAD/PRIP մասնագետների կողմից վերադասավորվել են ըստ ծրագրի գործունեության հիմնական ոլորտների։

Վերը նշված 5 ոլորտների համար ԱԽ անդամները մշակեցին **51 անուն ցուցանիշներ**, որոնք, եթե դիտարկվեն ըստ ենթախմբերի, օրինակ ըստ սեռի, կամ վճարման տեսակի կամ բնույթի, **պահանջում են հավաքագրել ավելի քան 221 ցուցանիշներ**:

Այս ծրագրի մասին տեղեկատվության հավաքագրման ժամանակ ևս վերհանվել են այնպիսի ցուցանիշներ, որոնք հնարավոր չէ հավաքագրել կամ նման տեղեկատվությունը բացակայում է:

«Վճարման ծառայությունների» տրամադրման բնույթից ելնելով, ծրագրի արդյունավետության գնահատման համար առաջարկված մի շարք ցուցանիշներ որակական են, և դրանք **հնարավոր է ստանալ միայն ֆոկուս խումբ քննարկումների միջոցով**:

«Վճարման ծառայություններ» ծրագրի ցուցանիշների շարքը բավական կրճատվել է՝ ԱԽ կողմից մշակված նախնական ցանկի համեմատ: Ծրագրի մոնիտորինգի արդյունքնում հավաքագրված տվյալների հիման վրա ևս արվել են առաջարկություններ՝ ինչպես ցուցանիշների նպատակահարմարության, այնպես էլ ստացման աղբյուրների և պարբերականության վերաբերյալ:

4.2. «Վճարման ծառայություններ» ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների շրջանակը, ցուցանիշների հավաքագրումը և կանխատեսման/գնահատման մեթոդաբանությունը

«Վճարման ծառայություններ» ծրագրի ՄԳ ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը նախատեսված էր հավաքագրել ՄԳ ելակետային տարվա՝ 2014թ. և դրան նախորդող երկու տարիների՝ 2012-2013թթ.(պատմական ժամանակահատված) համար, սակայն գործող նոր տեղեկատվական բազայում (շտեմարանում) առկա էր միայն 2014թ.-ի տեղեկատվությունը, այն էլ ՄԳ ոչ բոլոր ցուցանիշների մասով: Որոշ ցուցանիշներ հնարավոր է եղել ստանալ նաև 2013թ.-ի երկրորդ կեսի համար: Ելակետային տարվան՝ 2014թ-ին հաջորդող տարիների՝ 2015-2017թթ. (կարճաժամկետ հեռանկար) համար կատարվել են կարճաժամկետ կանխատեսումներ: 2015թ.-ը դիտարկվել է, որպես փաստացի ժամանակաշրջան, որի վերաբերյալ սակայն ոչ բոլոր տվյալներն են եղել առկա 2016թ.-ի մարտի վերջի դրությամբ:

Սույն բաժնում պարզաբանված է Ծրագրի ՄԳ շրջանակի բոլոր ցուցանիշների հավաքագրման, կանխատեսման և գնահատման մեթոդաբանությունն ըստ ՄԳ անձնագրում առանձնացված ոլորտների: Ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակում՝ Excel ֆայլում, ցուցանիշները տրված են նույն հաջորդականությամբ:

Ծրագրի ՄԳ ցուցանիշների վերաբերյալ փաստացի տեղեկատվությունը հիմնականում ստացվել է ՀՀ ՍԱՊԾ տեղեկատվական շտեմարանից: Տեղեկատվության ստացման աղբյուր են հանդիսացել նաև Ծրագրի շահառուների շրջանում իրականացված

ընտրանքային հետազոտությունն[14] ու վճարման ծառայություն տրամադրող կազմակերպությունների և ՀՀ ՍԱՊԾ ներկայացուցիչների հետ իրականացված ֆոկուս խումբ քննարկումները: ՄԳ ցուցանիշների շրջանակի Excel ֆայլում յուրաքանչյուր ցուցանիշի դիմաց կատարված է նշում, թե տվյալ ցուցանիշի վերաբերյալ ինչ պարբերականությամբ կարելի է ստանալ տեղեկատվությունը և որն է այդ տեղեկատվության աղբյուրը, ինչպես նաև արդյոք տվյալ ցուցանիշի վերաբերյալ կատարվել է կարճաժամկետ կանխատեսում, թե այն կրում է զուտ տեղեկատվական բնույթ:

ՄԳ ցուցանիշների կանխատեսման/գնահատման ընթացքում կիրառվել են տարբեր մոտեցումներ՝ ելնելով առկա տեղեկատվության ընձեռնած հնարավորություններից, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերի թելադրած պայմաններից:

ՄԳ շահառուների թվաքանակը բնութագրող ցուցանիշների կանխատեսումները կատարվել են ելնելով ժողովրդագրական հիմնական ցուցանիշներից: Սա մեկ անգամ ևս վկայում է այն մասին, թե **որքան կարևոր է ժողովրդագրական ցուցանիշների մանրամասն կանխատեսումների իրականացումը այդ նպատակի համար մշակված հատուկ մոդելների հիման վրա,** քանի որ ստացված արդյունքներն այնուհետև կարող են հիմք ծառայել սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր ծրագրերի շահառուների թվաքանակի կանխատեսման համար՝ զուգորդված տվյալ ծրագրին և ծրագրային ոլորտին բնորոշ քաղաքականությամբ թելադրված պայմաններով ու ենթադրություններով:

Ծրագրի ՄԳ ցուցանիշների կանխատեսման ընթացքում կիրառվել է նաև գծային կանխատեսման (տես «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների հավաքագրման և կանխատեսման/գնահատման մեթոդաբանական մոտեցումները, էջ 26), ինչպես նաև վճարման ծառայությունների մատուցման բարելավման վերաբեյալ կատարված տրամաբանական ենթադրությունների կիրառման մեթոդը:

Ոլորտ 1: Վճարման ծառայություններ ստացող շահառուները

Այս բաժինը ներառում է վճարման ծառայություններ ստացող շահառուների բացարձակ թվաքանակի վերաբերյալ տեղեկատվություն:

1. Շահառուների թվաքանակը բնութագրող բացարձակ ցուցանիշներ. վճարման ծառայություններ ստացող շահառուների թվաքանակն ըստ կենսաթոշակի կամ նպաստի տեսակի (տես Առդիր 2. «Վճարման ծառայություններ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մոնիտորինգի ցուցանիշների շրջանակ», բաժին 1. «Վճարման ծառայություններ ստացող շահառուներ») ցուցանիշների խումբը կանխատեսվող բնույթի ցուցանիշներ են:

[14] 2015թ.-ի հունիսին USAID/PRIP ծրագրի կողմից 1000 կենսաթոշակառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության մասին նշվել է «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ մեթոդաբանության պարզաբանումների բաժնում: Հետազոտության հարցաշարը հնարավորություն է ստեղծել տեղեկատվություն ստանալ փորձարկվող երկու ծրագրերի ցուցանիշների համար:

Շահառուների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը 2013-2014թթ.-ի, ավելի ուշ նաև 2015թ. համար ստացվել է ՀՀ ՍԱՊԾ-ից՝ ԱԽ կողմից պաշտոնական գրությանն ի պատասխան: Տեղեկատվությունն հավաքագրվել և կարճաժամկետ կանխատեսումներ կատարվել են ըստ նպաստի կամ կենսաթոշակի տեսակի՝ բոլոր շահառուների համար:

Ցուցանիշի վերաբերյալ 2012թ-ի համար տեղեկատվությունը չի տրամադրվել՝ նոր SS համակարգում նախկին տեղեկատվությունը պահանջվող ձևաչափով չլինելու պատճառով:

Շահառուների ընդհանուր թվաքանակի 2015-2017թթ. համար կանխատեսումները/գնահատումը կատարվել է օգտագործելով 2014թ. շահառուների թվաքանակի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում, այնուհետև յուրաքանչյուր հաջորդ տարի կիրառվել է նախորդ տարվա շահառուների թվաքանակ/բնակչության թվաքանակ հարաբերակցությունը:

Սույն ցուցանիշի **ենթացուցանիշների վերաբերյալ** 2015-2017թթ. կանխատեսումներ կատարելիս կիրառվել է մի փոքր այլ մեթոդաբանություն՝ 2014թ. տվյալների հիման վրա հաշվարկվել են համապատասխան տեսակարար կշիռներ, որոնք այնուհետև կիրառվել են բնակչության համապատասխան խմբի կամ կենսաթոշակառուների ընդամենը թվաքանակների նկատմամբ: 2015թ., իսկ որոշ ցուցանիշների համար՝ 2016թ. համար փաստացի տվյալները ստանալուն պես կատարվել կամ կկատարվեն համապատասխան վերահաշվարկներ կանխատեսվող հաջորդ տարիների համար:

- Վճարման ծառայություն ստացած աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի կանխատեսումները 2015-2017թթ. համար կատարվել են «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ շրջանակում 2015-2017թթ. համար աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի կանխատեսումների հիման վրա: 2014թ. փաստացի տվյալների հիման վրա հաշվարկվել է վճարման ծառայություն ստացած աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակ/ընդամենը աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակ հարաբերակցությունը, որն այնուհետև կիրառվել է 2015-2017թթ. համար աշխատանքային կենսաթոշակառուների կանխատեսված թվաքանակի նկատմամբ:

- ***Նպաստառուների (ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացողներ) թվաքանակի վերաբեյալ կանխատեսումները*** կատարելուց առաջ նախ կատարվել է ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու նպաստառուների թվաքանակների կանխատեսում.

- ծերության նպաստառուների թվաքանակի կանխատեսումը կատարվել է հիմնվելով 65 և բարձր տարիքի բնակչության թվաքանակի վրա, քանի որ ծերության նպաստ տրամադրվում է 65 և բարձր տարիքի այն անձանց, ովքեր չունեն աշխատանքային կենսաթոշակ ստանալու համար պահանջվող ֆորմալ աշխատանքային ստաժ:
- Հաշմանդամության և կերակրողին կորցնելու նպաստառուների թվաքանակը հաշվակվել է հիմնվելով բնակչության ընդհանուր թվաքանակի վրա, քանի որ նպաստի այս երկու տեսակները կարող են տրամադրվել ցանկացած տարիքային խմբի անձանց:

- Հաջորդ քայլով 2014թ. փաստացի տվյալների հիման վրա հաշվարկվել է վճարման ծառայություն ստացած նպաստառուների թվաքանակ/նպաստառուների ընդհանուր թվաքանակ հարաբերակցությունը, որն այնուհետև կիրառվել է 2015-2017թթ համար կանխատեսված նպաստառուների ընդհանուր թվաքանակի նկատմամբ:

- ***Պարգևավճարներ և պատվովճարներ ստացողների թվաքանակը կանխատեսելու*** նպատակով նախ գնահատվել է ընդամենը կենսաթոշակառուների թվաքանակը՝ ներառյալ զինծառայության կենսաթոշակառուների և ծերության, հաշմանդամության ու կերակրողին կորցնելու նպաստառուների թվաքանակը 2015-2017թթ. համար: Այնուհետև, 2014թ. փաստացի տվյալների հիման վրա հաշվարկվել է պարգևավճարներ և պատվովճարներ ստացողների թվաքանակ/ընդամենը կենսաթոշակառուների և նպաստառուների թվաքանակ հարաբերակցությունը, որն էլ կիրառվել է 2015-2017թթ. համար կանխատեսված կենսաթոշակառուների և նպաստառուների ընդամենը թվաքանակի նկատմամբ:

- ***Կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ ստացողների թվաքանակի կանխատեսումները*** 2015-2017թթ. համար կատարվել են ելնելով կենսաթոշակառուների և նպաստառուների ընդամենը թվաքանակից՝ կիրառելով 2014թ փաստացի տվյալների հիման վրա հաշվարկած «Կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ ստացողների թվաքանակ/կենսաթոշակառուների և նպաստառուների ընդհանուր թվաքանակ» հարաբերակցությունը:

- ***Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թվաքանակի կանխատեսումներ*** կատարելու համար նախ գնահատվել է 15-49 տարեկան կանաց թվաքանակն ու տարվա ընթացքում ընդամենը ծնունդների թիվը (տես Ներդիր 6-ը):

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է միայն 2014թ. դեկտեմբեր ամսվա համար՝ երբ նպաստի այս տեսակի վճարումը սկսվեց կատարվել ՍԱՊԾ կողմից, սակայն 2015թ. փաստացի տվյալները ներկայացնելիս կրկին ՀՀ ՍԱՊԾ կողմից տրամադրվել է միայն դեկտեմբեր ամսվա տվյալը, ինչը հնարավորություն չի տալիս պատկերացում կազմել տարվա ընթացքում վճարումների

ՆԵՐԴԻՐ 6: ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ծնելիության տարիքային գործակիցները բնութագրում են յուրաքանչյուր տարիքային խմբի կանանց ծնելիության միջին տարեկան մակարդակը: Ժողովրդագրության վիճակագրության մեջ ծնելիության տարիքային գործակիցները հաշվարկվում են 15-49 տարեկան կանանց համար, այդ պատճառով էլ տարվա ընթացքում ծնունդների թվաքանակի գնահատման համար հիմք է ընդունվել կանանց հենց այս խմբի գնահատված թվաքանակը:

Ընդգծենք այն փաստը, որ առավել ճշգրիտ և հիմնավորված կանխատեսումներ անելու համար անհրաժեշտ է կիրառել հատուկ ժողովրդագրական կանխատեսում-ների իրականացման համար ստեղծված մոդելներ, կատարել համապատասխան վերլուծություն, ինչի հիման վրա էլ կկառուցվեն կանխատեսումների հիմքում դրվող ենթադրությունները:

մասին: Այնուամենայնիվ, ցուցանիշի վերաբերյալ կանխատեսումներ կատարելու համար օգտագործվել է այլընտրանքային տեղեկատվություն: Հայտնի է, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստ տրամադրվում է բոլոր նորածին երեխաների համար՝ անկախ ընտանիքի կարգավիճակից: ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալական վիճակը» ժողովածուում յուրաքանչյուր տարի հրապարակվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացող ընտանիքների և նշանակված նպաստների թիվը (http://www.armstat.am/am/?nid=81&id=1689): Համաձայն այս հրապարակման 2014թ. նշանակվել է 36094 , իսկ 2015թ.՝ 45261 երեխային ծննդյան միանվագ նպաստ:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թվաքանակի վերաբերյալ կանխատեսումներ կատարելու նպատակով հաշվարկվել է նշանակված նպաստներ/15-49 տարեկան կանանց թվաքանակ հարաբերակցությունը, որի հիման վրա էլ գնահատվել է նպաստի այս տեսակի շահառուների թվաքանակը 2015-2017թթ. ՀՀ ՍԱՊԾ կողմից ցուցանիշի միջին տարեկան արժեքների մասին տեղեկատվությունը տրամադրելու դեպքում 2015-2017թթ.-ի համար երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թվաքանակի կանխատեսումները կարելի է ճշգրտել:

- ***Չաշխատող կանանց մայրության նպաստ***. վճարման ծառայության այս նոր տեսակը ուժի մեջ է մտել 2016 թվականի հունվարից, հետևաբար, ՀՀ ՍԱՊԾ կողմից 2012-2015թթ. համար որևէ տեղեկատվություն չէր կարող ներկայացվել: Այդուհանդերձ, կատարվել է ցուցանիշի գնահատում 2016-2017թթ. համար, ինչի համար ՀՀ ԱՎԾ «ՀՀ Ժողովրդագրական ժողովածուից» (2015թ. , էջ 55, http://www.armstat.am/am/?nid=81&id=1729) նախ վերցվել է տեղեկատվություն 2012-2014թթ. ծնունդների վերաբերյալ: Այնուհետև հաշվարկվել է ծնունդների թիվ/15-49 տարեկան կանանց թվաքանակ հարաբերակցությունը, որն էլ կիրառվել է 15-49 տարեկան կանանց 2015-2017թթ համար գնահատված թվաքանակի նկատմամբ: Այնուհետև, ծնունդների ընդհանուր թվից հանվել է մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող շահառուների գնահատված թվաքանակը և ստացվել է մայրության նպաստառու չաշխատող կանանց թվաքանակը:

Թեև ՀՀ ԱՍՀՆ տրամադրած տեղեկատվության համաձայն 2016թ. համար մայրության նպաստառուների պլանավորված թվաքանակը կազմում է 30004 մարդ, սակայն կանխատեսումների իրականացման մեթոդաբանության տրամաբանությունը պահպանելու համար, ինչպես նաև ելնելով այն փաստից, որ տրամադրված տեղեկատվությունն, այնուամենայնիվ ամբողջական չէ, կանխատեսումներ սյունակում 2016-2017թթ. համար մուտքագրվել է ցուցանիշի գնահատված արժեքը: Ավելի ուշ 2016թ. համար փաստացի տվյալների հիման վրա անհրաժեշտ կլինի կատարել ցուցանիշի վերագնահատում:

- ***Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ***.վճարման ծառայության այս տեսակը ՀՀ ՍԱՊԾ կողմից կրկին սկսվել է իրականացվել 2016 թվականից: ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից, բնականաբար, տրամադրվել է միայն 2016թ. համար շահառուների պլանավորված թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ 13000 մարդ: Քանի որ հաջորդ տարվա համար կանխատեսումներ անելու համար ՀՀ ՍԱՊԾ կողմից տրամադրված

տեղեկատվությունը բավարար չէ, կանխատեսումը կատարվել է այլընտրանքային տեղեկատվությունից օգտվելու միջոցով, մասնավորապես.

- ՀՀ ԱՎԾ «ՀՀ Սոցիալական պատկերը և աղքատությունը» զեկույցից (2015թ., էջ 242) վերցվել է 2012-2014թթ.մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացած շահառուների թվաքանակը,
- հաշվարկվել է նպաստառուների թվաքանակ/15-49 տարեկան կանանց թվաքանակ հարաբերակցությունը 2014թ. համար և կիրառվել 2015-2017թթ. համար 15-49 տարեկան կանանց կանխատեսված թվաքանակի նկատմամբ:

2. Շահառուների թվաքանակն ըստ կենսաթոշակի կամ նպաստի վճարման եղանակի. սա նույն «Շահառուների ընդամենը թվաքանակ» ցուցանիշն է, միայն այս դեպքում շահառուների թիվը բաշխված է ըստ վճարման կանխիկ և անկանխիկ եղանակով ստացողների: Այս խմբի ենթացուցանիշների մի մասը կանխատեսվող բնույթի է, մի մասն էլ՝ միան տեղեկատվական:

- ***Անկանխիկ վճարման ծառայություններ ստացող շահառուներ՝ ըստ կենսաթոշակի կամ նպաստի տեսակի.*** այս ցուցանիշը անկանխիկ եղանակով կենսաթոշակ կամ նպաստ ստացող շահառուների թվաքանակների հանրագումարն է: Պետք է հիշել, որ սա պարզ հանրագումար չէ, քանի որ կա կրկնահաշվարկի վտանգ՝ նույն շահառուն, օրինակ կարող է վճարման ծառայություն ստանալ և՛ որպես երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացող, և՛ որպես մայրության կամ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող: Այդ իսկ պատճառով առավել ճշգրիտ կանխատեսումներ կատարելու համար թերևս անհրաժեշտ կլինի հետագայում ստանալ տեղեկատվություն այն շահառուների թվաքանակի վերաբերյալ, ովքեր ստանում են մեկից ավելի վճարման ծառայություն, ցանկալի կլինի այդ տեղեկատվությունը ստանալ ըստ վճարման ծառայությունների տեսակների:

- *կենսաթոշակառուներ (ներառյալ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացողներ, պարգևավճարներներ և պատվովճարներ ստացողներ).* ՀՀ ՍԱՊԾ կողմից տրամադրվել է տեղեկատվություն 2013-2014թթ. համար, 2015-2017թթ. համար կատարվել են կանխատեսումներ՝ կիրառելով 2014թ. անկանխիկ եղանակով կենսաթոշակառուների (ներառյալ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացողներ, պարգևավճարներ և պատվովճարներ ստացողներ) թվաքանակ/ընդամենը կենսաթոշակառուների (ներառյալ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացողներ, պարգևավճարներ և պատվովճարներ ստացողներ) թվաքանակ հարաբերակցությունը 2015-2017թթ. ընդամենը կենսաթոշակառուների (ներառյալ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացողներ, պարգևավճարներ և պատվովճարներ ստացողներ) կանխատեսված թվաքանակների նկատմամբ:
- *Կենսաթոշակառուի մահվան դեպքում թաղման նպաստ ստացողներ.* ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից անկանխիկ եղանակով թաղման նպաստ ստացողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել, սակայն

տրամադրվել է տեղեկատվություն 2015թ.համար, ուստի 2016-2017թթ. համար կանխատեսումներ արդեն կատարվել են 2015թ. անկանխիկ եղանակով թաղման նպաստ ստացողների թվաքանակ/ընդամենը թաղման նպաստ ստացողների թվաքանակ հարաբերակցությունը 2016-2017թթ.համար կանխատեսված ընդամենը թաղման նպաստ ստացողների կանխատեսված թվաքանակների նկատմամբ կիրառելու միջոցով:

- *Երեխայի ծննդյան միանվագ նպաստ.* այս ցուցանիշի վերաբերյալ ՀՀ ՍԱՊԾ-ն որևէ տեղեկատվություն չի տրամադրել, ավելին, ընդամենը երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրվել է 2013-2015թթ. միայն դեկտեմբեր ամսվա համար, ինչի պատճառով որևէ կանխատեսում հնարավոր չի եղել կատարել: Սակայն լիարժեք տեղեկատվության առկայության դեպքում կրկին կիրառվելու է նույն մոտեցումը, ինչ նախորդ ցուցանիշի դեպքում. փաստացի տվյալների հիման վրա հաշվարկվելու է անկանխիկ եղանակով երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թվաքանակ/ընդամենը երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացողների թվաքանակ հարաբերակցությունը և այն կիրառվելու է համապատասխան տարիների համար կանխատեսված ընդամենը երեխայի միանվագ նպաստ ստացողների թվաքանակի նկատմամբ:
- *Մայրության նպաստ չաշխատող կանանց համար.* այստեղ պետք է հիշել, որ մայրության նպաստը տրամադրվում է բացառապես անկանխիկ եղանակով՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից 08.10.2015թ. թիվ 1179-Ն որոշմամբ հաստատված «Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու» կարգի: Հետևաբար 2016-2017թթ. համար կանխատեսված ընդամենը մայրության նպաստ ստացողների թվաքանակի արժեքը կրկնվել է այս ցուցանիշի համար:
- *Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողներ.* անկանխիկ եղանակով նպաստի այս տեսակը ստացող շահառուների թվաքանակի վերաբերյալ առայժմ տեղեկատվության տրամադրման հնարավորություն ՀՀ ՍԱՊԾ-ն չի ունեցել, քանի որ այս նպաստի և չաշխատող կանանց տրամադրվող մայրության նպաստի վճարումը ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից սկսվել է 2016թ. հունվարից միայն: Հետևաբար, առաջին անգամ տեղեկատվություն անկանխիկ եղանակով նպաստի այս տեսակը ստացողների թվաքանակի վերաբերյալ հնարավոր կլինի ստանալ միայն 2016թ. առաջին կիսամյակը ամփոփելուց հետո:

- ***Անկանխիկ վճարման ծառայություններ ստացող շահառուներ՝ ըստ ծառայություն տրամադրող բանկերի.*** այս ցուցանիշը տեղեկատվական բնույթի է և սրա վերաբերյալ կանխատեսումներ չեն կատարվել:

- ***Անկանխիկ վճարման ծառայություններ ստացող շահառուներ՝*** *ըստ բնակավայրերի.* այս ցուցանիշը նույնպես տեղեկատվական բնույթի է, հետևաբար սրա վերաբերյալ ևս կանխատեսումներ չեն կատարվել:

Պետք է հատուկ նշել, որ գործող տեղեկատվական համակարգը թույլ չի տալիս ստանալ տեղեկատվություն գյուղական բնակավայրերում անկանխիկ կամ կանխիկ եղանակով վճարման ծառայություններ ստացողների թվաքանակի վերաբերյալ: Նաև տեղեկատվությունը հնարավոր չէ ստանալ կումուլյատիվ, այսինքն տեղեկատվությունը շտեմարանում առկա միայն պահի դրությամբ:

- ***Կանխիկ վճարման ծառայություններ ստացող շահառուներ՝*** *ըստ կենսաթոշակի կամ նպաստի տեսակի.* այս ցուցանիշը կանխիկ եղանակով կենսաթոշակ կամ նպաստ ստացող շահառուների թվաքանակների հանրագումարն է և կրկին պետք է հիշել, որ սա պարզ հանրագումար չէ. կա կրկնահաշվարկի վտանգ՝ նույն շահառուն, օրինակ կարող է վճարման ծառայություն ստանալ և՛ որպես երեխայի ծնողյան միանվագ նպաստ ստացող, և՛ որպես մայրության կամ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացող: Այդ իսկ պատճառով առավել ճշգրիտ կանխատեսումներ կատարելու համար թերևս անհրաժեշտ կլինի հետագայում ստանալ տեղեկատվություն այն շահառուների թվաքանակի վերաբերյալ, ովքեր ստանում են մեկից ավելի վճարման ծառայություն, ցանկալի կլինի այդ տեղեկատվությունը ստանալ ըստ վճարման ծառայությունների տեսակների:

Այս ցուցանիշի կանխատեսման ժամանակ կարելի է կիրառել նաև այլ մոտեցում. քանի որ ընդամենը վճարման ծառայություններ ստացող շահառուների թվաքանակը, ըստ էության, անկանխիկ և կանխիկ եղանակով վճարման ծառայություններ ստացողների հանրագումարն է և քանի որ արդեն կատարվել են կանխատեսումներ շահառուների ընդամենը թվաքանակի և անկանխիկ եղանակով վճարման ծառայություններ ստացող շահառուների թվաքանակի վերաբերյալ, ապա այս ցուցանիշի կանխատեսվող արժեքը կարելի է հաշվել որպես վերը նշված երկու ցուցանիշների արժեքների տարբերություն: Օրինակ.

- *կենսաթոշակառուներ (ներառյալ ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացողներ, պարգևավճարներներ և պատվովճարներ ստացողներ).* 2015-2017թթ. համար ցուցանիշի կանխատեսվող արժեքը ստացվել է որպես ընդամենը կենսաթոշակառուների կանխատեսված թվաքանակի և ընդամենը անկանխիկ եղանակով վճարման ծառայություն ստացող կենսաթոշակառուների կանխատեսված թվաքանակների տարբերություն: ***Այս մոտեցումը կիրառվել է ենթախմբի բոլոր կանխատեսվող ցուցանիշների համար:***

- ***Կանխիկ վճարման ծառայություններ ստացող շահառուների թվաքանակը՝ ըստ ծառայության ստացման վայրի.*** այս ցուցանիշն իրենից ներկայացնում է նույն կանխիկ եղանակով վճարման ծառայություններ ստացողների թվաքանակը: Սակայն այս դեպքում ենթացուցանիշները ցույց են տալիս թե կանխիկ եղանակով վճարման ծառայություններից օգտվող շահառուների որ մասն է այդ ծառայությունը ստանում Հայփոստի տարածքային բաժանմունքներում, իսկ որ մասը՝ բնակության վայրում (տանը):

ՀՀ ՍԱՊԾ-ն 2012-2015թթ. համար չի տրամադրել տեղեկատվություն նշված ենթացուցանիշների վերաբերյալ, հետևաբար ՄԳ ցուցանիշների կանխատեսումներ չեն

կատարվել: Ցուցանիշների կանխատեսումը առաջարկվում է կատարել հետևյալ մոտեցմամբ.

- Նախ հաշվել Հայփոստի տարածքային բաժանմունքներում ծառայություններ ստացողների թվաքանակ/ընդամենը կանխիկ վճարման ծառայություններ ստացողների թվաքանակ հարաբերակցությունը և այն կիրառել 2016-2017թթ. համար կանխատեսված ընդամենը կանխիկ վճարման ծառայություններ ստացողների թվաքանակի նկատմամբ,
- Բնակության վայրում/տանը կանխիկ վճարման ծառայություններ ստացողների կանխատեսվող թվաքանակը 2016-2017թթ. կարելի է ստանալ որպես ընդամենը կանխիկ վճարման ծառայություններ ստացողների և Հայփոստի տարածքային բաժանմունքներում կանխիկ վճարման ծառայություններ ստացողների կանխատեսված թվաքանակների տարբերություն:

Կանխիկ վճարման ծառայություններ ստացող շահառուներին վերաբերող հետևյալ ցուցանիշները տեղեկատվական բնույթի են և դրանց վերաբերյալ կանխատեսումներ չեն կատարվել.

- Առանց լիազորագրի կանխիկ եղանակով վճարման ծառայություն ստացողների թվաքանակ,
- Լիազորագրով կանխիկ եղանակով վճարման ծառայություն ստացողների թվաքանակ,
- ԱՊՀ երկրներ ուղարկված գործերի դեպքում լիազորագրով կենսաթոշակ ստացողների թվաքանակ,
- Այլ դեպքերում լիազորագրով դրամական վճարումների թիվ:

- ***Տարվա ընթացքում առաջին անգամ վճարման ծառայությունից օգտվողների թվաքանակ.*** 2014թ. փաստացի տվյալների հիման վրա հաշվարկվել է տարվա ընթացքում առաջին անգամ վճարման ծառայությունից օգտվողների թվաքանակ/ընդամենը վճարման ծառայություն ստացած շահառուների ընդամենը թվաքանակ հարաբերակցությունը, այնուհետև այդ հարաբերակցությունը կիրառվել է շահառուների ընդամենը թվաքանակի կանխատեսված արժեքների նկատմամբ:

- ***Վճարման անկանխիկ եղանակ ընտրած շահառուների թվաքանակ.*** 2014թ. փաստացի տվյալների հիման վրա հաշվարկվել է տարվա ընթացքում առաջին անգամ վճարման ծառայությունից օգտվողների թվաքանակում վճարման անկանխիկ եղանակ ընտրած շահառուների տեսակարար կշիռը, ինչն էլ կիրառվել է առաջին անգամ վճարման ծառայությունից օգտվող շահառուների կանխատեսված թվաքանակի նկատմամբ:

ՄԳ ցուցանիշների շրջանակում ներառված են նաև վճարման անկանխիկ եղանակ ընտրած շահառուների՝ ըստ բնակավայրերի (Երևան, այլ քաղաքներ և գյուղեր, վերջինիս վերաբերյալ գործող SS համակարգը հնարավորություն չի տալիս ստանալ տեղեկատվություն, ուստի ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից տրամադրվել է տեղեկատվություն միայն Երևանի և մարզերի համար), թվաքանակի վերաբերյալ: Այս ցուցանիշների վերաբերյալ կանխատեսումը կատարվել է վճարման անկանխիկ եղանակ ընտրած շահառուների

ընդամենը թվաքանակում Երևանում և մարզերում վճարման այս տեսակը ընտրած շահառուների թվաքանակների տեսակարար կշիռների հիման վրա:

- ***Վճարման կանխիկ եղանակ ընտրած շահառուների թվաքանակ.*** այս ցուցանիշի վերաբերյալ կանխատեսում կարելի է կատարել կամ նախորդ ցուցանիշի կանխատեսման ժամանակ կիրառված մոտեցմամբ, կամ էլ որպես առաջին անգամ վճարման ծառայությունից օգտվողների և վճարման անկանխիկ եղանակ ընտրած շահառուների թվաքանակի տարբերություն: Տվյալ դեպքում կիրառվել է վերջին մոտեցումը:

- ***Տարվա ընթացքում վճարման եղանակը կանխիկից անկանխիկի փոխած շահառուների թվաքանակ*** և ***Տարվա ընթացքում վճարման եղանակը անկանխիկից կանխիկի փոխած շահառուների թվաքանակ*** ցուցանիշները, ինչպես նաև ըստ բնակավայրերի (Երևան, այլ քաղաքներ, գյուղեր) այս խմբի շահառուների թվաքանակի վերաբերյալ տվյալները տեղեկատվական բնույթի են, հետևաբար կանխատեսումներ չեն կատարվել:

- ***Ընդամենը բնակչություն***. բնակչության թվաքանակի վերաբերյալ ցուցանիշը վերցվել է «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ֆայլից՝ «Վճարման ծառայություններ» ծրագրի որոշ ցուցանիշների կանխատեսման և կամ հարաբերական ցուցանիշների հաշվարկման նպատակով:

Ոլորտ 2: Գնումների գործընթաց / վճարման ծառայությունների կազմակերպման գործընթաց

- ***Գործընթացի կազմակերպման հետ կապված փաստաթղթերի համապատասխանությունը սահմանված կարգին.*** թեև ցուցանիշը թիրախային է, սակայն որևէ տեղեկատվություն համապատասխանության կամ անհամապատասխանության վերաբերյալ ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից չի տրամադրվել, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17 և 20 հոդվածների համաձայն գնումներն այս դեպքում կատարվում են բանակցային ընթացակարգով: Սա նշանակում է, որ պատվիրատուն պայմանագրի պայմանների շուրջ բանակցում է նախապես որակավորված մասնակցի հետ և համաձայնության գալուց հետո միայն կնքում պայմանագիր: Ընդ որում, պատվիրատուն ծառայություններ գնելու վերաբերյալ տալիս է բաց հայտարարություն և վճարման ծառայություններ տրամադրել ցանկացող կառույցները (տվյալ դեպքում բանկերն ու Հայփոստը) մասնակցում են բանակցային գործընթացին և համաձայնության գալուց հետո կնքում պայմանագիր, որի ստանդարտ ձևը հաստատված է ՀՀ կառավարության կողմից:

Գործընթացի կազմակերպման ընթացքում ծագած հարցերի և բուն պայմանագրի կնքման գործընթացի հետ կապված խնդիրների վեր հանման և մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով անհրաժեշտ միջոցառումների քննարկման նպատակով կազմակերպվել են ֆոկուս խումբ քննարկումներ վճարման ծառայություններ մատուցող բանկերի և Հայփոստի, ինչպես նաև վերը նշված պայմանագրի կողմ հանդիսացող ՀՀ ՍԱՊԾ համապատասխան ներայացուցիչների մասնակցությամբ

(ֆոկուս խումբ քննարկման կազմակերպելու և վարելու մեթոդաբանությունը բերված է սույն հաշվետվության հավելվածում՝ տես առդիր 10)։

- ***Գործընթացի իրականացման ժամկետների համապատասխանությունը սահմանված կարգին***. այս ցուցանիշի վերաբերյալ ՀՀ ՍԱՊԾ-ն քանակական տվյալներ չի տրամադրել, սակայն ֆոկուս խումբ քննարկումների միջոցով հնարավոր է եղել ստանալ որակական որոշ ցուցանիշներ կամ ավելի շուտ որակական գնահատականներ։

- ***Կազմակերպությունների թիվը, որոնց հետ տարվել են բանակցություններ***. ՄԳ ցուցանիշների շրջանակը ներառում է ինչպես ընդամենը կազմակերպությունների թիվը, այնպես էլ կանխիկ և անկանխիկ վճարման ծառայություններ մատուցող կազմակերպությունների թիվը։ Կանխիկ վճարման ծառայություն տրամադրող միակ կազմակերպությունը Հայաստանում հանդիսանում է Հայփոստը, ուստի անիմաստ է խոսել այս ցուցանիշի կանխատեսման մասին։ Ինչ վերաբերում է անկանխիկ վճարման ծառայությունների տրամադրման համար բանակցություններին մասնակցած բանկերի թվին, ապա այն նախ պահպանվել էր 2014թ. մակարդակի վրա, իսկ 2015թ. փաստացի ցուցանիշը ստանալուն պես ցուցանիշի արժեքը ճշգրտվել է։

- ***Կազմակերպությունների թիվը, որոնց հետ կնքվել են պայմանագրեր***. կանխիկ վճարման դեպքում, ինչպես արդեն նշվել է վերևում, Հայփոստն ունի «մենաշնորհ» և բնականաբար, պայմանագիրը կնքվել է միայն այդ կառույցի հետ։ Բանկերի դեպքում հնարավոր է, որ բանակցությունների գործընթացին մասնակցած բանկի հետ այս կամ այն պատճառով պայմանագիր չկնքվի, սակայն ՀՀ ՍԱՊԾ տրամադրած տեղեկատվության համաձայն, բանակցային գործընթացին մասնակցած բոլոր բանկերի հետ պայմանագիր կնքվել է, հետևաբար այս ցուցանիշի արժեքը նույնն է, ինչ բանակցություններին մասնակցած բանկերի թիվը՝ փաստացի և կանխատեսված։

- ***Պայմանագրերի կնքման ընթացքում թույլ տրված խախտումների թիվը***. Պայմանագրերի կնքման գործող կարգը, ինչպես արդեն նշվել է վերևում, այնպիսին է, որ սխալներ հնարավոր չէ թույլ տալ. բոլոր պայմանագրերը կնքվում են համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված ստանդարտ պայմանագրի ձևի՝ թե՛ կանխիկ, և թե՛ անկանխիկ վճարման ծառայություններ մատուցող մասնակիցների համար։ Հետևաբար, ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից ցուցանիշի վերաբերյալ քանակական տվյալներ չեն տրամադրվել, սակայն հարցին առնչվող որակական գնահատականներ ստացվել են Հայփոստի, բանկերի և ՀՀ ՍԱՊԾ-ի ներկայացուցիչների հետ կազմակերպած ֆոկուս խումբ քննարկումների արդյունքում։

Ոլորտ 3։ Վճարման ծառայությունների մատուցման ծախսեր

- ***Վճարման ծառայություն իրականացնող կազմակերպություններին տրամադրված ֆինանսական միջոցներ***. այս ցուցանիշն իրենից ներկայացնում է հետևյալ երկու ենթացուցանիշների հանրագումարը.

- Անկանխիկ վճարման համար տրամադրված ֆինանսական միջոցներ,
- Կանխիկ վճարման համար տրամադրված ֆինանսական միջոցներ։

ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից այս երկու ցուցանիշների վերաբերյալ 2013-2015թթ. համար տրամադրվել է փաստացի տեղեկատվություն, իսկ 2016թ. համար՝ ցուցանիշների պլանավորված արժեքը։ 2017թ. համար կանխատեսումը կատարվել է հետևյալ կերպ. 2016թ. համար հաշվարկվել է մեկ շահառուի հաշվով հատկացված միջոցները (հատկացված միջոցներ/շահառուների թվաքանակ) և այն բազմապատկվել է 2017թ. համար կանխատեսված շահառուների ընդամենը թվաքանակով։ Մոտեցման թերությունն այն է, որ հաշվի չի առնվում տրամադրվող կենսաթոշակի կամ նպաստների չափի հնարավոր բարձրացումները։ Առավել մանրամասն տեղեկատվության առկայության դեպքում, մասնավորապես վճարվող նպաստներից յուրաքանչյուրի չափի վերաբերյալ տեղեկատվության և դրանց վերաբերյալ քաղաքականությամբ սահմանված թիրախների առկայության դեպքում, հնարավոր կլիներ շահառուների կանխատեսված թվաքանակների հիման վրա գնահատել 2017թ. հատկացվելիք ֆինանսական միջոցների չափը։

- *Շահառուներին անկանխիկ եղանակով փաստացի վճարված ֆինանսական միջոցների չափը* և անկանխիկ վճարման ծառայությունների մատուցման համար տրամադրված միջոցների չափը ցուցանիշների վերաբերյալ ՀՀ ՍԱՊԾ-ն տեղեկատվություն չի տրամադրել, սակայն տիրապետելով որոշակի տեղեկատվության՝ կատարվել է այդ ցուցանիշների գնահատում 2015-2017թթ. համար։ Մասնավորապես Ծրագրի ՄԳ տեղեկանքից հայտնի է, որ բանկերին վճարման ծառայություններ տրամադրելու համար տարեկան մեկ շահառուի հաշվով տրամադրվում է 360 դրամ։ Այս տեղեկատվության հիման վրա հաշվարկվել է անկանխիկ վճարման ծառայությունների մատուցման համար տրամադրված միջոցների չափը՝ 360xանկանխիկ վճարման ծառայություններ ստացող շահառուների թվաքանակ։ Այնուհետև, անկանխիկ վճարման համար տրամադրված ֆինանսական միջոցներից նվազեցվել է անկանխիկ վճարման ծառայությունների մատուցման համար տրամադրված միջոցների չափը և ստացվել է շահառուներին անկանխիկ եղանակով փաստացի վճարված ֆինանսական միջոցների չափը։ Այնուամենայնիվ, այս և հաջորդ երկու ցուցանիշների վերաբերյալ փաստացի տեղեկատվության ստացումը կարևոր է անհրաժեշտ վերլուծություններ և հետևություն անելու, առավել ճշգրիտ կանխատեսումներ իրականացնելու և Ծրագիրը գնահատելու համար։
- *Շահառուներին կանխիկ եղանակով փաստացի վճարված ֆինանսական միջոցների չափը* և կանխիկ վճարման ծառայությունների մատուցման համար տրամադրված միջոցների չափը ցուցանիշների վերաբերյալ ՀՀ ՍԱՊԾ-ն տեղեկատվություն չի տրամադրել, սակայն կրկին օգտվելով Ծրագրի ՄԳ տեղեկանքի տեղեկատվությունից՝ կատարվել է այդ ցուցանիշների գնահատում 2015-2017թթ. համար։ Մասնավորապես հայտնի է, որ Հայփոստին վճարման ծառայություններ տրամադրելու համար տրամադրվում է վճարման համար հատկացված միջոցների 1%-ը։ Այս տեղեկատվության հիման վրա հաշվարկվել է

կանխիկ վճարման ծառայությունների մատուցման համար տրամադրված միջոցների չափը՝ 0.01x կանխիկ վճարման համար տրամադրված ֆինանսական միջոցներ: Այնուհետև, կանխիկ վճարման համար տրամադրված ֆինանսական միջոցներից նվազեցվել է կանխիկ վճարման ծառայությունների մատուցման համար տրամադրված միջոցների չափը և ստացվել է շահառուներին կանխիկ եղանակով փաստացի վճարված ֆինանսական միջոցների չափը:

Ոլորտ 4: Վճարման ծառայությունների արդյունավետությունը

Այս ոլորտի մշտադիտարկման և գնահատման համար ԱԽ կողմից առաջարկվել են 6 խումբ ցուցանիշներ.

1. Վճարման գործընթացի կազմակերպման ժամկետները,
2. Վճարման գործընթացի կազմակերպումը ՍԱՊԾ կողմից,
3. Վճարման ծառայությունների մատուցմանն առնչվող բողոք-դիմումների թիվը,
4. Բավարարված բողոք-դիմումների թիվը,
5. Վճարող կազմակերպությունների կողմից թույլ տված խախտումների թիվը,
6. Պատվիրատուի կողմից թույլ տրված խախտումների թիվը:

Սակայն, տվյալների հավաքագրման ժամանակ պարզ դարձավ, որ ցուցանիշների մեծ մասը՝ նոր էլեկտրոնային համակարգի ներդրումից հետո անհնար է առանձնացնել և գնահատել: Իսկ ցուցանիշների մեկ այլ խումբ ընդհանրապես չի հաշվառվում, կամ այդ ցուցանիշների մասին վիճակագրություն չի հավաքագրվում:

Այսպես, «Վճարման գործընթացի կազմակերպման ժամկետները» ենթավերնագրի ներքո նախատեսվում էր տեղեկատվություն ստանալ թե քանի օր է պահանջվում

1. Շահառուների ցուցակների կազմման համար,
2. ՍԱՊԾ-ի կողմից վճարման ծառայություններ մատուցող կազմակերպությանը շահառուների ցուցակների փոխանցման համար,
3. ՍԱՊԾ-ի կողմից վճարման ծառայություն մատուցող կազմակերպությանը համապատասխան գումարների փոխանցման համար,
4. Անկանխիկ վճարման ծառայություն մատուցող կազմակերպության կողմից շահառուի հաշվի համարին համապատասխան գումարի փոխանցման համար,

Ինչպես նաև որքան են տևում ուշացումները, մասնավորապես

5. Անկանխիկ վճարման ծառայություն մատուցող կազմակերպության կողմից շահառուի հաշվի համարին համապատասխան գումարի փոխանցման ժամկետների խախտման դեպքերը (ուշացումներ), օր
6. Կանխիկ վճարման ծառայություն մատուցող կազմակերպության կողմից վճարման իրականացման ժամկետների խախտման դեպքերը (ուշացումներ), օր»

ՀՀ ՍԱՊԾ կողմից ԱԽ-ի անդամներին տեղեկացվեց, որ Վճարման ցուցակների ձևավորման համար օրեր այլևս չի պահանջվում: Էլ համակարգի միջոցով հնարավոր է ավտոմատ ստանալ տարբեր վճարումների՝ կենսաթոշակներ, նպաստներ, պատվովճարներ, պարգևավճարներ և այլն իրավունք ունեցողների ցուցակները, ըստ կանխիկ և անկանխիկ ստացման եղանակների, ինչպես նաև ըստ բանկերի: Ժամանակ պահանջող գործառույթը ցուցակների ճշտումն է ըստ տարածքային բաժինների և վճարումների տեսակների, որի վրա ՀՀ ՍԱՊԾ համապատասխան բաժինն աշխատում է ամեն ամսվա 25-ից հետո:

ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից վճարման ծառայություններ մատուցող կազմակերպությանը շահառուների ցուցակների փոխանցման համար նույնպես ժամանակ չի պահանջվում, քանի որ այն կատարվում է էլեկտրոնային փոստի միջոցով: Յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ վճարում իրականացնող կազմակերպություններն ունենում են շահառուների ցուցակներն ըստ վճարման գումարների և վճարման ծածկագրերի: Թղթային կրիչներով վճարում իրականացնում են միայն Հայփոստի բաժանմունքները:

ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից վճարման ծառայություն մատուցող կազմակերպությանը համապատասխան գումարների փոխանցումը կատարվում է Պետական գանձապետարանի միջոցով: ՀՀ ՍԱՊԾ-ն գումար չի փոխանցում այլ ուղարկում է հայտ, որի հիման վրա համապատասխան գումարները գանձապետարանից փոխանցվում են վճարում իրականացնող կազմակերպություններին: Գործողությունը կատարվում է շղթայական՝ առանց ավելորդ քաշքշուկների և հապաղումների:

Բանկային կազմակերպությունները շահառուների հաշիվների վրա գումարները նստեցնում են անմիջապես, գործողությունը նույնպես կատարվում է ավտոմատ՝ հատուկ ծրագրային ապահովման միջոցով:

Գումարների վճարումների հետ հնարավոր հապաղումներ կարող են լինել միայն կանխիկ վճարումների ժամանակ, քանի որ Հայփոստի բաժանմունքների մոտ լինում է մեկ ցուցակ, և շահառուները, ովքեր նախընտրում են գումարները ստանալ տանը, սպասում են փոստատարին, ով կարողանում է ցուցակը փոստից դուրս բերել, միայն երբ փոստից ստացող բոլոր շահառուները ստանում են իրենց գումարները: Այդուհանդերձ, անգամ այս դեպքում կենսաթոշակներն ու նպաստները շահառուներին վճարվում են մինչև տվյալ ամսվա 10-ը՝ ավելի շուտ, քան նախատեսված է օրենքով:

«Վճարման գործընթացի կազմակերպումը ՍԱՊԾ կողմից» ենթախմբի ներքո առանձնացված ցուցանիշները (ՍԱՊԾ աշխատողների ընդհանուր թվաքանակը, որից Վճարման գործընթացների կազմակերպմանը մասնակցող ՍԱՊԾ աշխատակիցների թվաքանակը; ՍԱՊԾ աշխատակիցների աշխատանքի վարձատրությանը և դրան հավասարեցված այլ վճարումների չափը, որից վճարման գործընթացների կազմակերպմանը մասնակցող աշխատակիցների աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների չափը) նույնպես հնարավոր չի եղել ստանալ ՀՀ ՍԱՊԾ-ից, քանի որ նման կտրվածքով տեղեկատվությունն առկա չէ, կամ հնարավոր չէ տարանջատել:

«Վճարման ծառայությունների մատուցմանն առնչվող բողոք-դիմումների և բավարարված բողոք-դիմումների թիվը» ենթախմբի ցուցանիշները նույնպես հնարավոր չի եղել ստանալ, քանի որ ՀՀ ՍԱՊԾ մոտ չի տարվում ստացված գրությունների հաշվառում ըստ բովանդակության: Այդ իսկ պատճառով ՄԳ ցուցանիշների շրջանակում բողոք դիմումների մասով պահանջվող մանրամասները ըստ վճարման եղանակի և ըստ շահառուի բնակության վայրի հնարավոր չէ դուրս բերել:

Թեև ՄԳ ցուցանիշների շրջանակի հաջորդ ենթախումբը կարևոր է Ծրագրի արդյունավետության գնահատման և բարելավման տեսանկյունից, ՀՀ ՍԱՊԾ-ը ցուցանիշների այս խմբի համար ևս տվյալներ տրամադրել չի կարողացել: **«Վճարող կազմակերպությունների կողմից թույլ տված խախտումների թիվը»** ըստ վճարման եղանակի ցուցանիշների աղբյուր կարող են լինել ներքին ստուգումներն ու աուդիտը: ԱԽ անդամները կարևորում են այս ցուցանիշը և առաջարկում մեխանիզմներ մշակել ցուցանիշի հաշվառումն իրականացնելու համար:

Այսպիսով, այս ոլորտի համար ՀՀ ՍԱՊԾ-ից ՄԳ ցուցանիշների շրջանակում ոչ մի տվյալ չի ստացվել: Վճարման ծառայությունների արդյունավետությունը հնարավոր է եղել գնահատել ՀՀ ՍԱՊԾ հետ՝ վճարման ծառայություններ մատուցելու համար պայմանագիր ունեցող բանկերի և Հայփոստի մասնագետների հետ ֆոկուս խումբ քննարկումների և շահառուների շրջանում կազմակերպված ընտրանքային հետազոտության արդյունքների հիման վրա:

Հետևաբար, ՄԳ շրջանակի ցուցանիշների այս խումբը կարող է մնալ ցուցանիշների շարքում, սակայն թիրախների սահմանումն այլևս նպատակահարմար չէ: Այդուհանդերձ, Ծրագրի գնահատման ժամանակ այս հարցերը պետք է շարունակեն մնալ արդիական և դրանց մասին տեղեկատվությունը պետք է ստացվի ֆոկուս խումբ քննարկումների և/կամ շահառուների շրջանում հարցումների միջոցով, հնարավոր շեղումները արագ վերհանելու նպատակով: Իսկ բողոք-դիմումների մասով պետք է մշակվի գրությունների դասակարգման համակարգ:

Ոլորտ 5: Վճարման ծառայություններից շահառուների բավարարվածության աստիճանը

Այս ոլորտի ներքո, բացի շահառուների գոհունակության ցուցանիշներից, ներառված են նաև ցուցանիշներ, որոնց միջոցով տեղեկատվություն է ստացվում ինչպես ՀՀ ՍԱՊԾ աշխատողների տեսակետի, այնպես էլ վճարման ծառայություններ մատուցող կազմակերպությունների վերաբերմունքի մասին:

Ցուցանիշների մասին տեղեկատվությունը հնարավոր է ստանալ միայն քանակական (շահառուներից՝ ընտրանքային հետազոտության) և որակական (ֆոկուս խումբ քննարկումներ) հետազոտությունների միջոցով:

Այս ոլորտի ցուցանիշների համար տվյալները ստացվել են 2015թ.-ին 1000 կենսաթոշակառուի շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության և տարբեր

շահառուների, ՀՀ ՍԱՊԾ աշխատողների, վճարման ծառայություններ մատուցող բանկերի և Հայփոստի աշխատողների հետ ֆոկուս խումբ քննարկումների արդյունքում:

ԱԽ կողմից այս ոլորտի ցուցանիշները կարիք ունեն վերանայման, քանի որ բավական մանրացված են և բոլոր դեպքերում պահանջում են թիրախներ, իսկ ֆոկուս խումբ քննարկումների միջոցով ստացվող տեղեկատվության համար թիրախներ սահմանել հնարավոր չէ:

Անկանխիկ վճարման ծառայություններից շահառուների բավարարվածության աստիճանը ՄԳ ցուցանիշների շրջանակում դիտարկվում է ըստ գործառույթների, ըստ վճարում իրականացնող բանկերի, և ըստ բնակավայրի: Հետազոտության միջոցով առանձին բանկերից գոհունակության աստիճանը ստանալ հնարավոր չէ, քանի որ առանձին բանկերով ներկայացուցչական ընտրանք ունենալու համար շատ մեծ թվով հարցումներ պետք է իրականացվեն: Իսկ ըստ գործառույթների գոհունակությունը, ինչպես վերը նշվեց առանձին առանձին դիտարկել նպատակահարմար չէ:

Շահառուների շրջանում իրականացված հետազոտության ժամանակ գոհունակության աստիճանի մասին տվյալներ ստացվել են ըստ վճարման ծառայությունների տեսակի և ըստ բնակության վայրի: Քանի որ ցուցանիշը թիրախային է, իսկ շահառուների շրջանում իրականացված հետազոտության արդյունքներով անկանխիկ ծառայություններից օգտվողների գերակշիռ մասը՝ 50%-ը շատ իսկ 45%-ը՝ ավելի շատ գոհ է մատուցվող ծառայություններից, ապա 5 տոկոս դժգոհությունը հաղթահարելու համար որպես թիրախ սահմանվել է, որ յուրաքանչյուր հաջորդ տարի բավարարվածության աստիճանը կբարձրացվի 1.5%-ով:

Անկանխիկ վճարման ծառայությունների տրամադրման գնահատականը ՍԱՊԾ աշխատակիցների կողմից ցուցանիշը գնահատվել է ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հետ ֆոկուս խումբ քննարկման արդյունքերի հիման վրա, ուստի ըստ բնակավայրի չի դիտարկվել: Հետագայում կարելի է նման ֆոկուս խումբ քննարկումներ կազմակերպել տարբեր մարզերում՝ ըստ մարզերի պատկեր ձևավորելու համար: Ցուցանիշի համար թիրախ չի կարող սահմանվել:

Կանխիկ վճարման ծառայություններից շահառուների բավարվածության աստիճանը ցուցանիշի համար սահմնված թիրախները որոշվել են հետևյալ մոտեցման հիման վրա .

- Հետազոտությամբ ստացվել է երկու ցուցանիշ՝ - փոստի բաժանմունքից կանխիկ ստացման ծառայություներից ռեսպոնդենտների բավարավածության աստիճանը 76% և փոստատարի միջոցով կանխիկ ստացման ծառայությունից բավարարվածության աստիճանը՝ 99%: Բավարարվածության կշռված միջինը 2016-2017թթ. թիրախավորվել է ենթադրությամբ, որ նախորդ տարվա համեմատ ցուցանիշը կբարելավվի 5%-ով:

Կանխիկ վճարման ծառայությունների տրամադրման գնահատականը ՍԱՊԾ աշխատակիցների կողմից ցուցանիշը ևս գնահատվել է ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հետ ֆոկուս խումբ քննարկման արդյունքների հիման վրա: Ցուցանիշի համար թիրախների սահմանումն ու կանխատեսումը իրատեսական չէ:

Վճարման ծառայությունների գնումների պայմանագրի կնքման գործընթացից բավարարվածության աստիճանը , այդ թվում

- Պայմանագրեր կնքած կազմակերպությունների տեսանկյունից
- ՍԱՊԾ պաշտոնատար անձանց տեսանկյունից

Կրկին, թեև ցուցանիշը ԱԽ անդամների կողմից որոշվել է որպես թիրախային, ցուցանիշների հավաքագրման գործընթացը հուշեց, որ այն հնարավոր է գնահատել միայն ֆոկուս խումբ քննարկումների արդյունքում և հետևաբար թիրախներ սահմանվել չեն կարող: Ամեն տարի պայմանագրային գործընթացին մասնակից կողմերի հետ ֆոկուս խումբ քննարկումները կարող են դուրս բերել տարբեր հարցեր, որոնց ժամանակին արձագանքումը կնպաստի մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: Ցուցանիշը ՄԳ շրջանակում թվային արժեք չունի, սակայն գնահատվել է ֆոկուս խումբ քննարկման արդյունքներով:

Ծրագրի շրջանակներում տրամադրվող խորհրդատվությունից շահառուների բավարարվածության աստիճանը

- Ուլորտի աշխատողների կողմից տրամադրված խորհրդատվությունից
- Բանկի աշխատողների կողմից տրամադրված խորհրդատվությունից
- «Հայփոստի» աշխատողների կողմից տրամադրված խորհրդատվությունից

Այս ցուցանիշի առաջին ենթախմբի մասին տեղեկատվությունը ստացվել է շահառուների շրջանում իրականացված հետազոտության հիման վրա: Ստացված գնահատականների հիման վրա էլ կատարվել է ենթադրություն ցուցանիշի թիրախների մասով. նախանշելով, որ գոհունակության աստիճանը յուրաքանչյուր տարի նախորդի համեմատ կբարելավվի 5%-ով:

Բանկի աշխատողների և Հայփոստի աշխատողների կողմից տրամադրված խորհրդատվության մասին շահառուների կարծիքը ձևավորվել է տվյալ ծառայություններից օգտվելու մասին շահառուների ընդհանուր գոհունակությունից: Հարցի մասին կարծիք են տվել նաև ՀՀ ՍԱՊԾ աշխատողները՝ նրանց հետ կազմակերպված ֆոկուս խումբ քննարկումների ժամանակ: Այս երկու ենթացուցանիշների համար թիրախներ չեն սահմանվել:

Ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների մատչելիության գնահատականը շահառուների կողմից ըստ ծառայություն մատուցող կառույցների և ըստ բնակության վայրի, ցուցանիշի աղբյուրը կրկին շահառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտությունն է: Շահառուների գնահատականը ստացվել է ըստ ծառայության տեսակի՝ կանխիկ և անկանխիկ, օգտվողների կարծիքի: «Մատչելիությունը» ձևակերպումը ներառել է մի քանի հարց՝ ֆիզիկական մատչելիությունը, օգտվելու մատչելիությունը և հարմարավետություն: Ընտրանքային հետազոտությամբ ստացվել է թե անկանխիկ վճարման ծառայություններից օգտվող շահառուների ո՞ր մասն է վճարման ծառայության այս եղանակը համարում հեշտ և հարմար, նաև մատչելի: 2016-2017թթ. համար այս ցուցանիշի արժեքի գնահատումը կամ կանխատեսումները կատարվել է

«Աշխատանքային կենսաթոշակներ» Ծրագրի համանման ցուցանիշների գնահատման/կանխատեսման համար կիրառված մոտեցմամբ. եթե ցուցանիշի՝ հետազոտությամբ ստացված արժեքը կազմել է.

- մինչև 85%, ապա որպես թիրախ սահմանվել է ցուցանիշի բարելավումը տարեկան 5%-ով,
- 85% - 95%, ապա որպես թիրախ սահմանվել է ցուցանիշի բարելավումը տարեկան 3%-ով,
- 95% - 100%, ապա հաջորդ երկու տարիների թիրախները պահպանվել են նույն մակարդակի վրա։

Ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների մատչելիության գնահատականը Ոլորտի աշխատողների կողմից ըստ ծառայություն մատուցող կառույցների և ըստ բնակության վայրի - այս ցուցանիշի գնահատականը ստացվել է ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հետ ֆոկուս խումբ քննարկման անդյունքում։ Ծառայությունների մատչելիության հետ կապված խնդիրները դիտարկվել են ֆիզիկական մատչելիության և հարմարավետության տեսանկյունից։ Թիրախներ այս ցուցանիշների համար չի սահմանվել՝ ոչ բավարար տեղեկատվության առկայության պատճառով։ Ցուցանիշը թիրախավորել երևի թե անհնար է, այն պետք է զուտ ուշադրության կենտրոնում թողնել և ամեն տարի կազմակերպել ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հետ քննարկում՝ մատուցվող ծառայությունների մատչելիության մասին արագ արձագանք ստանալու համար։

Ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների որակի գնահատականը տրված ոլորտի աշխատողների կողմից -վճարման ծառայությունների որակի մասին նույնպես քննարկվել է ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հետ ֆոկուս խումբ քննարկման ժամանակ։ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հետ ընտրանքային հետազոտության շրջանակում վճարման ծառայությունների մասին հարցեր չեն եղել։ Հաջորդ անգամ այս բացթողումը պետք է լրացվի։

Վճարման ծառայությունների վերաբերյալ իրազեկման գործընթացից շահառուների բավարարվածության աստիճանը և Ծրագրի վերաբերյալ իրազեկման ռեսուրսների (նյութեր, հեռախոսահամարներ և այլն) հասանելիության/առկայության գնահատականը շահառուների կողմից կարևոր խումբ ցուցանիշներ են, որոնք թույլ են տալիս դատողություններ անել թե որքանով են ծրագիրը, կամ ծառայությունը մատուցող կառույցները «բարի ու հոգատար» իրենց շահառուի հանդեպ և որքանով են քայլերը բխում շահառուի շահերից։

Ցուցանիշների այս խումբը շեշտը դնում է ծառայությունը մատուցող կառույցների կատարած աշխատանքի վրա և չի դիտարկում ՀՀ ՍԱՊԾ կողմից իրազեկման աշխատանքներին մասնակցությունը։

Ցուցանիշները գնահատվել են շահառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքներով։ Հետազոտության միջոցով հնարավոր է եղել ամփոփ տեղեկատվություն ստանալ շահառուների տեղեկացվածության աղբյուրների, ստացված տեղեկատվության մատչելիության/պարզության և արդիականության

վերաբերյալ: Ընտրանքային հետազոտությամբ ստացվել է, թե շահառուների ո՞ր մասն է, որ ոչ բավարար իրազեկման պատճառով ունեցել է որևէ տեսակի խնդիր: Որպես թիրախ սահմանվել է «դժգոհ» շահառուների տեսակարար կշռի նվազեցումը: 2016-2017թթ. համար այս ցուցանիշի արժեքի գնահատման/կանխատեսման համար կիրառվել է հետևյալ մոտեցումը. եթե ցուցանիշի՝ հետազոտությամբ ստացված արժեքը կազմել է.

- մինչև 85%, ապա որպես թիրախ սահմանվել է ցուցանիշի բարելավումը տարեկան 5%-ով,
- 85% - 95%, ապա որպես թիրախ սահմանվել է ցուցանիշի բարելավումը տարեկան 3%-ով,
- 95% - 100%, ապա հաջորդ երկու տարիների թիրախները պահպանվել են նույն մակարդակի վրա:

Ցուցանիշների վերջին խումբը վերաբերում է ***ՍԱՊԾ և ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև համագործակցության գնահատականին,*** որը դիտարկվել է բոլոր երեք կողմերի ներկայացուցիչների հետ ֆոկուս խումբ քննարկումների ժամանակ և անդրադարձ է կատարել հետևյալ հարցերին.

- Տեղեկատվության փոխանակման վերաբերյալ
- Ֆինանսական հոսքերի կազմակերպման վերաբերյալ
- Ծագած հարցերի օպերատիվ կարգավորման վերաբերյալ

Ցուցանիշների համար կրկին թիրախներ չեն սահմնավել, քանի որ այս խումբ ցուցանիշները միշտ կարելի է գնահատել ֆոկուս խումբ քննարկումների արդյունքում:

Կիրառված մեթոդաբանությամբ «Վճարման ծառայություններ» ծրագրի ՄԳ արդյունքները ներկայացված են սույն հաշվետվության մաս 3-ում:

5. Առաջարկություններ մոնիտորինգի և գնահատման գործընթացի վերաբերյալ՝ քաղած դասերի հիման վրա

ԱԽ անդամների կողմից ցուցանիշների քննարկումների ընթացքում, ինչպես նաև ՄԳ ցուցանիշների շրջանակի մանրամասն վերլուծության ժամանակ առաջ են եկել մի շարք խնդիրներ, որոնց հիման վրա մշակվել են ստորև առաջարկությունները.

5.1. ՄԳ փաստաթղթերի մասին առաջարկություններ

<u>Ծրագրի ՄԳ տեղեկանքում</u> նպատակահարմար է հստակ տարանջատել հետևյալ ենթաբաժինները.

1. ծրագրի ստեղծման տարեթիվը և վերջնական նպատակը,
2. ծրագրի զարգացման փուլերը և փոփոխությունները,

3. ծրագրի իրավական հիմքերը,
4. ծրագրի առանձնահատկությունները, ենթածրագրերը, շահառուների, իրավունակության չափանիշները։
5. ծրագրի համար հատկացվող բյուջեն՝ վերջին երեք տարվա կտրվածքով,
6. ծրագրի շահառուների շրջանակը և թվաքանակը՝ վերջին երեք տարվա կտրվածքով։
7. նախորդ ՄԳ ժամանակահատվածը և տրված հիմնական առաջարկությունները։

ԱԽ անդամները նպատակահարմար են գտնում նաև վերանայել **ծրագրի ՄԳ անձնագրի կառուցվածքն** ըստ հետևյալ տրամաբանության. ՄԳ անձնագիրը պետք է ՄԳ հաշվետվության հիմքը լինի, այսինքն նշվեն ինչպես քաղաքականության թիրախները և ծրագրի ազդեցության թիրախները, այնպես էլ ծրագրի վարչարարության հիմնական ցուցանիշները; ՄԳ անձնագրի առաջարկվող կառուցվածքն է.

1. Ծրագրի անվանումը,
2. Ծրագրի տևողությունը
3. Ծրագրի նպատակները, այդ թվում՝
   1.1 Ծրագրի հեռահար նպատակները
   1.2 Ծրագրի ընթացիկ նպատակները
4. Ոլորտում վարվող քաղաքականության նպատակադրումները/թիրախները
   2.1 ըստ ռազմավարական փաստաթղթերի
   2.2 ըստ այլ իրավական ակտերի
5. Խնդիրներ, որոնց լուծմանը միտված է ծրագրիրը
6. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները
   4.1 որակական
   4.2 քանակական
7. Ծրագրի արդյունքի վրա հիմնված մոնիտորինգի և գնահատման ցուցանիշների ոլորտները
8. Ծրագրի շրջանակում իրականացվող գործողությունները
9. Ծրագրի իրականացման աշխարհագրությունը՝ մարզերը
10. Ծրագրի շահառուների շրջանակը
11. Ծրագիրն իրականացնող անձնակազմը, պատասխանատուները
12. Ծրագրին հատկացված միջոցների չափը
13. Ծրագրի ՄԳ ժամանակահատվածը՝ ՄԳ հաշվետվության տեսակը և ներկայացման ժամկետը
14. Ծրագրի հաշվետվությանը կից ստանդարտ փաստաթղթերի անունները
15. Ծրագրի ՄԳ գործընթացի մասնակիցները, ԱԽ անդամների կազմը
16. Այլ նշումներ

ՄԳ ցուցանիշների շրջանակը պետք է պարունակի ոլորտում վարվող քաղաքականության գնահատման ցուցանիշներ, ծրագրին հատկացված ռեսուրսների և նպատակադրումներին հասնելու վարչարարության մասին ցուցանիշներ, օրինակ ծրագիրն իրականացնող անձնակազմի ծանրաբեռնվածության գնահատականներ,

ծրագիրն իրականացնելու համար անձնակազմի գիտելիքի կամ վերապատրաստման կարիքի գնահատականը, ծրագրի ծածկույթի և ծրագրով նախատեսված ծառայության կարիքն ունեցողների ներգրավվածության գնահատականը:

ՄԳ հաշվետվությունը անպայման պետք է անդրադարձ կատարի նախորդ ՄԳ գործընթացի արդյունքերի և առաջարկությունների մասով կատարված աշխատանքին:

5.2. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ շրջանակում ներառվելիք ցուցանիշների և նրանց վերլուծության վերաբերյալ առաջարկություններ

ԱԽ կողմից ձևավորված դիրքորոշումը ՄԳ ցուցանիշների հավաքագրման և կանխատեսումների վերաբերյալ

ՄԳ ցուցանիկշների շրջանակը ներառում է փաստացի տվյալներ երեք տարվա համար և կանխատեսվող կամ թիրախային տվյալներ հեռնակարային ժամանակահատվածի երեք տարիքների համար: Սակայն ժողովրդագրական միտումների մասին խոսելիս և հետևություններ անելիս անհրաժեշտ է վերլուծել տվյալների ավելի երկար դինամիկ շարք, քանի որ բնակչության թվաքանակի և սեռատարիքային կառուցվածքի վրա առանձին գործոնների ազդեցությունն ակնհայտ է դառնում ոչ թե անմիջապես, այլ երկարաժամկետ հեռանկարում: Ոստի ժողովրդագրությանն առնչվող ցուցանիշները վերլուծելիս վեր է հանվել վիճակագրություն 1990թ. սկսած: Առաջարկվում է պահպանել այդ շարքը:

Սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր ծրագրերի, այդ թվում նաև կենսաթոշակային համակարգի շահառուների թվաքանակի վերաբերյալ կանխատեսումները նպատակահարմար է կատարել ելնելով բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի մանրամասն կանխատեսումների հիման վրա: Ուստի սոցիալական պաշտպանության ոլորտի ռազմավարական քաղաքականության և առանձին ծրագրերի մշակման ու պլանավորման համար ժողովրդագրական ցուցանիշների կարևորությունից ելնելով, նպատակահարմար է մշակել կամ ձեռք բերել հատուկ ժողովրդագրական կանխատեսումների նպատակով կիրառվող մոդելներ:

Միջազգայնորեն նույնպես կարևորվում է ժողովրդագրության վերաբերյալ որակյալ վիճակագրական տվյալների և կանխատեսումների դերը հանրային ծառայությունների, մասնավորապես սոցիալական պաշտպանության ոլորտի քաղաքականության մշակման և պլանավորման նպատակով: Սակայն պետք է հիշել, որ ժողովրդագրական կանխատեսումները ունեն սահմանափակումներ. կանխատեսումները կատարվում են որոշակի ենթադրությունների (օրինակ, ծնելիության, մահացության, միգրացիայի վերաբերյալ) հիման վրա և հիմնվում են ոչ թե իրականացվող քաղաքականության, այլ բացահայտված որոշակի միտումների վրա: Մինչդեռ սոցիալական և մակրոտնտեսական մի շարք գործոններ կարող են ազդել ժողովրդագրական միտումների վրա: Ուստի

խորհուրդ է տրվում կատարել մի քանի տարբերակներով կանխատեսումներ։ Որպես կանոն առաջարկվում է կատարել վատատեսական, միջին և լավատեսական ենթադրությունների վրա հիմնված ժողովրդագրական կանխատեսումներ։

Կենսաթոշակային համակարգի շահառուների թվաքանակի կարճաժամկետ կանխատեսումները նպատակահարմար է կատարել ելնելով ժողովրդագրական կանխատեսումների միջին տարբերակից, միաժամանակ հաշվի առնել մակրոտնտեսական և աշխատանքի շուկայում ընթացող գործընթացները, ինչպես նաև կենսաթոշակային քաղաքականության ազդեցությունը այս կամ այն տեսակի կենսաթոշակառուների թվաքանակի վրա։

ՄԳ ցուցանիշների կարճաժամկետ կանխատեսումները ամեն անգամ պետք է վերանայվեն և ճշգրտվեն, երբ կանխատեսվող երեք տարիներից առաջինի համար հասանելի են դառնում փաստացի տվյալները։ Այսպես, 2015թ. համար փաստացի տեղեկատվության մուտքագրման հետ զուգահեռաբար վերանայվում են նաև կանխատեսումները 2016-2017թթ. համար և անհրաժեշտության դեպքում կատարվում են ճշգրտումներ։

Եկամտային հարկ վճարողների թվաքանակն անմիջականորեն պայմանավորված է երկրի մակրոտնտեսական և աշխատանքի շուկայում տիրող իրավիճակից։ Հետևաբար եկամտային հարկ վճարողների թվաքանակի վերաբերյալ կանխատեսումներ կատարելու նպատակով անհրաժեշտ է մշակել պարզ մոդել, որը հաշվի կառնի ցուցանիշի վրա ազդող գործոնների ազդեցությունը, աշխատանքի շուկայում վարվող քաղաքականությամբ պայմանավորված տատանումները և թույլ կտա կատարել առավել արժանահավատ կանխատեսումներ ինչպես եկամտային հարկ վճարողների թվաքանակի, այնպես էլ կենսաթոշակային համակարգի ֆինանսական մուտքերի վերաբերյալ։ Մոդելավորման աշխատանքների համար հարկ կլինի ապահովել եկամտային հարկ վճարողների թվաքանակի վերաբերյալ անհրաժեշտ ձևաչափով տեղեկատվության ստացումը, ինչը թույլ կտա կատարել առավել համակողմանի վերլուծություն և իրատեսական կանխատեսումներ ինչպես հարկ վճարողների, այնպես էլ հարկային մուտքերի վերաբերյալ։ Կարևորվում է նշված տեղեկատվությունը տրամադրող կառույցի/կառույցների հետ գործընկերային հարաբերությունների կառուցումը և անհրաժեշտ պարբերականությամբ և ձևաչափով տեղեկատվության ստացումը։

Բողոք դիմումների դասակարգում. վարչարարության արդյունավետության գնահատման համար հիմք հանդիսացող կարևորագույն ցուցանիշները՝ շահառուներից ստացված բողոք դիմումները կապված կենսաթոշակի նշանակման, վերահաշվարկման կամ կենսաթոշակի իրավունքի դադարեցման/վերականգնման հետ ՀՀ ՍԱՊԾ կողմից չեն դասակարգվում ըստ կենսաթոշակի տեսակների և հիմնականում նման հավաքական հաշվառում չի տարվում։ Մինչդեռ այս տեղեկատվության դասակարգման անհրաժեշտությունն կարևոր է ծրագրի վարչարարության արդյունավետության գնահատման համար։

Կարևոր է նաև ծրագրի վարչարարության ոլորտում ցուցանիշ ավելացնել անձնակազմի ծանրաբեռնվածության գնահատման համար՝ հնարավորություն ունենալով դիտարկել տարածքային ստորաբաժանումների ծանրաբեռնվածությունը, ռեսուրսների առկայությունը:

Ընթացիկ մշտադիտարկման արդյունավետության բարելավման համար կարևոր է տեղեկատվություն ունենալ կենսաթոշակների նշանակման, վերահաշվարկման, իրավունքի կամ վճարման դադարեցման հետ կապված բողոք դիմումների մասին, ըստ կենսաթոշակի տեսակների դրանց հաճախականության և ՀՀ ՍԱՊԾ կողմից տրված պատասխանների մասին: Բացի այդ ընթացիկ մշտադիտարկման համար կարևոր վիճակագրություն է ստուգումների/աուդիտի արդյունքում վեր հանված վարչական խախտումների, օրինակ սխալ հիմքով նշանակված, դադարեցված և վերականգնված կենսաթոշակների ըստ տեսակի և ՀՀ ՍԱՊԾ ստորաբաժանումների մասին տեղեկատվությունը: Այս տվյալների մասին մի քանի տարի վիճակագրություն ունենալու դեպքում կարելի է իրականացնել ընթացիկ գնահատում՝ համապատասխան առաջարկություններ ձևավորելու համար: ՄԳ ցուցանիշների շարքից նպատակահարմար է հանել նշված գործառույթների տևողության մասին ցուցանիշները, քանի որ դրանք մշտադիտարկման տեսակետից արժեք չեն ներկայացնում, ամեն գործառույթ կատարվում է տեղեկատվական համակարգի միջոցով, անգամ ավելի արագ քան պահանջվում է օրենքով:

Հետգանձված գումարների կանխատեսման համար անհրաժեշտ է ունենալ արժանահավատ տեղեկատվություն, թե ինչ դեպքերի հաշվին են ձևավորվում հետգանձվող գումարները, որ տեսակի կենսաթոշակներից, ինչպիսին է նման դեպքերում միջին կենսաթոշակի չափը և ինչ տևողությամբ սխալ վճարված գումարներ են հետգանձվում:

Այս ոլորտի մի շարք ցուցանիշների՝ մասնավորապես սխալ հիմքով նշանակված/վերահաշվարկված կենսաթոշակների թվի ու տեսակի մասին որոշակի տարիների համար վիճակագրություն ունենալու պարագայում հնարավոր կլինի տալ նաև այս ցուցանիշի կանխատեսումը:

Աշխատող կենսաթոշակառուների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները տեղեկատվական են և չեն ազդում Ծրագրի արդյունավետության վրա: Ցուցանիշը հետաքրքիր է դիտարկել միայն աշխատող կենսաթոշակառուներին երկու խմբի տրոհելու դեպքում՝ մինչև 70 տարեկաններ և 70 տարեկանից մեծ կենսաթոշակառուներ: Տարեց կենսաթոշակառուների աշխատելու հանգամանքը հետաքրքիր է դիտարկել մի քանի տարիների կտրվածքով՝ հետագայում կենսաթոշակային քաղաքականության համար որոշումներ կայացնելու տեսանկյունից:

Կենսաթոշակառուների եկամտի աղբյուրների մասին ցուցանիշները դիտարկել ոչ թե բացարձակ թվով այլ տոկոսային արտահայտությամբ: Ընդհանուր առմամբ, եթե չկա դինամիկ շարք, բացարձակ թվերով տեղեկատվությունը վերլուծության ժամանակ այնքան

էլ արժեքավոր չէ: Հարաբերական ցուցանիշներն այս դեպքում շատ ավելի օգտակար են որևէ պատկեր տեսնելու համար:

Ոլորտ 7: ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ տեղեկատվական բազաներից ՄԳ համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար և սույն հաշվետվությամբ առաջարկվող մեթոդաբանությունը կիրառելու համար անհրաժեշտ է կազմակերպել համապատասխան մասնագետների վերապատրաստում:

Ոլորտ 8: Առկա ռեսուրսներից ՀՀ ՍԱՊԾ աշխատողների գոհունակության աստիճանը գնահատող ցուցանիշները նպատակահարմար է տարանջատել շահառուների գոհունակության ցուցանիշներից և վարել այդ ցուցանիշների մոնիտորինգը Ոլորտ 6-ի ցուցանիշների հետ:

Ծրագրի ՄԳ ցուցանիշների խումբը, որը հնարավոր է ստանալ միայն հետազոտությունների միջոցով կարելի է հավաքագրել որոշակի պարբերականությամբ՝ օրինակ 3 տարին մեկ՝ վարած քաղաքականության ազդեցությունը գնահատելու համար: Ընթացիկ պատկեր ունենալու համար կարելի է կազմակերպել շահառուների հետ ֆոկուս խումբ քննարկումներ:

5.3. «Վճարման ծառայություններ» ծրագրի ՄԳ շրջանակում ներառվելիք ցուցանիշների և նրանց վերլուծության վերաբերյալ առաջարկություններ

«Վճարման ծառայություններ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շարքը ԱԽ կողմից վերանայման կարիք ունի, քանի որ ցուցանիշների հավաքագրման փուլում պարզվել է, որ ցուցանիշների մեծ մասի համար տեղեկատվության հիմնական աղբյուր կարող են լինել ընտրանքային հետազոտություններն ու ֆոկուս խումբ քննարկումները: Ցուցանիշները գնահատվել են որպես թիրախային, սակայն ֆոկուս խումբ քննարկումներով ստացված տեղեկատվությունը հնարավոր չէ վերածել բացարձակ թվերի՝ գոհունակության աստիճանը գնահատելու և թիրախներ մշակելու համար:

Հատկապես վերանայման կարիք ունի 4-րդ ոլորտը՝ «վճարման ծառայությունների արդյունավետությունը», քանի որ այստեղ ցուցանիշները բավական մանրացված են և բոլոր դեպքերում պահանջում են թիրախներ, իսկ դրանք ստացվում են ֆոկուս խումբ քննարկումների միջոցով, ուստի ստացվող տեղեկատվության համար թիրախներ սահմանել հնարավոր չէ:

Ֆոկուս խումբ քննարկումներ նպատակահարմար է կազմակերպել նաև մարզերում՝ համեմատական պատկեր ունենալու համար, քանի որ որոշ ցուցանիշների համար կարիք կա գնահատական տալու ըստ բնակավայրերի:

«Վճարող կազմակերպությունների կողմից թույլ տված խախտումների թիվը» ըստ վճարման եղանակի ցուցանիշների աղբյուր կարող են լինել ներքին ստուգումներն ու

աուդիտը։ ԱԽ անդամները կարևորում են այս ցուցանիշը և առաջարկում մեխանիզմներ մշակել ցուցանիշի հաշվառումն իրականացնելու համար։

Ծրագրի ժողովրդագրական ցուցանիշների մասով կանխատեսումների համար արդիական են «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի համար արված առաջարկությունները։ Ի լրումն այս ծրագրի համար առավել ճշգրիտ կանխատեսումներ կատարելու համար նպատակահարմար է հետագայում ստանալ տեղեկատվություն այն շահառուների թվաքանակի վերաբերյալ, ովքեր ստանում են մեկից ավելի վճարման ծառայություն, ըստ վճարման ծառայությունների տեսակների, կանխատեսումների մեթոդաբանությունն առավել ճշգրիտ դարձնելու համար։

Հավելվածներ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Աշխատանքային խմբի կազմը

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման փաստաթղթեր

ՀԱՎԵԼՎԱԾ Գ ՀՀ ԱՍՀՆ «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման փաստաթղթեր

Առդիր փաստաթղթեր

Առդիր **1:** ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակ**:**

Առդիր **2**: ՀՀ ԱՍՀՆ «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակ**:**

Առդիր 1-ը և 2-ը ներկայացված են առանձին Excel ձևաչափով ֆայլերով:

Առդիր 3: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 1՝ Կենսաթոշակառուների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները

Առդիր 4: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 2՝ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները

Առդիր 5: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 3՝ Հանրային կարծիքի և իրազեկվածության աստիճանի գնահատման հետազոտության արդյունքները

Առդիր 6: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության մեթոդաբանությունը

Առդիր 7: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ տնային տնտեսությունների հարցաշար,

Առդիր 8: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հարցաշար,

Առդիր 9: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ Ֆոկուս խումբ քննարկումների հարցաշար

Առդիր 10: «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ»

ծրագրի շրջանակում իրականացված ֆոկուս խումբ քննարկումների հաշվետվություններ՝

- ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հետ;
- Հայփոստի ներկայացուցիչների հետ
- ՀՀ ՍԱՊԾ հետ պայմանագիր ունեցող բանկերի ներկայացուցիչների հետ

Առդիր 11: USAID/PRIP կարճաժամկետ խորհրդատու դոկտոր Ջոզեֆ Անդերսոնի հաշվետվությունը

Արդիր 12: Մշտադիտարկման և գնահատման վերաբերյալ ՀՀ ԱՍՀՆ նախարարին և ՀՀ ԱՍՀՆ ՄԳ աշխատանքային խմբին ներկայացված պրեզենտացիաներ